



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Ք Ի Ր

№ 9 1898

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1898 № 9

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես

1 ԱԴԵԼԵԱՆ, Ա.	1187	Նոր հոգսի լետևից... (վերջ):
2 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼ.	1205	Գրչի հանաքներ (Բանաստ.):
3 ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀ.	1209	Գեղահամայնների ընթերցանութիւնը:
4 ԻՍԱՀԱԿԵԱՆ, ԱԻ.	1226	Պանդխտի երգ (Բանաստ.):
5 ԱՂԲԱԼԵԱՆ, ՆԻԷ.	1228	Վ. Գ. Բէլիճսկի (վերջ):
6 ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ	1239	Կոչ (Բանաստեղծ.):
7 ԿՈՆՍԿԵԱՆ, ԿԱՐ.	1241	Հիւսիսարիւղ և Ա. Շահաղիգեան (վերջ):
8 Ա. Ա.	1265	Эзовъ-ի „Сношенія Петра Вели- каго съ Армянскимъ народомъ“ (եղեան՝ Պետրոս Մեծի չարարի- ւոթիւնները հալ ազգի հետ):
9 ԶԷԼԻՆՍԿԻ, ՍՏԵՓԱՆ.	1275	Եղուքեանի «Հալ-ուստերէն բառա- րանը» (վերջ):
10 ԱՐԿՈՒԼԻԿ.	1283	Քաղաքացիին ինքնավարութեան դոր- ծերը:
11 ԽՄԲ.	1292	Ջանազան լուրեր:

Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՏԻ

Типография М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.

1898

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1898

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1898 № 9

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԻԱՆՑԻ

Типография М. Д. Ротинианца Гол. пр., д. № 41.

1898

საქართველოს

საზოგადოებრივი-საგანმანათლებლო

საზოგადოებრივი-საგანმანათლებლო

თბილისი

საზოგადოებრივი-საგანმანათლებლო

თბილისი

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го Октября 1898 г.

საზოგადოებრივი-საგანმანათლებლო

საზოგადოებრივი-საგანმანათლებლო

საზოგადოებრივი-საგანმანათლებლო

საზოგადოებრივი-საგანმანათლებლო

ՆՈՐ ՀՈԳՍԻ ՅԵՏԵՒԻՑ...

(ՊԱՏԿԵՐ)

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹)

V

Յարումեանը սովորական ընթացքով շարունակում էր իւր աշխատանքը: Երբորդ տարին նա փոքր ինչ ջղոտ էր դարձել, աշակերտների հետ այլ ևս համբերութեամբ և հանդարտ չէր վարուում, այլ շուտ էր զրգոււում և բորբոքւում: Երկու տարւոյ ընթացքում դպրոցական վարակած մթնոլորդը և ողևորւած գործունէութեան անշաղկաւ թիւնները այդպիսի ազդեցութիւն էին արել Յարումեանի վրայ: Այժմ նա դպրոցից դուրս ջերմ մասնակցութիւն ուներ գիւղի հասարակական գործերի մէջ: Նա աշխատում էր այդ գործերին ցանկալի ընթացք տալ, ազատելով հասարակական շահը չար և շահամոլ մարդկանց ստոր ձգտումներից: Հասարակական գործերի առիթով Յարումեանը մի քանի ընդհարումներ էր ունեցել զփուշ քանդող մարդկանց հետ և արդէն մի քանի թշնամիներ էր վաստակել...

—Ի՞նչու է խառնուում մեր գործերի մէջ, ասում էր բարի պտուղների շահամոլ խումբը, որի համար ազնիւ, շիտակ մարդը նոյնն է, ինչ հրեշտակը դէի համար. վարժապետ է, թող վարժապետութիւն անի միայն: Հայրը կայ՝ հերիք է:

¹) Տե՛ս Մարտ 1898 թ. № 7—8:

Յարումեանը ուշադրութիւն չէր դարձնում զրանց աղաղակներին և շարունակում էր հետամուտ լինել զիւղի զործերին: Ահա մի նոր հարց էր հրապարակ ընկել. գիւղի քահանան վախճանել էր. նրա տեղ հարկաւոր էր մի տիրացու ընտրել և ուղարկել ձեռնադրութեան: Յարումեանը զբաղւած էր այլ հարցով և քահանայի խնդիրը նա կապում էր մի այլ գործի հետ. նա մտադիր էր եկող տարւանից ուսումնարանում բաց անել և երրորդ բաժանմունք, այդ զէպքում նա ուսուցչի կարիք էր ունենալու, մանաւանդ որ առանց զրան էլ աշակերտների թիւը զգալի կերպով աճում էր, կարիք կար նրանց առանձին դասարաններում զետեղել. և կարող էր պատահել, որ աղջկերանց ընդունելութիւնը կը չաջողէր: Գիւղի քահանան, եթէ նա միայն իրաւիքներ լինի, կը կատարէր երկրորդ ուսուցչի դերը, ստանձնելով կրօնի և ուրիշ առարկաների դասեր: Բացի այդ գործնական նպատակից Յարումեանը պահանջում էր, որ քահանան, ուր որ էլ նա լինի, բարոյապէս և մտաւորապէս իր կոչման բարձրութեան վրայ կանգնած լինի: Գիւղը աղատուել էր վերջապէս իր խեղճ, ծերունի և աւետարանը մեծ շարժարանքով կարգացող քահանայից: Նրա տեղը ո՞վ պիտի բռնէր—ահա այն հարցը, որ անհանգստացնում էր Յարումեանին: Խիղիւսից զրա մասին իսկի չէին մտածում: Մեռած քահանայի որդին ինքն էր պատրաստուում ձեռնադրւելու գնալ. ամեն ոք ստորագրում էր նրա խնդրագրին: Այս պարոնը բացի իր անսահման տգիտութիւնից, անկիրթ լինելուց, ամբողջ գիւղում յայտնի էր իր բնաւորութեան շատ թերութիւններով: Գիւղացիք այդ անարժան մարդու անմաքուր ձեռքն էին յանձնում քահանայի սուրբ և վեհ կոչումը: Տիրացու Թաթոսը, այսպէս էր քահանայացուի անունը, թուղթ էր պատեցնում գիւղի մէջ, ստորագրութիւններ ժողովում և մտադիր էր շուտով թեմակոն առաջնորդին այցելելու... Այնուհետ գիւղ կը վերադառնար էլի նոյն տգէտ և անբարոյական համբակը, բայց միայն այն փոփոխութեամբ, որ չուխայի տեղ հաղած կը լինի փառաջաց... Փիլոնը ուսերին բարձրանալով եկեղեցու սեղանը, նա կը սրբապղծէր բոլոր սրբութիւնները, ցեխի մէջ կը խրէր եկեղեցու վեհ զաղափարը և իր տգիտութեան շնորհիւ աւելի խոր կը թաղէր կրօնի ճշմարիտ էութիւնը:

Անհրաժեշտ էր դրա առաջն առնել: Եւ ահա մի օր Յարութեանը գլուղի հրապարակում յայտնեց տիրացու Թաթոսին, որ սա դադարէ ստորագրութիւններ ժողովելը, հակառակ դէպքում նա այդ ապօրինութեան մասին զանգատով կը դիմէ այնտեղ, ուր հարկն է:

— Դու իրաւունք չունես անկիւններում ստորագրութիւններ ժողովելու, ասաց Մարութեանը, որ երիտասարդ ուսուցչի հետ միասին պակաս հոգացողութիւն չէր ցոյց տալիս այդ գործում:— Քահանայ է մեզ հարկաւոր, դրա համար հասարակական ժողով պիտի կայացնել և ընդհանուրի ներկայութեամբ քահանայացու ընտրել. այս գործը խաղալիկ չէ. հասարակութեամբ պիտի խորհրդակցենք դրա մասին:

— Ես պահանջում եմ, որ դու թողնես մի կողմ այդ թերթը, ասաց Յարութեանը, և սպասես հասարակական ժողովի վճռին: Եթէ չես ուզում պատիժ ստանալ, թող խաղդ և լսիր ինձ:

— Քեզ ի՞նչ, պատասխանեց տիրացուն անպատկառ եղանակով. վարժապետ ես, գնա վարժապետութեանդ յետեւից... Երեխաները արտերը ընկած ամեն ինչ գողանում են, էլ վարունկ չեն պահել... Դու գնա նրանց սաստիւր...

— Ես քեզ իմ ասածը այլ ևս չեմ ուզում կրկնել. կարծեմ լսեցիր, ասաց Յարութեանը չուզած:

Տիրացուն խոյս տուեց անախորժ դէպքից և քթի տակ ինչ որ մթմթալով քաշեց մի կողմ: Իսկ Յարութեանը նոյն րոպէին դիմեց տանուտէրին և խնդրեց, որ նա շուտափոյթ ժողով դումարէ քահանայական հարցի մասին խորհրդակցելու: Ճանուտէրը խոստացաւ կատարել նրա խնդիրը:

Երկու օրից յետոյ կայացաւ ժողովը: Վարժապետի առաջարկութեամբ այդտեղից հեռացաւ տիրացուն, իբր քահանայացուներից մէկը: Այնուհետ Յարութեանը բացառեց թէ որն է քահանայի կոչույր և թէ ի՞նչու ուսեալ քահանայացու պիտի ընտրել: Մի առ մի թւեց տիրացու Թաթոսի բարոյական արատները, շեշտեց նրա սգիտութեան, անկիրթ լինելու վրայ, պարզեց թէ ինչու նա քահանայութեան համար անարժան մարդ է և առաջարկեց մտածել այլ քահանայացուի մասին:

— Վարժապետ, խօսեց մի ծերունի, ամենքս էլ գիտենք, որ

տիրացու Թաթոսը ջահէլ ժամանակ վատ կեանք է անցկացրել և հիմայ շատ պակասութիւններ ունի, բայց դէ որ քահանայ զառնայ, էղպէս չի մնալ, կը փոխուի. — Քահանայական կարգը չի թողնիլ...

— Ինչից պիտի փոխուի, ծաղրեց Մարութեանը, փարաջայի զօրութիւնից... Փարաջայի կտորից աշխարհականներն էլ են հաղնում, պա ի՞նչու իսկի չեն փոխուում... Էղպէս բան չի լինիլ, այ պէտք, գայլը որ գառան մորթի է հագնում, նա էլի մնում է զայլ...

Նոյնը աւելի երկար բացադրեց Յարութեանը և քահանայի պաշտօնը կապեց մի շարք կարեւոր խնդիրների հետ, որոնց ծառայել տգէտ տիրացուն անկարող էր:

— Լաւ, պա ինչպէս անենք, վարժապետ, հարցրեց տանուտէրը, ինչ խորհուրդ ունես էն ասա. մեզ քահանայ է հարկաւոր, սրան չընտրենք, պա ում յետեից գնանք:

— Ընտրեցէք զոնէ բարոյապէս արժանաւոր մարդու, թէեւ ես գտնում եմ, որ լոկ բարոյական արժանաւորութիւններով օժտւած քահանան էլ մի բան չի ներկայացնում գիւղի համար:

— Պա ում ընտրենք, այ մարդիկ, զիմեց տանուտէրը ժողովաւաններին. տիրացու Թաթոսից բացի, էլ ով միտք ունի տէրտէր դառնալու:

— Դէ որ ոչ ոք ձայն չի տալիս, ուրեմն էլի մնում է մեր քահանայի որդին, ասաց տիրացու Թաթոսի ազգականներից մէկը. մեր հին քահանայի օջախը պիտի քոռացնենք թէ ի՞նչ է ուրիշ տեղից ենք քահանայ բերում: Ի՞նչու. տիրացու Թաթոսը պակաս ժամ աւուր է, թէ վատ է հասկանում ժամի կարգն ու կանոնը:

— Ուղիղ է ասում, գոչեցին Թաթոսի կողմնակիցները միաբերան:

— Եթէ ձեր մէջ արժանաւոր քահանայացու չկայ, բերել տէք ուրիշ տեղից, ասաց Յարութեանը: Ես ձեզ բացատրեցի լուսաւոր քահանայի նշանակութիւնը և այժմ առաջարկում եմ ձեզ հետեւեալը. ես ունեմ մի ընկեր տղայ, որը աւարտել է Ներսիսեան դպրոցը: Նա վաղուց մտադիր էր մի որ և է գիւղում քահանայ լինել, բայց գիւղ չէր գտնում իւր ուղած պայմաններով: Այդ մարդը ուրախութեամբ մեր գիւղի քահանան կը դառնայ, եթէ զուր, ի հարկէ, համաձայն լինէք: Ընդունեցէք, ահա ձեզ արժանաւոր քահանայացու:

—Այ, մեր մարդը թողած գնանք ուրիշին բերենք մոցներն էս գիւղը, լաւեց ժողովականների խորքից մի ձայն. օգուտներս հրն է:

—Ձեր մարդը անարժան է, տղէտ է, անբարոյական է, զոչեց Մարութեանը բարկացած:

—Տղէտ է ինչ է, մեզ արժանի է, պատասխանեց տիրացու Քաթոսի խնամին. ուզում ես զոռով քո մարդը մեր վզին կապել և մեր քահանայի օջախը քռացնել:

Այսպիսի պատճառաբանութիւններով ուսուցչի առաջարկութեան դէմ հակառակ էին միայն տղէտ տիրացուի ազգականներն ու բարեկամները մեծամասնութիւնը միջին դիրք էր ընդունել և առայժմ լսում էր խօսողներին:

—Վարժապետ, դիմեց սուգեա (գատաւոր) Մկրտիչը, էս ասնք քո ասած տղին բերել տւինք. նրան ի՞նչքան ծախս պիտի տանք:

—Նրան հարկաւոր է տուն, մի կտոր հող և ուժիկ, պատասխանեց Գարումեանը: Ռոճիկը ամենապակասը հարիւր ուսուցչի պիտի լինի, որովհետեւ նա գիւղում բացի կատարած օրէնքների վարձատրութիւնից ուրիշ եկամուտ չի ունենալ: Այդ գումարով ապրելը նրա համար դժւար կը լինի, բայց այդ ոչինչ. ուսումնարանից էլ իբր կրօնուսոյց ուժիկ կ'ունենայ և այդպէս կը կառավարւի:

—Եդ անկարելի բան է, մեր ոյժը չի կտրիլ, ասաց միջին դիրք բռնած մեծամասնութիւնը միաձայն:

—Տունդ շէն կենայ, վարժապետ, ասաց տանուտէրը, մենք ոչ էդքան ուժիկ կարող ենք տալ, ոչ հող, ոչ էլ տուն: Ասածդ լաւ բան է, վարժապետ, բայց մեր ոյժից վեր է. աղքատ ապրուստի տէր մարդիկ ենք. մենք ի՞նչ հող ունինք, որ հալա ուրիշին էլ տանք: Իսկ քո ասած քահանան, իմ խելքը էնպէս է կտրում, տաքեկան պակասը երկու հարիւր յիսուն մանէթ եկամուտ պիտի ունենայ, որ կարողանայ ապրել. մարդը ամեն ինչ պիտի փողով առնի, որովհետեւ սեփական ոչինչ չի ունենալու, մի տնից և մի կտոր հողից բացի: Պա էդքան փող մենք զրոյեղից տանք: Ես տանուտէր եմ, էսքան տարի է ասում եմ՝ այ հասարակութիւն, ինձ մի թեթեւ ուժիկ տւեցէք, ախր ես էլ չարչարւում եմ, չեն տալիս, ասում են ծանրութիւն է. հիմա դու ասում ես տէրտէրին էդքան ուժիկ տան: Անկարելի է, գլուխ գալու բան չէ դա: Մեր տիրացուն, փառք

Ասածոյ, հող էլ ունի, տուն էլ, կարգին ապրուստ էլ. տարեկան որքան ռոճիկ տանք, նա համաձայնեցելու է, օրէնքի համար նոյնպէս էլ ինչ օգուտ ունենք գնանք մի գլխացաւանք բերենք զցենք էս գիւղը: Մեր քահանան մեր վզին ծանրութիւն չպիտի լինի, և տիրացու Թաթոսը ծանրութիւն չի լինիլ, որովհետեւ մեր մարդն է, ամեն ինչ ունի. տուն, հող, տաւար... ամեն ինչ:

Լսեցին հաւանութեան բազմութիւն ձայներ:

— Մեր քահանան մեր մարդը պիտի լինի, ասաց մի ծերունի, օտարին չենք կարող պահել. ով գիտէ վերջը ինչ պահանջներ կ'անի, խռովութիւն կ'ընկնի էս գիւղը:

— Ե՛դ ասացէք, ձեզ մատաղ, էդ, գոչեցին Թաթոսի կողմնակիցները:

— Քահանայի ռոճիկը թող ձեզ չվախեցնի, չէ որ իմ ասած քահանան ուսումնարանից էլ ռոճիկ պիտի ստանայ: Միւսնոյն է, եթէ նա չլինի, մի ուրիշ ուսուցիչ պիտի բերել տանք. մեզ հարկաւոր է երրորդ բաժանմունք բաց անել ուսումնարանում. եթէ այդ յաջողւի, ազջիկների ուսման հարցն էլ զլուխ դաչ, այն ժամանակ ես մենակ չեմ կարող կառավարել ուսումնարանը: Հէնց հիմա էլ դժւար է ինձ համար, որովհետեւ աշակերտները շատանում են:

— Հաշիւը միւսնոյն է, վարժապետ, պատասխանեց ազջիկների ուսման ամենաթունդ հակառակորդը. առաջինը ասածներդ զլուխ գալու բաներ չեն, և երկրորդ՝ եթէ քահանան ուսումնարանից ստանալու լինի ռոճիկ, չէ որ էլի մեր գրպանից պիտի դուրս գայ: Մենք մեծ ուսումնարան պահող չենք, դու պիտի եօլա տանես ամենը...

— Էսօր ուսումնարան կայ, քահանան էնտեղից է իր ռոճիկը ստանում, ասաց մի երիտասարդ. վաղը ուսումնարան չկայ, կարող է պատահել, չէ որ էն ժամանակ քահանան մեր վզին պիտի ֆնայ իբրեւ մի ծանրութիւն: Զէ, եղբայր, մինչև հիմա եղած քահանաները ինչպէս որ մեզ կառավարել են, տիրացու Թաթոսն էլ էնպէս կը կառավարի:

Յարումեանը չգիտէր ինչ անել: Նա վրդովւում էր այդ մարդկանց դէմ, որոնք քաջութիւն չունէին նիւթական փոքր զոհաբերութիւն անել և ունենալ օրինակելի քահանայ: Ո՛չ մի արժէք նրանց

համար ուսեալ քահանան... Բայց չէ, նրանք հասկանում են. նրանք ընդունում են, որ ուսեալ քահանան լաւ բան է, բայց ունենալ չեն կարող, ոչժեները չի կտրիլ, այդ բախտը նրանց չէ տրւած. նոքա խոնարհւում են նիւթական սուղ միջոցների առաջ: Բայց եթէ գիւղացիք խոր ըմբռնէին ինտելլիգենտ քահանայի նշանակութիւնը, անշուշտ դրա համար կ'անէին նիւթական նոյն իսկ ծանր զոհաբերութիւններ, ունենալով ապագայի վրա պայծառ յոյսեր... Ս'հ, անկասկա՛ն կ'անէին...

Յարուեստը նախատեց գիւղացիներին, որ նրանք բարի գործը թողած, գնում են վատի յետեւից և ասաց թէ քահանայի ռոճիկը հասարակութեան վրայ բաժանելով իւրաքանչիւր տանը ընկնում է երեք լուրի:

—Տ'հ, վարժապետ, պատասխանեց գիւղի աղքատներից մէկը, երեք մանէթը դժւար չէ տալը, բայց դու էն ասա թէ քանի՞ էդ-պիսի երեք մանէթներ ունենք տալու: Քիչ ցաւ ունե՛նք. քիչ զըրկանքներ ենք կրօն, որ հալա դրա համար բողազներիս հացը կըտրե՛նք: Տարին տասներկու ամիս եզան նման չարչարում ենք և կերակուրներս ինչ է լինում. քար ու քացախ: Ապրուստներիս նայիր. ինչ օրում ենք, պարտքի տակ տնքում ենք, հիմա դու ուզում ես նոր պարտքեր բերես վզներիս: Ի՞նչու. ինչիս պէտք է լուսաւոր քահանան, եթէ ինքս կիսաւեր, մութ և խոնաւ տանս մէջ ձմեռւայ բուք ու բուրանին սառչում, փեռանում եմ, եթէ երեսներս բարակ, հնամաշ վերմակի տակից չեն կարողանում դուրս գալ, իսկ որիչ մի շոր էլ չունեմ, որ գցեմ վրաներին տաքանան: Սաղ ձմեռը Աստծոյ լոյսի երեսը չեն տեսնում: Հագներինը մի բարակ շապիկ է միայն. . . Ի՞նչիս պէտք է ուսեալ քահանան, եթէ երեսներիս ոտները տարին տասներկու ամիս բոբիկ մանգալուց քար են կտրում, ճաքճքոտում, եթէ հագուստները միշտ կարկտաններից կարւած ցիցոտիներ են, եթէ կերածներիս սաղ տարին սև հաց է, սոխ կամ լոբի, եթէ աղքատութիւնը Աստծոյ պարզ երկինքը սևացրել է զլիններիս... Մի կիսաքանդ տուն ունեմ, չեմ կարողանում նորոգել տալ և ամեն տարի վախ ու սարսափի մէջ եմ անցկացնում օրներս. վա՛յ թէ քանդւի մեզ տակով անի: Եթէ լուսաւոր տէրտէր կարողանայի բերել տալ, հրէն քանդւող տունս նորոգել կը տայի: Նոր

հոգանու կարիքը մեզ մաշում, տանջում են, երբ մենք մի պարզ օրի երես չենք տեսնում, ես իսկի կարող եմ լուսաւոր քահանայի մասին միտք անել կամ խօսք բացանք: Մտքով կարող է անցնել, իհարկէ, ինչպէս և հարստութիւն, փող, լաւ ապրուստ, գեղեցիկ տներ, բայց հէնց ի՞նչն են. անխելքութիւն կը լինի օգումը նրանց յետեւից ընկնելը... Ի՞նչիս է պէտք բուխարայի մորթուց կարած փափախը գլխիս, եթէ տանս ուտելու հաց չկայ, եթէ տնից փախչում եմ, որ զաւակներիս անբախտ, դառն վիճակը չտեսնեմ.— Էդպէս էլ լուսաւոր քահանան...

Նա վերջացրեց իր խօսքը և վշտալէմ հայեացքը Յարումեանին յառած՝ պատասխանի էր սպասում:

Ազդու էր աղքատի տառապած սրտից դուրս ժայթած այդ հառաչանքը: Յարումեանը մի րոպէ խօսք չգտաւ. ասելու և քիչ յետոյ զգաստանալով, կտրակի պատասխանեց.

— Եթէ դուք ունենաք այդպիսի մարդիկ, այն ժամանակ ձեր դրութիւնը կը լաւանայ: Նրանք ձեր մասին կը մտածեն, կը հոգան, միջոցների կը ձեռնարկեն ձեր ապրուստը բարւոքելու:

— Ո՞րտեղից կը լաւանայ, եթէ էդ մարդկանց մենք ինքներս մեր ծախքով պիտի գտնենք բերենք:

— Այդ ինչ էիր կարծում, դիմեց ուղղակի իրան հակաճառողին Յարումեանը. եթէ մի վաճառական նկատում է, որ իր գործերը հմուտ կառավարչի բացակայութեան շնորհիւ վատ են ընթանում, նա իսկոյն վարձում է մի հմուտ մարդու և իր գործերի գլխաւոր ղեկը նրան յանձնում:

— Որ կարողանանք, վարժապետ, բերել կը տանք, բայց ոյժ չունենք, փող չունենք, համ էլ վաճառականը ինքն է իր գլուխը, իսկ մենք թէև մի հասարակութիւնն ենք, բայց առանձին առանձին մարդիկ, ամեն մէկը իր համար ապրող... Դրանից բացի, էս մէկը բերել ենք աւել, խօսքս քո մասին է, վարժապետ, չնեղանաս. էս երեք տարում ի՞նչ ես արել մեզ համար. շնորհակալ ենք, երեխաներին լաւ կարդացնում ես, բայց դէ ապրուստներիս համար ի՞նչ ես արել, որ մի քիչ թեթեւանայ դրութիւններս. ոչինչ. ընդհակառակը, քանի գնում դժուար օրերի ենք հասնում, մանաւանդ որ ամեն ինչ էդ ուսումնարանի բերանն ենք տալիս... Նս քեզ չեմ մեղադրում. ի՞նչ կարող ես անել էս հանգամանքներում:

— Ուրեմն իմ առաջարկած քահանայացուին չէք ցանկանում, հարցրեց Յարութեանը հանդիսականներին:

— Ձէ, չէ, չէ, մեր ոյժը չի պատիւ: Տիրացու Քաթոսը շատ յարմար է մեզ:

Այս կտրական պատասխանը շատերի բերանից դուրս թռաւ, որից յետոյ ժողովականները վեր կացան ցրւելու:

— Այ՛ հասարակութիւն, ասաց տիրացուի ազգականը, էլ ինչու էք ցրւում. դէ տիրացու Քաթոսի գործը վերջացնենք էլի: .

Նա զրպանից հանեց խնդրագիրը և մօտեցաւ ժողովականներին իւրաքանչիւրին:

— Թէև վարժապետի սիրտը կոտրու՛ ենք, ասում էին ոմանք, բայց դէ ինչ աբաժ. պիտի ձեռք քաշենք թղթին:

Կարճ ժամանակում խնդրագիրը ստորագրու թիւններով հանդերձ պատրաստ էր: Տիրացուի ազգականը վեհանձն և ուրախ դէմքով թողեց ժողովը: Յաղթութիւնը ինքն էր տարել... Իսկ Յարութեանը գործի անյաջող ելքից յուզւած՝ չկարողացաւ այլ ևս նայել աչք տխուր տեսարանի վրայ և գոչեց.

— Ես խնդիր կը գրեմ կատարութեան և չեմ թողնիլ տիրացու Քաթոսի նման համբակին քահանայ ձեռնադրեն: Եւ մատը օդում շարժելով՝ հեռացաւ գիւղամիջից:

— Գրիր, պատասխանեց Քաթոսի խնամին, էս խնդիրը որ մեր ձեռքին է, քեզ ով է լսելու: Ուր ուզում ես գնա...

Յարութեանը այլ ևս ոչինչ չպատասխանեց: Գլուխը քարշ, մտախոհ և յուսահատ նա գնաց դէպ այգիները տանող ծուռ ու մուռ ճանապարհով: Քիչ յետոյ նրան հետեւեց Մարութեանը, որը սկզբից այդպիսի ելք էր նախատեսնում և որը գնում էր երկտասարդ գործչին խրախուսելու, յոյս տալու...

Նա հասաւ Յարութեանին մի աղբիւրի մօտ: Տղան նստել էր այգետը և իր այրող դէմքը զովացնում էր աղբիւրի պաղ ջրով: Մի խոր, սիրտ պատառող վիշտ պատել էր նրա դէմքը: Տեսնելով Մարութեանին, նա հանդարտիկ բարձրացրեց իր գլուխը և վշտալի հայեացքով ընկերին նայեց: Ոչ մի խօսք դուրս չթռաւ նրա բերնից: Դա հոգեկան սաստիկ յուզմունքի և յուսահատութեան պարզ ապացոյց էր:

—Ի՞նչ կայ, մեր տղայ, ասաց Մարութեանը ժպիտը երեսին. չլինի յուսահատուել ես և այսօրւայ դէպքը քեզ համար մի մեծ ցաւ դարձրել: Թող առ ժամանակ էլի տգէտ քահանայով կառավարեն:

—Մհ, բարեկամ, անտանելի է, երբ կեանքը անողոք կերպով ստիպում է քեզ խոնարհուել ամեն մի խոչնդոտի առաջ. երբ դու ստիպւած ես լինում տեղ տալ, ծանապարհ բաց անել չարիքի առաջ: Դու տեսնում ես այդ և միայն գլխիդ խփում, որ անկարող ես նրան դիմադրել: Ամեն մի բարի գործ, ամեն մի ձեռնարկութիւն դու չսկսւած, տեղն ու տեղը աւերւում, խորտակւում է: Իսկ իմ տեսածը ի՞նչ է եղել մինչև այժմ. նորածիլ տենչերիս խորտակումն ու թաղումը: Հարւած հարւածի յետևից է հասցրել ինձ անողոք կեանքը, ամեն մի արածս ջնջել է անհետք և այժմ ես գտնում եմ ինձ մի անտանելի, անելանելի դրութեան մէջ:

Յարու մեանը ալլալլեց, արտասուքը ցոլաց նրա աչքերում, բայց ինքնասիրութիւնը նրան զսպեց. այդ ամենը սքողելու համար նա նորից իր ասիերի մէջ առաւ պաղ աղբիւրի ջրասկ ջուրը և երեսին տաւ: Մի կսկծալի ակ, խոր հառաչի հետ միախառնւած, դուրս թռաւ նրա վիրաւոր կրծքից: Փոքր ինչ հանդարտելուց յետոյ նա շարունակեց.

—Այժմ ես տեսնում եմ, Մարութեան, որ այստեղ ոչ մի նպատակ չի կարելի իրագործել: Այսպիսի պայմաններում, գործունէութեան այսպիսի ուղղութեամբ անկարելի է մի բան գլուխ բերել: Ես համոզւած եմ զրանում: Լսեցիր զիւղի աղքատի խօսքերը. գոքա դառն իրականութիւնից բղիւսած ճշմարտութիւններ էին, որոնց առաջ իմ լեզուն պապանձւել էր: Եւ ամեն անգամ իմ առաջ կանգ է առնում այն հսկայ և աւերիչ ոյժը, որին և համարում եմ մեր զիւղացոյց բոլոր ցաւերի ամենաէական պատճառը: Այդ աւերիչ ոյժը զիւղի տնտեսական անկումն է: Մեր գիւղացոյ կեանքի թէ մոլթ և թէ լուսաւոր կողմերը լուսաբանելու համար եթէ այդ եմ ընդունում յենակէտ, այն ժամանակ բոլոր երևոյթները վերլուծման են ենթարկւում: Իմ կրած բոլոր անչաջողութիւնների աղբիւրը ես գտնում եմ տնտեսական անկման մէջ. գիւղացոց աղքատ դրութիւնը բարձրացնելուց յետոյ մեր ծրագիրները իրանք-իրանք կ'իրագործւեն: Քանի որ մոքի լուսաւորութիւնը, հոգու ազնուութիւնը և

տնտեսական պայմանները սերտ կապերով են կապւած իրար հետ, ճիշտ աջնպէս, ինչպէս ժամացոյցի մեխանիզմի խրաքանչիւր մասնիկը, ուստի և հասկանալի է, որ գէթ մի մասնիկի վնասալը ընդհանուր խանգարում է առաջ բերում ժամացոյցի մէջ: Բայց ես մոլորւած եմ եղել: Ինքը իրականութիւնը այսօր այդ դասն է ինձ տալիս: Նա ասում է. մարդկանց մոքի և բարոյականութեան բարձրութեան մասին պիտի աշխատել, բայց տնտեսապէս քայքայւած ժողովրդի մէջ գտնուող դործիչը աւելից առաջ պիտի ձգտէ այդ ժողովրդի տնտեսական ընկած վիճակը բարւոքելու: Յանցանք է կամ, աւելի ճիշդն ասած, ապարդիւն աշխատանք է, ինքնախարհութիւն է, եթէ այդպիսի հանգամանքներում հասարակական դործիչը ձգտում է ժողովրդի բարբերը ազնւացնել խօսքի միջոցով, եթէ նա աշխատում է կեանքի մէջ մտցնել զանազան բարենորոգումներ, ուշք չդարձնելով նոյն ժողովրդի տնտեսական անկման վրայ:

—Այո, վարժապետ, ասաց Մարութեանը, որ աղբիւրի եզրին գտնուող քարի վրայ նստած խոնարհել էր իր գլուխը և լսում էր երիտասարդ ուսուցչի մրմունջները, այո՛, իմ մոքում այդ ամենը վաղուց էր պտտում, որովհետեւ դրան հաւնելու առիթներ ես չառեմ ունեցել. բայց միայն ես չէի կամենում ականջ դնել դրա ձայնին — աջնքան սիրում, աջնքան փայփայում էի իմ սրտին: Դու գիտես, որ ես գիւղ եմ եկել զիւղական աշխատանքով ապրելու. գիւղական կեանքը ամենաիդէալական կեանքն է ինձ համար, որովհետեւ նա ինձ ազատում է բթանալուց և նպաստում է մարդու բազմակողմանի ընդունակութիւնների զարգացման: Այդ իսկ պատճառով ես վճռել էի թողնել ընդմիշտ քաղաքը, պանդխտութիւնը, մեքենան և նւիրել հողագործական աշխատանքին: Բայց չորս տարի մնալուց յետոյ ես տեսայ, որ անկարող եմ այլ ևս դիմանալ. ես ստիպւած եմ նորից պանդխտութեան դիմել, որովհետեւ ինձ սպասում է հողից, գիւղից զրկւելու վտանգը: Ապրուստ ունենք, պահանջները կամաց-կամաց աճում են, բայց նիւթական համապատասխան միջոցներ չունենք... Յւ միակ ելքը առ այժմ ես դարձեալ պանդխտութեան մէջն եմ գտնում:

—Այո, պատասխանեց Յարումեանը ցաւակցութեամբ և լռեց: Նրանք երկուսն էլ երկար ժամանակ անխօս նայում էին պարզ

աղբիւրի վճիտ ջրին և նրա մեղմ խոխոջիւնի հմայող ուժից զիւթւած ընկղմել էին երևակայական ցնորքների ալեկոծ աշխարհը...

VI

Իննուսնական թւականն էր: Ամառային մի գեղեցիկ օր Յարուսմեանը նստած էր իր սենեակում և բաց պատուհանից դիտում էր գիւղի կանաչազարդ արտերն ու աչգիները: Կենդանի բնութիւնը գեղեցիկ տեսարաններ էր սփռում նրա առաջ, որից երիտասարդ ուսուցիչը բաւականութիւն էր զգում: Բայց դրա հետ միասին այդ գեղեցիկութիւնը առաջ էր բերում նրա հոգու մէջ հակառակ ասոցիացիա և նա իր մտքում ասում էր, ինչու ապա այս մարդկանց իրական կեանքը զուրկ է բոլորովին գեղեցիկութիւնից. ես նրա մէջ չեմ տեսնում մի գեղեցիկ կողմ, որը ինձ նույնպէս բաւականութիւն պատճառէր, հիացնէր, ոգևորէր... Գուցէ... և անկասկած ունեցել է մեր դիւղացոց կեանքը բաւական համակրելի կողմեր, մարդիկ իրանց սովորութիւններով, հոգու յատկութիւններով և հարեանական-համայնական շարաքերով թիւններով հանդիսանում են եղել ինչպէս օրինակելի պատկերներ. ասկայն այժմ ամեն ինչ խորտակւած է. դիւղացիք ծանրացել, ստորացել, ընկել են բարոյապէս, զուրկ են հոգու ազնիւ յատկութիւններից, ամեն մարդ ինքն է իր գլուխը, ընդհանուր շահ չկայ մէջտեղ—և այդ ամենը գլխաւորապէս տնտեսական անկման շնորհիւ...:

Այստեղ Յարուսմեանի միտքը կրկին կանգ առաւ մի քանի օր առաջ կատարւած դէպքի վրայ. դիւղացիներից մէկի միտուճար որդին սաստիկ հիւանդ էր: Տղան նշանւած էր և առաջիկայ աշնան հարսանիք պիտի անէր: Նրա հարսնացուն, որ ամառանոցումն էր գտնուում, քուն չուներ, իսկ արտասուքը չէր ցամաքում նրա գեղեցիկ աչերից: Նղիսաբէթը նիհարել, գունատւել էր և տխրութեան սև քողը իջել էր նրա դէմքի վրայ: Ոչինչ չէր խօսում նա, ոչինչ չէր ուտում, այլ օբայի մի անկիւնում նստած, հոգով իր սիրելիի գլխատակը վերացած՝ տանջւում էր նրա ցաւով և սեղմում նրա գլուխը իր կրծքին... Նա լրի էր սպասում ամեն օր: Լուրերը չաճախ չէին դալիս, որովհետև սար եկող քիչ էր պատա-

հում, հասած լուրերն էլ մխիթարական չէին... Հալ ու մաշ էր լինում խեղճ Եղիսաբէթը...

Հիւանդը սաստիկ մրսել էր որսի ժամանակ սարերում: Այժմ նա տաքութեան մէջ էր և չկար մի հասկացող մարդ, որը մի ճանապարհ ցոյց տար՝ հիւանդին սպառնացող մահից ազատելու համար: Պառաւնները գործադրեցին իրանց միջոցները. գալլաքը արին առաւ հիւանդից, բաց երիտասարդի դրութիւնը դրանցից բոլորովին չփոխեց. ընդհակառակը՝ նա աւելի վատթարանում էր: Հիւանդի ծնողները ձեռքները ծալած՝ նստած էին իրանց միտումարի զլխատակին և միայն աղօթքով ու արտասուքով էին կամենում փրկել նրա թանկագին կեանքը: Վարժապետին կանչեցին. սա էլ եկաւ և ցոյց տւեց իր կատարեալ անգիտութիւնը բժշկութեան մէջ: Այնչէս նա չունէր առաջարկելու. միայն խորհուրդ տւեց բժշկի յետեից գնալ: Իսկ բժիշկը հեռու էր և շատ վտղ էր պահանջելու: Անբախտ հայրը, որ ունեւոր չէր, վճուեց ամեն ինչ զոհել, միայն թէ փրկւի որդու կեանքը: Մարդ ուղարկեց գաւառական քաղաքը բժշկի յետեից: Բժիշկը արժան համարեց ինքը գալ, այլ ուղարկեց Ֆելդշէրին: Ֆելդշէրը եկաւ, ինչ որ բան արաւ, ստացաւ իր վարձը, որը հաւասար էր զիւղացու տարեկան ծաքի կիսին և զնաց... Նրա հեռացած օրը հիւանդը հրաժեշտ տաւ իր մտտաղ կեանքին, աղի մէջ թաղելով իր ծնողացը և ջահիլ հարսնացուին:

Յարումեանի վրայ խոր և ճնշող ազդեցութիւն արաւ այդ դէպքը: Հիւանդը տասն օր շարունակ անօգնական էր. երբ հիւանդութիւնը իր զոհին արդէն իր ճանկերն էր առել, այն ժամանակ միայն բժշկի յետեից գնացին: Խորամանկ բժիշկն էլ երևի հարց ու փորձից հասկանալով հիւանդի դրութիւնը, բաց այժուամենայնիւ չկամենալով որսը ձեռքից թողնել, ֆելդշէրին ուղարկեց... Միթէ այդ օրին կը հասնէր խեղճ տղան, եթէ զիւղը ունենար մի ղեղատուն և ամենապակասը մի ֆելդշէր: Անկասկած ոչ. բաց քանի-քանի հիւանդներ են այդ ճանապարհով, անճարութեան մատնւած լինելով, զրկւել իրանց կեանքից... Յարումեանը մտածում էր շինական ժողով գումարել և առաջարկել նրանց ֆելդշէրի հարցը: Սակայն երբ նա չիշեց իր մի շարք անյաջողութիւնները, կեանքի մէջ բարենորոգումներ մտցնելու տենչով վառւած

նրա հագին մոայլեց և նա զգաց որ դու գլուխ գալու դուժ չէ։ Ապա ինչանել այդ ուզողութեամբ, ուրիշ ինչ միջոցի գիմել. միթէ հիւանդների կեանքը բախտի խաղերին, հիւանդութեան քմահաճոյքին պիտի թողնել... Մինչև երբ...

Յարումեանը ընկղմւած էր այդ մտքերի մէջ, որ նրա քոյրը ներս գալով՝ յայտնեց.

— Հիւր է եկել մեզ մօտ։

Հիւրը որ ձիուց իջել էր և կանգնած էր տան բակի մէջ, մի երիտասարդ տղայ էր եւրոպական հագուստով և յարդէ լայնեզր գոյակը գլխին։ Յարումեանը հետաքրքրութեամբ բակ ելաւ, մի վայրկեան երիտասարդին նայեց և յանկարծ ծանաչելով նրան բացականչեց.

— Մուրադեան, այդ դ՞ու ես...

Վաղեմի ընկերները գրկախառնւեցին և իրանց երկարամեայ կարօտը առան համբոյրներով։ Արտաշէսի մայրը, որ կանգնած՝ այդ տեսարանին էր նայում, այնքան զգացւեց, որ արտասուք երևաց աչքերին ..

— Այս դ՞ու ես, տղայ, հեալով հարցնում էր Յարումեանը, որ տեղից որտեղ... Ինչպէս, ինչ նպատակով։

Յարումեանը ընկերի թեւը բռնած տարաւ իր սենեակը, հրաւիրեց մահճակալի վրայ հանգիստ առնելու։ Տանեցոյ պատուիրեց, որ ընկերոջ ձին տեղաւորեն և թէյ պատրաստեն։

— Դէ պատմիր, պատմիր տեսնեմ, ասաց Յարումեանը, վերադառնալով իր սենեակը. երբ ես վերադարձել արտասահմանից, ինչ ես անում, դորձդ որն է.— քոյրը պատմիր... Դու չգիտես, թէ այս վերջին տարիները մի քանի հանգամանքների շնորհիւ որքան տանջանքներ եմ կրել... Որչափ ուրախ եմ այս րոպէին քո գալովը։

— Յարումեան, ասաց հիւրը, դէմքդ առնացել է և յոգնածութիւն է արտայայտում։

— Ապա ինչ էիր կարծել. հեշտ բան է վեց տարի շարունակ զիւղում քնալը և զիւղի կեանքով ապրելը. երկաթ պիտի դառնալ այդ կեանքի առաջ չընկճելու, նրա աղդեցութեանը չենթարկւելու համար... Բայց դու քո մասին պատմիր. դա ամենից հետաքրքրականն է։

— Ես արտասահմանից մի տարի է, որ վերադարձել եմ Կովկաս, ասաց Մուրադեանը: Արտասահմանում ուսումնասիրել եմ քաղաքատնտեսութիւն և քիմիա, ստացել եմ դոկտորի աստիճան և այժմ հայրենիք վերադարձած, դեռ մի գործի չեմ ձեռնարկել: Սույժմ ամառնային ճանապարհորդութիւններ եմ կատարում մեր երկրի տնտեսական դրութիւնը և նրա ծոցում անձեռնմխելի մնացած հարստութիւնները ուսումնասիրելու նպատակով: Այս ամառ ձեր նահանգի երկու գաւառն եմ ընտրել: Գիտէի, որ դու դեռ զիւղումն ես և վճռեցի անպատճառ այստեղ ևս ընկնել քեզ տեսնելու համար: Ի՞նչ ես անում, ինչպէս են դնում գործերդ, միութարութիւն գտնում ես շուրջդ, աշխատանքիդ մէջ: Գիւղացոց շարքերում թիւնը դէպի քեզ ոնց է. հին դադափարների հաշտութիւն կանց նորերի առաջ. դրական արդիւնք կանց արածիւր մէջ: Սրանք կարծեմ այնպիսի հարցեր են, որոնք վերաբերում են ամեն մի գործչի:

— Դրական արդիւնք կայ, բայց աննշան, այնպէս որ այդքանը գործչի համար եռանդի և զիմացկանութեան նեցուկ չի կարող ծառայել:

— Ես կարծում եմ ոչինչ չլինելուց այդքանն էլ բաւական է:

— Այդ ճամարիտ է, բայց բանը նրանումն է, որ այդքանը ոչինչ է, համեմատած զիւղական մի շարք ջաւերի հետ. ես իմ արածից անբաւական եմ նոյն իսկ:

— Դա բնական է և հասկանալի, ասաց Մուրադեանը ժպտալով:

— Ինձ հասկացար, պատասխանեց Յարումեանը. ինձ թւում է այժմ, որ իմ գործունէութիւնը ընթացել է սխալ ճանապարհով: Նա արձագանք չի տւել դիւղի ժամանակակից պահանջներին: Ես խոր չեմ թափանցել իրերի դրութեան մէջ և այժմ տեսնում եմ, թէ ինչումն է եղել իմ սխալը:

— Պարզիր սխալդ, խնդրեմ, ասաց երիտասարդ քաղաքատնտես քիմիկոսը:

Յարումեանը մի առ մի պատմեց նրան իր աշխարհայեցողութեան մէջ տեղի ունեցած այն խոշոր փոփոխութիւնը, որ կատարւել էր մի տարի առաջ չաջանի հանգամանքների շնորհիւ:

— Գիւղի տնտեսական բարեփոխան խնդիրը, վերջացրեց իր պատմութիւնը Յարումեանը, ես բոլորովին անուշադրութեան էի

մասնեւ և այժմ տեսնում եմ, որ ամենից առաջ դրա մասին պիտի մտածել:

—Այո, պատասխանեց Մուրադեանը, այդ ամենը նոյն իսկ այսօր կատարեալ անհոգութեան են տւել, իսկ զբաղւած դէպքում բաւականանում են միայն խօսելով: Բայց այլ ևս բաւական է. ժամանակ է հասկանալու, որ լոկ մոքի զարգացումը, բարոյագիտական խրատները և գիւղացու տգիտութեան դէմ խօսքով մաքառելը անկարող են ցանկալի դրութիւն առաջ բերել, անգոր են գիւղացուն բարեկարգ վիճակի մէջ դնելու: Տնտեսական հանգամանքները կազմում են կեանքի բազմաթիւ և խոշոր երևոյթների հիմքը. դա մի մթնոլորդ է, որի փոփոխման չափազանց զգայուն է հասարակական կեանքի ծանրաչափը: Մի քանի քաղաքատնտեսների նոյն իսկ կեանքի ամբողջ էությունը բացատրում են տնտեսական տեսակէտից և տնտեսական հանգամանքներն են ընդունում իբրեւ առաջագիմութեան միակ ֆակտոր: Հէնց դրա համար էլ գիւղական գործիչը,— ես, իհարկէ, մասնաւորացնում եմ իմ ասելիքը,— իր ամբողջ եռանդը և ոյժը պիտի գործադրէ զլիսաւորապէս տնտեսական կեանքի զարգացման օգտին: Այս գիւղում դրա համար անելիք շատ կայ: Ես արդէն իմացել եմ, որ այստեղ զբաղւում են շերամապահութեամբ և բամբակագործութեամբ: Խնչպէս է վարձատրում գիւղացուն այդ աշխատանքը:

—Աննշան վարձատրութիւն. շերամի ամբողջ սեր՝ չեն ստանում գիւղացիք և ամեն անգամ նրանց երկամսեայ լարւած աշխատանքը զոհ է գնում վաշխառու սերմավաճառների զաղրելի շարլատանութիւններին: Բաւականին խաղողի այգիներ կան այստեղ, մեծ քանակութեամբ գինի կարելի է արտահանել այստեղից, բայց գիւղացիք չգիտեն որթը կարգին մշակել, հիւանդների դէմ կուել և գինի պատրաստել: Բամբակի բերքն էլ ամեն տարի աղքատ է շնորհիւ հիւանդութիւնների, որոնց դէմ գիւղացիք ոչ մի միջոց չունին առնելու:

—Տեսնում էք ուրեմն, ասաց Մուրադեանը, եթէ գիւղական գործիչը առիթ ունենայ լուրջ զբաղւելու այդ հարցերով, նա անշուշտ կարող է զարկ տալ գիւղի տնտեսական կեանքի զարգացման և այդպիսով անուսպարհ հարթել իր այլ նպատակների համար:

Պարճրէք ձեր ուսումնարանը ամենից առաջ գիւղատնտեսական դպրոց, և ես կարծում եմ, որ գիւղացիին ուրախութեամբ զոհ կը բերէ դրան իր ունեցած նիւթական և բարոյական ոյժերը. նա կը տեսնէ, որ այդ դպրոցը արդիւնաւէտ է դարձնելու իր աշխատանքը, թեթեւացնելու է նրա ապրուստն ու վիճակը, զարկ է տալու նրա նիւթական միջոցների հարստութեան,—և ահա նոյն սառն, անտարբեր և դպրոցի վրայ իր ձեռքը թոթափած գիւղացին սերտ կապերով կը միանայ գիւղական զործիչի հետ: Սովորեցէք ինքներդ պատրաստել շերամի սերմ կամ թէ զիմեցէք մի ալ միջոցի վաշխառու սերմավաճառներից ազատելու համար: Գիւղատնտեսական դպրոցը գիւղական նոր սերնդի մէջ մշակութեան նոր ձևերի, նորանոր ձեռնարկութիւնների պահանջ կ'առաջացնէր. իսկ այդ ամենը կամաց-կամաց զարգանալով զարկ կը տար տնտեսական կեանքի բարեփոխման: Հէնց այդ տեսակէտից որչափ լաւ կը լինէր, եթէ որ մեր գիւղական զործիչները միևնոյն ժամանակ լաւ գիւղատնտեսներ լինէին:

—Այո, Մուրադեան, դու այն ժամանակ էլ ասում էիր այդ, և ես այժմ մտադիր եմ գնալ շերամապահութիւն և այդեզործութիւն ուսումնասիրելու: Այս աշնան ես ճանապարհ կ'ընկնեմ այստեղից:

—Շատ էլ լաւ կը լինի. իսկ դպրոցը:

—Մեր հարեան գիւղում կայ մի ճեմարանաւարտ երիտասարդ, որը համաձայն է այստեղ ուսուցչութիւն անելու և մտադիր է իրանց գիւղից ևս աշակերտներ բերել հետը:

—Այդ ուրախալի է, բայց դպրոցը գիւղատնտեսական դարձնելու միտքը:

—Յետաձգենք մինչ իմ վերադառնալը, պատասխանեց Յարութեանը ժպտալով:

Հազաւորւաւ հիւրը երեք օր մնաց նրա մօտ, մանրամասն կերպով ծանօթացաւ գիւղի տնտեսական դրութեան հետ, այցելեց գիւղի մօտ գտնուող պղնձէ անդործ մնացած հանքը և հարեան գիւղերից մինի մօտ գտաւ լաւ շատիկութիւն ունեցող կաւի հանք:

Երբորդ օրը նա բաժանեց Յարուսեանից, մաղթելով նրա ծրագիրներին յաջող իրագործում:

— Գուցէ կեանքը նոյն իսկ բերէ և մեզ աշտուղ նորից կապէ միմեանց հետ, ասաց նա վերջին անգամ սեղմելով ընկերի ձեռքը: Իսկ Յարուսեանը օգոստոսի սկզբներին ուսումնարանը չանձնելով ծեմարանաւարաւ երիտասարդին, ինքը ճանապարհ ընկաւ զէպի Թիֆլիս: Կը ֆիւմար արդեօք Թիֆլիսում թէ կը գնար մի ալ տեղ իր նպատակին պատրաստելու համար, այդ ամենը Յարուսեանի համար դեռ անորոշութեան մէջ էր թաղւած...

Վ Ե Ր Զ

Ռիգա, 1898 թ.

ԳՐԶԻ ՀԱՆԱՔՆԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԺԱՏՈՒՐԵԱՆԻ

I

ՀԱՅ ՔԱՀԱՆԱՅ

Մանրավաճառի նա խանութ բացեց,
Ծախում էր տեղ, կոճակ ու մաստիկ.
Բայց առևտուրին խելքը չըսպատեց,
Փակեց խանութը, չունեցաւ վաստակ...

Եւ իրան տւաւ ուրիշ գործերի—
Եղաւ հիւս, դարբին, մրտաւ սպասաւոր,
Բայց ամեն գործ էլ թողնում էր թերի—
Նա անգրագէտ էր, անխել, անշընորհ:

Նա շատ թափառեց, դէս ու դէն ընկաւ,
Որ կեանքում իրան մի ապրուստ ճարի.
Բայց իզուր... Ո՛հ մի բանի պէտք չեկաւ—
Ջուխտ ձիուն բաժնեւ էր կարող գարի...

Վերջը ծարահատ, երբ տեսաւ, որ էլ
Մարդ չի դառնալու, յոյսն էլ է կորել.
Հայոց ապրուրէնն էր անդիր արաւ,
Եւ ազգի գլխին քահանայ դառաւ...

II

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ժ

Մարդու մէկը մեծ գանձ զիզեց,
Հողին ծախած սատանի.

Բայց մի օր էլ սիրտը ուզեց
Դըրախտ գնալ... Ի՞նչ անի.

Նա միտք արաւ մի ժամ շինել
Խեղճ, յետ ընկած հայ գեղում.
Եւ այդ ճամբով աթոռ գընել
Արքայութեան մէջ տեղում:

Գիւղացիք էլ ուրախացած,
Հէնց լսեցին այդ համբաւ,
Գիւղի բերքից հետերն առած
Իւր ու կարագ, ճուտ ու հա՛,

Բարեգործին բերին լնծայ,
Եւ զօռ տւին օրհնանքին.
«Աղա՛, Աստուած ջէրիդ ոյժ տայ,
Դըրախտ էրթայ քո հողին»...

Բայց մի գիշեր աղան քընած՝
Յանկարծ տեսաւ երազում —
Ժամը պատհաստ... իսկ ինքն ընկած
Դըժոխքի սև՝ կարասում...

Եւ սատանէն գըլխի վերեւ
Քըչփըշում էր ականջին.
«Ա՛, բարեկամ, գալըդ բարեւ,
Յանկալի՛ հիւր մեր միջին»:

Աղան սոսկաց... «Ա՛յ իմ փողեր,

Վայ խաբեցի՝ — նա դռացն,
 Եւ երբ զարթեց, շատ ուրախ էր,
 Որ դեռ ժամը չէր շինած...

III

Մ Ե Ժ Վ Ի Զ Տ

Ասան, հայ աղջիկ, ինչի՞ ես տրտում,
 Ի՞նչ ցաւ ու դարդ կայ քո մտտաղ սրտում.
 Ի՞նչի ես այդպէս յուսահատ լալիս,
 Մազերդ փետում, գլխիդ վայ տալիս...
 Արդեօք քո սիրած քաջ ասպետն է քեզ
 Անողորմ խոցել ու դարձրել երես...
 Թէ՛ անգին ծնողքին կամ ազիզ եղբօր
 Թաղել ես երէկ կամ թաղել այսօր.
 Արդեօք այս տխուր, այս սև օրերին
 Քո դժբախտ ազգի ցաւերն են խորին
 Քեզ այդպէս յուզել, պղտորել հոգիդ,
 Խլել քո դէմքից կուսական ժըպիտ...
 Ասան ինձ, ասան քո սրբոյի զաղանիք,
 Գուցէ, քո ցաւին մի ճար կայ, աղջիկ...
 — «Ա՛խ, մի ժամից յետ հիւր պիտի գնամ,—
 Կոչսը հառաչեց արցունքն աչերում.
 «Իսկ զերձակուհիս — այդ կինն ազգամ—
 «Դեռ մինչև այժմ շորըս չի բերում»...

IV

Ի Գ Է Ա Լ Ի Ս Տ

Երբ ուսանող էր համալսարանում,
 Իդէալ էր փնտրում նա ամեն բանում.
 Նա միշտ ասում էր. — «առանց իդէալի
 Կեանքն է անապատ, մարդն է խղճալի»...

Բայց ահա կեանքի նա գպրոց մտաւ.
 Եւ զիտէք իդեալն ինչ բանում գտաւ—
 Հարուստ օժիտով մի աղջիկ առաւ.
 Եւ կնկայ փողով յայտնի մնալի դառաւ...

V

ՀՐԱՂԱՒ ԳԼԽԵՐԿ

Մի, ինչ սիրուն ես... Գլխիդ երեք ջարկ
 Աշտարակի պէս դրել ես գլխարկ.
 Ասում են, մոզան աչդ երեք ջարկին
 Շուտով կ'աւելցնի երեք ջարկ կրկին...
 Ափսոս, հայ աղջիկ, ես չեմ ասողագէտ,
 Որ գլխիդ կանգնած խօսեմ լուսնի հետ...

Մտկաւ:—

ԴԵՌԱՅԱՍՆԵՐԻ ԱԶԱՏ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎ. Հ. ՏԵՐ. ՄԻՐԱՔԵԱՆՅԻ

Ինչպիսի գրքեր տալ դեռահասների ձեռքը:

Ո՛րքան դիւրին բան են համարում շատերն այս հարցին պատասխանելը, երբ «մանկական» անւանւած գրաւորքների ողուով մէկ նորը հեղինակելու, փոխադրելու կամ թարգմանելու համար դրիչ են ձեռք առնում և կամ թէ չէ՝ երբ ծնող ու դաստիարակ մանկական կոչւող ամեն գրաւորք առանց այլ և այլութեան՝ մէկը իւր դուակի, միւսն իւր սանի ձեռքն է տալիս: Եւ ո՛րքան ևս առաւել հեշտ է ընտրութեան գործում քաղաքակիրթ Գերմանիայի կաթոլիկների Ի. Գ. և Ի. Ժ. ընդհանուր ժողովների յանձնարարութեամբ Դր. Ռոլֆուսի ժողովրդի և դեռահասների համար կազմած գրացուցակի տեսակէտով առաջնորդւել, ուր համարեա միայն կաթոլիկ հեղինակների երկերն են առաջարկւած և այն էլ նոյն դաւանութեան հրատարակչներինը:

Բայց և ո՛րքան ծանր է այս խնդիրը նրանց համար, որոնք բարեխղճութեամբ ու գիտակցօրէն գործին վերաբերւելու պարտականութիւնն են զգում: «Ժողովրդի ընթերցանութիւնը» գրաւորք¹⁾ տեղտեղ շօշափեց դեռահասներին վերաբերեալ գրքերի խնդիրը, երբ հարկ զգացւեց երկու շրջանի պահանջների սահմանները որոշելու: Առաջագրած յօդւածներս էլ դեռահասների ընթերցանութեան տեսակէտներից պիտի մերթ ընդ մերթ ակնարկ ձգեն երկու մտաշըրջանների առընթերակայ խնդիրների վրայ և նրանց սահմանահատու թեան ենթարկեն:

¹⁾ Մուլճ 1896, № 5. 7—8 և առանձին գրքով:

Բայց երբ դեռահասների ընթերցանութեան մասին է խօսք լինում, արդեօք պէտք է ինկատի ունենալ նաև մեր գիւղական նոյնահասակ սերունդը. և եթէ այո, արդեօք ինչ կարող էինք անել այս ուսումնազուրկ խեղճուկների համար: Յայտնի բան է, որ գիւղական աշխատանք, իւր հէքիաթներով ու երգերով, մեր ժողովրդի այս սուտարագոյն հատաձի միայն հասակաւորների համար չէ համարեա միակ կրթավայրը այլ և երեսանների համար: Այս բանահիւսութիւնն է միայն, որ ունկնդիրներին ձմեռային երկար ու ձիգ գիշերներում հանելով ասօրեայ մոմտութների, հոգսերի, վշտերի աշխարհից՝ գէթ աւժամանակ բարձրացնում տանում է հեռաւոր վայրեր ու մոցնում այն ըղձալի, հմայի: ու կախարդական աշխարհը: Թէ որքան կարօտ են այս ճնշած սրտերը զովարար հոսանքների, թէ որքան ձգտում են նրանք դէպի բարձրը և թէ վերջապէս տակաւին որ աստիճանի մանուկ է մնացել այդ ամբողջ հասարակութիւնը, այդ երևում է նրանց հէքիաթների վերաբերմամբ տաժած սիրույ ու զուրգութան քից: Աշուղ Ջիւանին փորձում է, ինչպէս ինքն է ասում, «փոխադրել» տաճկական մի քանի հէքիաթներ և ահա 2—3 տարւայ մէջ իրար ետեւից սպառւելով այդ զրքոյկները 2—5 տարւայ գրութեանն են հասնում: Հնայելով որ այդ նիւթերը ոչ գրական պահանջներին համապատասխան և ոչ էլ բուն ժողովրդական ոգով են մշակւած: Այս մարդն իւր կարողացածին չափ աշխատել է, և գնահատելի է, որ նա այսպիսով գուցէ աւելի շատ զիրք է տարածել այս մութ խաւերում՝ քան մեր ամբողջ ինտէլիգենցիան միասին առած: Արդեօք այս ուշագրաւ երևոյթը մեզ մատնացոյց չէ լինում, թէ քանի որ մեր ժողովուրդը դեռ քաղաքակրթական նախնական աստիճանումն է, պէտք էր հէնց այս կետից էլ սկսել, այն է թէ ինչպէս պէտք էր, մշակելով այս հում նիւթերը, ժողովուրդը նախապատրաստէինք աւելի բարձր աստիճանների ընթերցանութեան համար: Ինչպէս երևում է, ժամանակակից կեանքի նոր հոսանքը հէքիաթասացների թիւը նւազեցնելով հարկադրում է ընթերցողների օգնութեանը դիմել, և քանի որ ժողովուրդը այլ նիւթերի մասին ոչ գաղափար և ոչ էլ ձաշակ ունի, իւր չխաբաններում

միայն հէքիաթներն է լսում ¹⁾։ Թէև այն նիւթերից շատերը քննադատութեան չղիմանային, սակայն նրանք իրանց արկածալի կեանքով շատ հետաքրքրում են և երգաստան ու նազաստան հաուլաճներով զարդարելով բովանդակութիւնը՝ ճրագի աղօտ շողերի մէջ նստած նաև զարգացած ունկնդիրներին իրականութիւնը մոռացնել տալու չափ դիւթում են։ Այլ որ ժամեր է անցկացրել այդ հրապուրիչ միջավայրում, անշուշտ այդ շարաններից, հետը տարած պիտի լինի այս հիանալի տպաւորութիւնները։

Առաջագրած շարք յօդաճներում առանձին առանձին պիտի արծարծեն դեռահասների ընթերցանութեանը վերաբերեալ հետեւեալ խնդիրները, որոնցից քաղաքակրթութեան աստիճաններին համապատասխան դասաւորւած ընթերցանութեան նիւթերը կողմնակի կերպով մատնացոյց կլինեն մեզ, թէ դեռահաս ժողովրդի ընթերցանութիւնն էլ ինչ շաւղով պիտի ընթանայ ու հետզհետէ բարձրանայ։ Այդ խնդիրներ են.

ա) Նպատակը. որից կ'անցնենք բ) դեռահասների ու հասակաւորների մոքի ու զրացմունքների և հետեւաբար պահանջների տարբերութեանը. ապա մեզ կը զբաղեցնէ գ) այս առանձնացատկութիւններից առաջացած տարբեր շրջանների ընթերցանութեան նիւթերի տեսակները. դ) մեր ուշադրութիւնը կը գրաւեն փոխադրութեան կերպերը. ե) քննադատական ընդհանուր տեսակէտները. զ) ազատ ընթերցանութեան հետեւանքների հետազօտութիւնը. է) զբքերի ընտրութիւնը. ը) տարածումը. և վերջապէս թ) արծար-

¹⁾ Բայց ով պիտէ, ինչո՞ւ չէ կարելի մտածել, որ այս խնդրի հետազօտութիւնը ցոյց տալ, մեր ժողովրդի աւելի բարձր աստիճանի բանահիւստութիւններով հետաքրքրելը։ Ինձ թէն չալտնի չէ, բայց շատ հաւանական է թւում, որ արկածալի դրուցներն ու դիւցազներգութիւնները գրաւեն նրան։ Միայն աչքան տեղեկութիւն ունիմ, որ ժամանակակից վիպաստան պատմաճիւղները ժողովրդին շահագրգռում են, ուրեմն ինչո՞ւ չպէտք է հնթադրել, որ պատմական վէպիկներն էլ այս ունկնդիրների սրտին մօտ լինէին։ Նրանք, դեռահասների պէս, արկածներ շատ են սիրում։ Այս ժողովուրդը «մեծցած-պզտիկցած» մանկան տպաւորութիւն է գործում. նա ինքն տգէտ, բայց խուհուն է երևում օտարակա-նին. նրա անգիր բանահիւստութիւնը միամիտ աշխարհայեացքների արդիւնք է, այլ բաւականին հասունացած, թէև անդրադէտ ժողովրդի։

ծւած խնդիրներն աղբիւրներին վերաբերեալ մատենագրական տեղեկութիւնները ինչ ինչ բացատրութիւններով: Բայց նախ մի համառօտ ակնարկ ձգենք դեռահասների ազատ ընթերցանութեան ծագման ու զարգացման վրայ և ապա ձեռք տանենք վերոյիշեալ խնդիրները:

Մինչդեռ ժամանակակից դեռահասների պրականութիւնն արդէն բաւականին հարուստ ստորաբաժանումներից բաղկացած կազմակերպութեան է հասել, և աստիճանական դասաւորութեան ենթարկւել չէքիաթը, Ռոբինզոնի պատմեաւքը, Զրոյցը, Պատմեաւքն ու Նորավէպը, Կենսագրութիւնը, Գիտականը արեւտի, արհեստի ու գեղարեստի հետ, Չափական բանաստեղծութիւնը, Պարբերական հրատարակութիւնները, մի դար առաջ հազիւ էին այս հոսանքների վարանտո նշոյլներն մերթ ընդ մերթ երեան գալիս: Այն ժամանակները չտոկապէս դեռահասների համար կազմեաւ ազատ ընթերցանութեան գրքեր գոյութիւն չունէին. 17-դ 16-դ ու մինչև անգամ 15-դ դարում մի մի անգամ հրատարակուեւ էին այդպիսի նիւթեր, սակայն իբրեւ բացառութիւն, այնպէս որ ամէն հասակի մարդկանց անխոր միեւնոյն գրքերն էին իբրեւ ընթերցանութեան նիւթ ծառայում: Այս մասին Գէօթէն բաւականին մանրամասն տեղեկութիւն է տալիս իւր «Ճշմարտութիւն» ու բանաստեղծութիւնը ինքնակենսագրութեան մէջ: Այս բաղմակողմանի հանձարաւոր մարդն իւր մանկական հասակում իրանց ընտանեկան մատենադարանից ծնողների հետ միասին հաւասարապէս օգուտ քաղելիս է եղել, կարգալով հին զիւցազներգութիւններ, Հոմերոս, Վիրգիլիոսը, զրոյցներ, միջնադարեան ժողովրդական զրոյցներ, Աստածաշունչը, ժամանակագրութիւններ, նորագոյն բանաստեղծները՝ Կլոպտոք, Ռասին, Մոլիեր, Կոռնէյլ և այլն: Սրանցից զատ նրա ընթերցանութեան նիւթերն են եղել Տելեմաքը, Ռոբինզոնը, Ֆելզնբուրգ կղզին, Լորդ Անդոնի ճանապարհորդութիւնները աշխարհի շուրջը և այլ գրքեր, որ նա ընկերների հետ պատահմամբ գնում էր հնավաճառի մօտ: Բայց արդէն նոյն դարում Ֆիլանտրոպիստները գլխաւորապէս Ռուսոյի զաղափարներով ղեկավարելով, եթէ իրանց ուսուցչի հետ չաջողեցաւ մանկական աշխարհը կղզիացնել, գէթ հաստատուն հիմք դրին դեռահասների ընթերցանութեան զատուցման: Ռուսոն իւր

Հայրենակիցների բանաստեղծութեան մէջ էլ սխտեմաբար երևան հանած իմացական խիստ ուղղութիւնը մանկավարժութեան մէջ ևս գործադրել ձգտելով, կամենում էր դեռահաս սերունդը հեռու պահել հասակաւորների ֆնասակար ազդեցութիւնից, բայց կարծես թէ մանկան սիրտը անտես արաւ, որի զարդացումը կարօտ է ընտանիքի հմայիչ գորգուրանքին: Եւ անա՛ այդ ազդեցութեան ներքոյ ծնունդ առաւ միակողմանի բարոյակրթիչ տենդենցիայով մանկական գրականութիւնն իւր ինքնատիպ արտադրութիւններով: Գիտութիւն, կրօն, բարոյագիտութիւն ու բանաստեղծութիւն վերածնցին իրանց կարծիքով մանկական հասողութեանը յարմարաւոր ձևի և փոքրիկ ընթերցողին առաջարկեցին իբրեւ դիւրամարս սնունդ: Բայց որ իւրաքանչիւր նիւթ իւր աւանձնաչափով ձևը պէտք է ունենայ, որի համապատասխան նա պէտք է կերպաւորւի ու աւանդւի, այս անտես առան. որ դեռահասնէլ կարող է ընդհանուր գրականութեան ինչ ինչ արտադրութիւններից օգուտ քաղել—այդ չափազանց եռանդուն մանկավարժական հոսանքի հետ գնացողներին անհասկանալի մնաց: Այսպիսով այդ նորաստեղծ գրականութիւնն ունեցաւ իւր կեանքի հարիւրամեայ պատմութիւնը, նա այնպէս խոր թափանցեց, որ այլ ևս նրան արմատախիլ անել դժւար է: Սակայն գրադիտական կիրթ ծաշակը այս նեղ ընթացքից դուրս հանեց մանկական գրականութիւնը և ընդհանուր հոսանքի հետ աւելնչութեան մէջ դնելով՝ թարմ ուղղութիւն տւեց նաև այս մասնաձիւղին: Հիմա մնում է մեզ արդիւնաւոր հետեւանքների հասնելու համար հրապարակի վրայ վիտացող գրքերի գնահատութիւնն անել նախ գրադիտական տեսակէտից և ապա այս կարգի պահանջներին համապատասխան ճանաչածները մանկավարժական տեսակէտից քննութեան առնել: Ուրեմն գրականութեան ընտիր արտադրութեանց շարքն անցած գրքերը միայն պէտք է որ ենթարկւեն մանկավարժական կրկին քննադատութեան, որովհետև այս մասնագիտութիւնը ձեռնհասութիւն չէ կարող ունենալ մանաւանդ բանաստեղծական-բեղիտրիստական գրածքների գնահատութեան գործում: Նրա շրջանից դուրս են զուտ գեղարուեստական-գրականական հիմնական սկզբունքները:

Դեռահասների գրականութեան պատմութիւնով աւելի հետա-

քրքրուողների համար հարկ եմ համարում այսօրեղ մէջ բերել Բրոք-հաուսի հանրագիտարանից քաղւած հետեւեալ ամփոփ սեղեկութիւնները:

Տասն և ութներորդ դարու երկրորդ կիսից իսկապէս սկսեալ է մանկական դրականութեան շրջանը, Ռոխտլի, Կամպէլի ու Վալսի շնորհով, բայց հնումն էլ զգալիս են եղել մանկական ընթերցանութեան կարևորութիւնը: Հնդկաստանում առականների (басня) ժողովածուներ, պատմւածքներ և խրատներ էին կարդացուի, իսկ Յունաստանում՝ գլխաւորապէս Ողիսականը, Հէզիոդը, Թիրտէի երգերը: գնոմական ստանաւորները, Սոլոնի և Եզովպոսի առակները: Բացց դեռ Սոկրատէսի ժամանակներից առաջ արգելեցին Հոմերոսի երկերից մի քանի տեղերը: Պլատոն որոշ ծրագիր տուց, որի մէջ առաջադրոււմ էր դասեակներին որ պատմւածքներին ու հէքիաթներին գլխաւոր տեղերը տան: Նա դիւցարանութեանը, Հոմերականներին, Հէզիոդին էլ խիստ վերաբերեց:—Հաովմացեցիները դերադասոււմ էին պատերազմական-պատմական գրքերը, իսկ քրիստոնէական առաջին դարերում բացառապէս իշխում էին աղօթքները, սրբազան պատմութիւնը և ընդհանրապէս կրօնական բովանդակութեամբ գրւածքները: Աւելի ուշ այդ շրջանը մտան լեգենդները և 1406-ից իսկական մանկական գրքերը Վերանորոգողութեան (ռէֆորմացիայի) շնորհով շատ շատացան այգալիսի գրքերը: Տասն ու վեցերորդ դարուց շատ ժողովրդականութիւն սկսեցին վաշիլել եկեղեցական դրամատիկական ներկայացումները և մանաւանդ զպրոցական կատակերգութիւնները: Ժողովրդական տարրն արտաշայտոււմ էր դէպի հէքիաթներն ու առակները տաճած սիրոյ մէջ: Տասնուվեցերորդ դարու կիսից շատ տարածւեցին նոյնպէս բարոյակրթիչ գրւածքները: Եւ ապա, ինչպէս յիշեցիք, XVIII դարու երկրորդ կիսից սկսեալ էր մի նոր հոսանք, երբ առաջին անգամ 1782 թ. Գերմանիայում «Մանուկների բարեկամ» մանկական հանդէսը հրատարակեց: Զայցմանի և ընկերներից յետոյ XIX դարի սկզբներում Հերգէրն այլ դիրք բռնեց իւր «Արեւիկան ընտիր պատմւածքներում»: Ապա մանկական գրականութեանը նպաստեցին Գերմանիայում Եակոբս, Խրիստաֆոր Ֆոն Շմիդտ և մանաւանդ Գրիմ եղբայրները: Վերջապէս ամենից շատ տարածւած էին Գ. Նիլսեցի, Ֆրանց Հոֆմանի երկերը, որ հիմաջ

թէլէ շատ հետևողներ ունեն, սակայն նոր քննադատութեան չեն դիմանում:

Փրանսիայում մանկական գրականութեան պատմութիւնը XIX դարի երկրորդ քառորդից առաջ չէ սկսում, բայց ներկայումս ամենահարուստներից մէկն է: Գոգրօ, Մարսել և Սէգիւր անունները կապած են մի ամբողջ շարք գլխաւորապէս բելլետրիստական տրտադրութեանց հետ 4-8 տարեկան մանուկների համար: Հետևեալ 8-14 տարեկան հասակների համար էլ նոյն ճիւղից շատ կայ գրած: Այս երկրում աւելի տարածւած են հին դասական երկերի թարգմանութիւններն ու փոխադրութիւնները և հին պատմութեան ժողովրդական ձևի վերածածները՝ գլխաւորապէս կենսագրական ձևով: Բոլորովին այլ տեղ է բռնում Ժւլ Վէրնը, որ հրատարակել է գիտական ֆանտազիաները յայտնի մանկական «Bibliothèque d'Education et de Récréation» հանդէսում, որոնք միայն մանուկների համար չեն նշանակւած:

Անգլիական գրականութիւնը հարստացաւ մանկական գրածքներով մանաւանդ դարուս կիսից: Այնտեղ հիմա գոյութիւն ունին մանկական գրականութեան ամբողջ ընկերութիւններ: Այս կարգի գրածքների մէջ գլխաւոր տեսակները բելլետրիստական ու կրօնական են: Աւելի մեծ հասակի համար (9-13 տ.) պատրաստւում են գիտական բովանդակութեամբ՝ պատմական, աշխարհագրական ու բնապատմական գրածքներ: Մասնաւոր ժողովրդականութիւն են վայելում Անգլիայում և առհասարակ Եւրոպայում Մոլէսորու ու Մաշն-Ռիֆ: Հարուստ է պատկերազարդ գրածքների բաժանմունքը մանկական բոլոր հասակների համար: Թարգմանականներից ամենից շատ հրատարակւում են (համարեա միշտ պատկերազարդ) Անդէրսէն, Գրիմ և Ռոբինզոն (փոխադրւած): Գիտական գրածքների հեղինակներից ամենաշատն են Կինդստոն: Վերջապէս յունական ու հռոմէական դասականների փոխադրութիւններով անգլիական մանկական գրականութիւնն ամենահարուստն է: Ամենից շատ յայտնի են Ջէրէ, Կենտ և Ստեֆէնսոն ուսուցչականների թարգմանութիւններն ու փոխադրութիւնները:

Դալով Ռուսիային, այստեղ մանկական գրականութիւնը սկսւում է Եկատերինա Բ.-ից (գլխաւորապէս հէքիաթներով) և Նովի-

կովի «Дѣтское чтение» հանդեսով: Նույն ընթացքով այս գրականութիւնը հասնում է XIX դարը, որի երկրորդ տասնամեակից սկսում են ըոյս տեսնել բնութեան հետ ծանօթացնելու նպատակով դրւածքներ և սրանց հետ բարոյակրթիչ ուղղութեան վերաբերեալները: Երեսնական թւականների վերջից գրականութիւնը ազգային բնաւորութիւն է կրում, իսկ 50-ական թւականների կիսից նրա մէջ տիրող հանդիսացաւ սէպարատիստ ուղղութիւնը: Զիստեակովի և նրան մասնաւորապէս հետևող Մակարովսկի պատմաւէթներում (По-вѣсти) շատ ասքի է ընկնում սենտիմէնտալ—գիղականական տարրը, որ բնորոշում է նախկին ժամանակների պատմաւէթները: Ժամանակակից մանկական գրականութիւնը ծանօթացնելով պատմական, աշխարհագրական և բնապատմական գիտելիքների հետ՝ անտես չէ առնում միևնույն ժամանակ սոցիալական և կրօնական—էթիկական տարրերը: Ժամանակակից աւելի յայտնի մանկական գրողներն են՝ Ալենարիուս, Աննենսկայա, Կոտ Մուրլիցկա, Զաստրիմսկի, Կրուզով, Մուսո-Վալու, Վ. Օսարոգորսկի, Պաւլովիչ, Ռազին և այլն: Մանկական գրականութեան ամենաշանաւոր երեւոյթն էր մանկական հանդեսը: Հիմա հրատարակում են «Досугъ и дѣло», «Дѣтское чтение», «Задушевное слово», «Игрушка», «Миръ божій», «Родникъ», «Семейная библиотека»—Պետերբուրգում, և «Дѣтскій отдыхъ», «Дѣтская помощь» ու «Малютка»—Մոսկւայում:

Իսկ մեզանում այս գրականութիւնն սկիզբ առաւ Թարգմանականով՝ արեւմտեան հայերի և գլխաւորապէս Վենետիկի Մխիթարեանների շնորհով: Բայց ինչպէս որ նրանք խոյս տալ չկարողացան կեղծ դասական ուղղութիւնից, այնպէս էլ չկարողացան ազատ մնալ կեղծ-մանկական գրական ազդեցութիւնից, մանաւանդ որ վերին աստիճանի տեղեկնիօզ կրօնական-բարոյական ուղղութիւնն ամենից շատ համապատասխան էր թւում այս միաբանութեան ոգուն.—թէ ինչ սահմանափակ ընթացք ունեցաւ դեռահասների գրականութիւնը մեր կեանքում, այդ կը տեսնենք իւրաքանչիւր տեսակին վերաբերեալ հաւաքներում, ուսկից կ'երևայ թէ մինչև հիմա որ մասնաճիւղերն են մեր ուշադրութիւնը գրաւել, ինչ ենք արել և ինչ պիտի անենք, եթէ ցանկանում ենք որ այս

գրականութիւնը մեզանում էլ բազմակողմանի մշակութեան հասնի, առանց որին անհնարին է մեծ ազդեցութիւն սպասելը: Առժամանակ այստեղ այսքան կարելի է ասել, որ Կովկասեան հայերիս նորագոյն թարգմանական և ինքնուրոյն մանկական գրականութիւնը¹⁾ ոչ միայն աւելի հարուստ է մեր արեւմտեան հայրենակիցների արտադրածից, այլ և աւելի հասուն քննադատութեան պտուղ է, թէև սակաւ չէ պատահում, որ անաչառ քննադատութիւնը մասնացոյց է լինում անխորհուրդ գրածքների վրայ:

Ա.

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ձեռացելով մանկական գրականութիւնը մի դար արդէն գոյութիւն ունի,—կարդում ենք նոյն հանրազնութեան,—կարծիքները նրա նշանակութեան մասին շատ տարբեր են եղել և են: Ռուսոն ընթերցանութիւնը մանկական հասակի համար պատիժ է համարում և միայն բացառութիւն էր անում Ռոբինզոնի ու մասամբ հին դասականների համար: Բէլինսկին ասում է, որ մանուկների բուռն ընթերցանութիւնը մեզ չպէտք է ուրախացնէ. նա մանկան մէջ զարգացնում է Ֆանտազիան ոգու այլ ընդունակութիւնների հաշուով, իսկ դրանից կարող են անշահ ցնորամիտներ դուրս գալ: Մինչև 12—14 տարեկան հասակը նա առաջարկում է մանուկներին ռէալական ուղղութեան նիւթեր տալ, իսկ այնուհետ միայն պատմածքներ (պովեստ) և վէպեր: Ռուսական մեծ քննադատին համաձայն են Պիսարե ու այլ հակառակորդները:

Քայց մանկավարժների մեծամասնութիւնը կանոնաւոր կերպով կազմակերպւած մանկական ընթերցանութեանը բարձր նշանակութիւն է վերագրում: Հերբարտն ընթերցանութիւնը անհրաժեշտ և համարեա թէ կրթութեան անփոխարինելի օժանդակ միջոց է համարում: Համակարծիք են նրան Բենէկէ, Ռոզենկրանց, Կարլ Շմիդ և այլն և ուշագրութիւն են դարձնում այն հանգամանքի վրայ, որ ընդհանուր գրականութեան մէջ մանկան փնտաւար և անհաս-

¹⁾ Որի համար անշուշտ կարևոր տեղ է բռնում «Աղբիւր» մանկական պատկերազարդ ամսագիրը: ԾԱՆ. ՄՈՒՐՃԻ ԽՄԲ.

կանալի տարրեր կան: Ամենից շատ տարածայնութիւն կար հէ-
քիաթների նկատմամբ՝ նոյն իսկ մանկավարժների շրջանում: Այս-
մասին՝ պատկանեալ հատուածում:

Դեռահասները ուսումնական հասակում երկու տեսակ ընթեր-
ցանութեամբ են պարապում: մինը ծառայում է իբրև լրացուցիչ
տարր աւանդած առարկաների, իսկ միւսը բոլորովին անկախ դիրք
է բռնում: Առաջին կարգի զրքերն առաջարկում է ուսումնարանը
որոշ ծրագրով, իսկ երկրորդ կարգինը ծնողները, բարեկամներն ու
իրենք աշակերտներն են ընտրում: Ի հարկէ ուսումնարանը կարող
էր իւրաքանչիւր դասարանի և նոյն իսկ անհատի պահանջներն էլ
հաշի առնել, բայց դեռ գործն այդպէս խիստ կազմակերպւած չէ,
կրթական հաստատութիւնը իւր միացն ընդհանուր ծրագիրն է
առաջ տանում: Սակայն և այնպէս անհատական ձգտումները դե-
ռահաս ընթերցողի մէջ հետզհետէ զարգանալով կենտրոնանում են
ընթերցանելի նիւթերի որոշ շրջանում և այսպիսով զբաղան որոշ
մասնաճիւղի համար հարցասէր պատանիներ են կեանք մտնում: Թէ
որքան մեծ է այս ազատ և բնական ձգտման համապատասխան
ընտրած ընթերցանութեան ազդեցութիւնը այդ ցոյց են տալիս
շատ երեւելի անձերի կենսագրութիւնները, որոնք որքան որ սա-
կաւ են յիշատակում ուսումնարանի զարգացուցիչ նշանակութիւնը,
այնքան էլ աւելի յաճախ տեղեկութիւններ են տալիս այդ ընթեր-
ցանութեան գործած խոր ու անջինջ տպաւորութիւնների մասին:

Նայելով դեռահասների զարգացման աստիճաններին՝ ընթեր-
ցանութեան նիւթեր մատակարարելիս սովորաբար երեք փոփոխւան
շրջաններ (ֆազիսներ) են ի նկատի ունենում. առաջինում լոկ
զւարճ սլիքը, երկրորդում նաև հրահանգութիւնը (խրատ ու գիտե-
լիք), իսկ վերջին շրջանում՝ գլխաւորապէս հրահանգութիւնը:

Նախադպրոցական հասակում մանաւանդ գունատիւ պատկե-
րազարդ գրքոյկներով մանուկներին զբօսալի հրահանգիչ նիւթեր
մատակարարելը նպատակադարմար գործ է և մանկապարտէզի ծրա-
գրին համապատասխան է, որ պահանջում է գոյների ու ձևերի
մասին գաղափար տալը, միտք ու ճաշակ զարգացնելը: Բայց այս-
տեղ էլ լոկ զւարճալիքը կարող էր անյադ պատկերասիրութիւն
առաջացնել մանկան մէջ, որը մէկը չհասկացած՝ հարևանցի դի-

տելով երկրորդին է անցնում և ապա այսպէս՝ հետևեալներին։ Մտողներն ու զատիարակները, եթէ կամենում են որ այս պատկերներն օգտակար լինեն, պէտք է բացատրու թիւներ պահանջեն մարդկանց, կենդանիների ու նրանց արտայայտութեանց վերաբերալ։ Սովորաբար պատկերների տակ մի քանի սող արձակ կամ չափական բացատրութիւններ էլ են դնում՝ զրագէտների համար, բայց լատ. պատկերը բացի պատմականից իսկապէս կարիք չպէտք է զգայ այդպիսի օժանդակութեան։ Երբեմն ընտիր բանաստեղծութիւնների միացեալ ազգեցութիւնով աւելի խոր զբացմունքներ են առաջացնում մանուկների մէջ և այդ, ի հարկէ, այնպիսի ոտանաւորների շնորհով, որ պատկերից էլ անկախ արժանաւորութիւն են ունենում։ Բայց աւելի շատ յաճախ երկու տարրերի մէջ աններդաշնակութիւն, նոյն իսկ հակասութիւն է առաջանում, և այսպիսով նսեմանում է սպասելի տպաւորութիւնը։

Եւ ահա՝ պատկերազրքերն՝ իբրեւ նախապատրաստական զբօսուցիչ նիւթ ներկայացնելով՝ կարծես վարժեցրել են մարդկանց յետագայ շրջանում զուտ ընթերցանութեան նիւթերին էլ նոյն աչքով նայել։ Առաջին տարիներում ուրեմն մեծ մասով մանուկներին գիրքը տալիս են իբրեւ ժամանակ անցկացնելու միջոց, իբրեւ զարճալիք, մի բան որ հասակաւոր մարդը պահանջում է իւր առօրեայ ծանր զբաղմունքներից չետոյ։ Սակայն մանուկների ընթերցանութեան խնդիրն այսպիսով սխալ հիմքի վրայ է դրւում, որովհետեւ նրանց պահանջները տարբեր են։ Անոնաւոր ուղղութեամբ դատարարակաժ մանկան Փիղիկականը պահանջում է որ նա մոտաւոր ծանրաբեռնութիւնից չետոյ հանգստաբեր զբաղմունքը խաղի մէջ որոնէ և ոչ թէ գրքի, որ այդ հասակի համար զւարճալիքից բարձր պէտք է լինի։ Սողջ մանկան մարմինը հասակաւորինի պէս ցերեկը հանգստեան պահանջ չէ զգում։ Բայց, ի հարկէ, ընթերցանութեան նիւթն այնպէս ծանր չպէտք է լինի, որ դասերի վրայ նոր բեռ աւելացնի։ Նա այնպէս պէտք է կազմաւորվի, որ զրաւիչ ձևով գեղազիտական ճաշակ ու ազնիւ զգացումներ զարգացնէ մանկան մէջ կամ ինչպէս մանկավարժութիւնն ասում է, այդ տեսակ «հարցասիրութիւններին» մղում տայ։

Ի հարկէ կրօնական զգացմունքն էլ մարդուս ներքին աշխարհի

լրացուցիչ մասերից մէկն է. բայց բեւեռորիստ հեղինակը չպէտք է կրօնական դիտաւորութիւններով ղեկավարւի: Մարդկային ազգի ազատութեան կարիքը Քրիստոսի անձնազոհութեամբ կարող է էպիկական բանաստեղծութեան նիւթ դառնալ, բայց այս չի նշանակում թէ, ինչպէս շատ կեղծ գրողներ անում են, ամեն բանում պէտք է Աստուծոյ մատը տեսնել: Ամեն քայլափոխում մանուկ հերոսը չպէտք է աղօթասէր պառաւնների դերը կատարէ, աղօթքը չէ կարող նրա կեանքի կենտրոնական ձգտումը ներկայանալ: Կրօնական-բարոյական տենդենցիայով առաջնորդող հեղինակներն առհասարակ գործող անձերը բաժանում են անանցանելի խորխորատով՝ մի կողմից առհասարակ մարմնացեալ հրեշտակներն են կանգնած լինում, միւսից՝ լիակատար հրէշները: Բնական կեանք վարող մանուկները գործ չունին նրանց գրեթէ անհասանելի մէջ: Բայց ի հարկէ, չենք ուզում ասել, որ մի համակրելի անհատին պէտք է բռնի կամ շինծու կերպով անպատճառ տգեղ յատկութիւններ էլ վերագրել, եթէ պատմածքի ոգին այդ չէ պահանջում:

Այսպէս ուրեմն գալիս ենք այն եզրակացութեանը, որ լեռահասների ընթերցանութեան բովանդակութեան համար ի նկատի առնւած երեք շրջանները, որոնք իբր թէ բղխում են այդ ընթերցողների զարգացման աստիճանների պահանջներից, բնական չեն և հետեւաբար անհիմն են: Ընդհակառակն այդ ընթերցանութիւնը պէտք է իւր թեթեւ ձեւով հանդերձ լուրջ լինի, որպէս զի մանուկը զգայ, որ նրանից բեղմնաւորւելով կազդուրւում են իւր մտաւոր ոյժերը, որ նա անհատնում ուրախութեան աղբիւր է: Ընթերցանութիւնը որովհետեւ քաղցրաւենի չէ, ուստի չէ կարելի համոզանել. նա որոշ չափով աշխատութիւն է պահանջում, իսկ քաղցրը՝ կեկ գրեթէ անհասանելի ընտելացածի մէջ միայն զգանք է առաջացնում դէպի ամէն մի լուրջ ուսմունք: Տարաբաղդաբար զեռահասները հասակաւորի պէս քննադատական հայեացք չունին, նրանց հոգին հասարակապէս ընդունում է և՛ ընտիրը և՛ կեղծը, միայն թէ հետաքրքրական բան լինէր: Իսկ շահագրգռելու արեւստին, ինչ ասել կ'ուզի որ, շատ հմուտ են Վաբերիկաւորներն՝ ռեկլամասէր արտադրիչները, քանի որ ծնողներին մոլորեցնելու և մանուկների թոյլ կողմերի վրայ ազդելու համար նրանք ոչ մի միջոց անթոյլատրելի չեն

համարում: Վերջին կէտի վրայ աւելի մանրամասն կը խօսենք գըրքերի, տարածման և առանձնապէս քննադատական տեսակէտներին վերաբերեալ յօդաւորներում:

Բ.

ԴԵՌԱՀԱՍՆԻ ՈՒ ՀԱՍՆԱԿԱՒՈՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ժողովուրդը, քաղաքակրթական ինչ աստիճանի վրայ կանգնած էլ լինէր, առանձին բեւեարիստիկա չէ պահանջում, այլ ցանկանում է ընտիր երկերը խկութեամբ վայելել: Այս ցոյց է տալիս ժողովրդի ընթերցանութեան զործի ուսումնասիրութիւնը, և միևնոյն ժամանակ տպագրւածքանում է, որ ժողովրդական ու մանկական գրականութիւնները իրար խառնելն էլ սխալմունք է: Այս հիմնական տարբերութիւններն առաջանում են դեռահասի ու հասակաւորի իմացութեան ու զգացմունքների զանազանութիւններից: Թէև փորձաքան է, որ հասակաւորը առանց հաճոյքի չէ կարգում նաև մանկական բեւեարիստական ընտիր գրւածքները, սակայն միայն առժամանակ ու սահմանափակ չափով: Գեղեցիկ հէքիաթները, դիւցազներգութիւններն էլ մեզ կարող են հիացում պատճառել, բայց մեր միտքն ու զգացմունքներն առժամանակ միայն կարող են կանգ առնելով զարձանալ այդ կախարդական աշխարհների նկարագրութիւններով, որովհետև հասակաւորներս աւելի իրական կեանքի, մեր սիրտն ու հոգին անմիջապէս տոգորող երևոյթներ ենք պահանջում, մեր բարձր ձգտումներին համապատասխան իդէալներ ենք որոնում: Հասակաւորն աւելի խոր է զգում քան մանուկը ոչ միայն այն պատճառով, որ վերջինիս իմացութիւնն ու զգացումները տակաւին քիչ են զարգացած, այլ և այն պատճառով, որ նրա կամքը դեռ թույլ է: Բայց մինչդեռ հասակաւորի ու դեռահասի իմացութեան տարբերութիւնը լոկ աստիճանական է, նրանց զգացումները զանազան են նաև տեսակներով: Սրինակի համար սեռական տերը, որ այնքան հզօր դեր է կատարում մէկի կեանքում, միւսին դեռ մի անծանօթ աշխարհ է. հայրենասիրութիւնը և համաշխարհային վիշտը, որ գերմանացիին Weltshmerz բառովն է արտայայտում, դեռ չի շարժում մանկան կեանքը, իսկ միասիական նրա համար աւելի էլ մոտ է ահա սանկի աշխարհ է: Այս զգաց-

մունքները մանկական զրտիսնութեան մէջ կարող են միայն պատեհ առիթներով միւսներին չարակից երևան գալ՝ իբրեւ պատահական նախազգացումներ, հետեւաբար նրանք չեն կարող մանկական գրեաճքի մէջ ոչ միայն իբրեւ հիմնական շարժիչ (մոտոր) ծառայել, այլ և քիչ թէ շատ նշանաւոր դեր կատարել:

Մանկան ու պատանու ոգին առանձին սիրով ու գուրգուրանքով կապուած է անլուր իրողութիւնների ու չափազանց չնաշխարհիկ երևոյթների նկարագրութիւնների հետ: Նրա վառ երեւակայութիւնը հաշուում է առասպելական ամէն տեսակ մտացածին կացութիւնների հետ, ոչ մի բան նրան անբնական չէ երևում: Գլը-լաճքի նիւթական կողմը նրան աւելի է զբաւում՝ քան զեղարեւտականը, նրա սրտին շատ աւելի հաճելի են կեանքի արտայայտութեան մանրամասն նկարագրութիւնները և ոչ թէ բնութեան գեղատեսիլ կամ խորհրդաւոր պատկերները: Այս պատճառով էլ Ռոբինզոնը նրա սիրելագոյն դիրքն է, որի հեղինակը միւսնոյն ժամանակ ամէն բան անպիտան պարզ ու բնական կերպով է նկարագրում, որ հէնց հաւատացած ես լինում, թէ այլ կերպ չէր էլ կարող պատահած լինել: Գեոհանասին աւելի դաւում են գործող անձի գրութեան, կացութեան, վիճակի նկարագրական կրկնութիւնները, նրանց միակողմանի պատկերացումը, որովհետեւ այդ ընթերցողը զեռ անպատրաստ է խորամուխ լինելու գործողութիւնների բաղմակողմանի շարժաւիթների ու հանգոյցների մէջ: Եւ մինչդեռ մի կողմից արկածալի ճանապարհորդութիւններն են գեոհանասի սիրտն ու հոգին հմայում, միւս կողմից էլ առօրեայ կեանքի երևոյթները հասակաւորների և մանաւանդ մանկական աշխարհից նրա ընթերցանութեան սիրելի առարկաներն են դառնում: Անհրաժեշտ չէ որեմն, որ գեոհանասի ընթերցանութեան նիւթերն անպատճառ մանկական կեանքից առնւած լինեն. ոչ, մեծերի մասին էլ նրանք սիրով կարդում են, միայն թէ իրանց հայեցակէտներից նկարւած լինէին այդ պատկերները: Տարաբաղդաբար այդպիսի գրածքներ Կեոհազագիւտ են. գեոհանասների համար գերմանուհի բաղմաթիւ անշնորհ գրողների շարքից դուրս են միայն Իօհաննա Վայրի և Ելիզե Աւերդիկը, որոնց վերջինն այդ կերպով է նկարագրում հասակաւորների կեանքը:

Մանկական զրքերից շատ շատերը կամ ուսուցչական շրջանից ևն հրատարակած և կամ թէ չէ՝ նոյն բարոյակրթիչ տենդէն-ցիայով են կազմւած: Այնպէս որ ամէն մի գրւածք և նոյն իսկ ամէն մի գործողութիւն ու արարմունք անհրաժեշտօրէն ու անմիջապէս իւր վարձահատու թիւնն ու պատուհասն է. դռնու՛մ: Եւ անսայս շկույթի փոքրիկ ընթերցողների համար կիսատ մնացած է համարւում զիրքը, եթէ այդ դատավճիռն ազդու կերպով չէ արտայայտւած: Բայց մի՞թէ այս հայեցւածքն այդպէս բուռն կերպով բղխում է այս ընթերցողների բնական ձգտումներից, մի՞թէ այդ բարոյական սկզբունքների խիստ գործադրութիւնը այդպէս զգալի սահանջ է այդ տնայների ներքին աշխարհում: Ա՛յ. իհարկէ, ուսումնարանն ու քաղաքակիրթ ընտանիքն է վարժեցնում, պատուաստում այդ դաշափարները. եթէ ոչ՝ մանուկների կեանքը, որ նման է մարդկային քաղաքակրթութեան նախնական վիճակին, այդպիսի իդէալական խիստ սահանջների շրջանից դեռ դուրս է: Բայց այս միակողմանի դիտողութիւնն ու վերաբերմունքը շատ վնասակար է բանաստեղծութեան գոյութեանը, երբ բարիքից ու չարիքից զատ ուրիշ բան չորոնւի ու չտեսնւի մի գրւածքի մէջ: Բանաստեղծութեան թեւերն էլ կարծես կտրատում են ու վանդակի մէջ դնում նրան, ստիպելով այդքան սահմանափակ պայմանների համակերպել: Արդէն փորձը ցոյց է տւել, թէ այդպիսի արտադրութեանց ազդեցութիւնն ինչպէս աննշան է լինում. սովորական երեխան այդ նկարագրւած մարմնացեալ հրեշտակներն ու դէները չնաշխարհիկ էակներ համարելով միայն նրանց դիտում, նրանցով զգացւում է, բաց իւր և նրանց մէջ մեծ վիհ տեսնելով՝ նա շարունակում է իւր ճամբով գնալ: Միայն արտաքոյ կարգի զգայուն երեխան է, որ փորձում է դործով և աւելի հասունացած ժամանակ երբեմն նաև դրական արտայայտութեամբ հետևել համակրելի ուղղութեանը:

Երբ խօսք է լինում ընթերցողների հասակների մասին, հարկէ պարզել նաև մանկան ազատ ընթերցանութեան խնդիրը: Վճռապատշաճ, որ Գերմանիայում դեռ տնայների քննադատական գրականութեան մէջ ներկայումս առաջնակարգ դիրք է բռնել և իւր բազմակողմանի և սուր դիտողութիւններով թարմ ու անաչառ հոսանքի առաջնորդը կարող է համարւել, աւելի նպատակաշարմար է հա-

մարում այդ զբաղմունքը մինչև 12 տարեկան հասակը չետաձգելու նրա կարծիքով փոքրագույնների ընթերցանութիւնը կանխահաս պէտք է համարել, քանի որ նրանք դեռ անկարող են աշխատութիւնները հասկանալ և վերացական զաղափարներն ըմբռնել: Բայց ինկատի ունենալով որ այդ քան ետաձգելը շատ դժուար է, նա խորհուրդ է տալիս փութկոտներին այնպիսի հեղինակների գրած քննարկն դիմել, որոնք կարողացել են իջիւ մանկական աշխարհը և համակերպել նրանց հայեցածքներին: Այդ հեղինակներն են Ռոբէրտ Ռայնէք, Ռուդոլֆ Լէօլընշտայն, Հոֆման ֆոն Փալլերսլէքն, Էլիուս Լոմայէր, Տրոյեան, Քէոդոր Շտորմ և այլն: Մանկավարժական տեսակէտից, հիմնած մանկան բնական ձգտումներից առաջացած պահանջների վրայ, հէքիաթը 6—7 տարեկանին պէտք է զբաղեցնէ, իսկ Ռոբինզոնը՝ 7—8 տարեկան, զրոյցը՝ 8—9 տարեկան երեխան: Արդ՝ ինչպէս հաշտեցնել այս երկու հայեցածքները: Զէ որ 12 տարեկան հասակի տէր երեխաների ու աղջիկների համար այդ անփոխարինելի նիւթերը մասամբ կամ իսպառ կորցրած կը լինեն իրանց նշանակութիւնը, երբ նրանց նկատմամբ այդ ընթերցողներն արդէն քննադատական դիրք կը բռնեն, զեղարեւոտական ծաշակից էլ զուրկ լինելով, որ հիանաւ այդ ընտիր բանահիւսութեանց ճարտարաբանտ կերտածների վրայ: Արդեօք Վոլգաստն ինկատի ունի որ ծնողներն ու դաստիարակները պէտք է կարգան ու բացատրեն? Բայց այս մասին էլ նա խօսք չէ ասում, այլ խնդրական գրածքի ալ էջերում նա հարկ է զգում իւր կարծիքը մեղմելու. «Երբ համարեա իւրաքանչիւր նախադասութիւն մի կամ միւս նոր բառն է տալիս, ոչ մի դէպքում չէ կարելի թոյլ տալ, որ մանուկն ազատ ընթերցանութեանն անձնատուր լինի: Եւ ապա նա Դալմանի հետագայ կարծիքն էլ է մէջ բերում. «Մանկական գիրքը՝ փոխանակ մանուկների ետեւից ստրկաբար գնալով պէտք է որ անհասկանալի բաների մասին դեռ մի չաւելած էլ տայ՝ իբրեւ խթան: Հետեւաբար, կարծեմ, պէտք է այն եզրակացութեանը դալ, որ հէքիաթը իւր բովանդակութեան ու ոճի պարզութեամբ կարելի է շատ աւելի վաղ սկսել տալ, եթէ ոչ վեց, գէթ 7—8 տարեկան հասակում, ապա Ռոբինզոնը և ըստ կարգին: Բայց եթէ ազատ ընթերցանութիւնը վաղ սկսւի ու աստիճանաբար առաջ չդնայ, կարող

է գերմանացիների Lesewuth (= կարդալու կատաղութիւն, ընթերցամոլութիւն) ասած հոգեկան մի տեսակ հիւանդութիւնը առաջացնել, որ փոքր հասակից խելագարի նման անհամար գրքեր կլանել է տալիս և խանգարում տհաս ընթերցողի հոգեկան հաւասարակշիւութիւնը: Հետաքրքրական է, որ անգլիական գրականութեան մէջ էլ նոյնանիշ բառը գոյութիւն ունի և այդ մի՞թէ մանկական չափազանց ընթերցամոլութեան մի տեսակ ցուցմունք չէ այդ երկիրներում: Այդ մոլութեան հնթատուր եղած մանուկները մոռանում են խաղը, սնունդը, զբօսանքը և այս ընթացքով կարճ ժամանակում դառնում են ամեն բանից համոտն արած փքւած պատանիներ, վաղաթառամ խակամիտներ, որոնց զարգացման շրջանը կորստաբեր վիպամոլութեամբ է իւր աւարտն առնում: Հետաքրքրական կարող է լինել այստեղ մէջ բերել «Ժողովրդի ընթերցանութիւնը» գրքոյկիցս¹⁾ անգլիական քաղաքների գրադարանական վիճակագրութեան այն մասը, որ թոյլ է տալիս մեզ նաև գաղափար կազմել զանազան հասակներին յատուկ ընթերցանութեան ծարաւի յարաբերական չափի մասին: Այդ տեղերում 5—10 տարեկաններն սկսում են արդէն գրադարանից օգուտ քաղել. հետևեալ հասակում գործածութեան չաւելումը շատ աչքի է ընկնում, իսկ 15—20 տարեկան հասակներն ուղղակի կլանում են գրքերը, բայց հետագայ շրջանում այդ ծարաւը նոյն արագութեամբ էլ նւազում է²: Եւ ապացուցւում է, որ այսպիսի շատ վիճակագրական երևոյթներ ոչ միայն մանկական այլ և հասակաւորների աշխարհում որ և է երկրին առանձնաչատուկ բաներ չեն, այլ ընդհանուր են, որոնց օրէնքներով ղեկավարւում են զարգացումով ու տարածութիւնով միմեանցից բոլորովին հեռու ժողովուրդներ:

¹ Արտատպած Մուրճից, Թիֆլիս, տպ. Ռօտինեանցի, 1896.

² Նոյն երկրից մի մատենագրաւապետի նորագոյն տեղեկութիւնից երևում է, որ 7—12 տ. մանուկները մնալուն օգուտ են ստացել գրադարանից և որ նրանք տեական արժէք ունեցող գրականութիւնը գնահատել ու սիրել են սովորում: Իսկ ինչ վերաբերում է 5 6 տ. մանուկներին, պարզւած չէ թէ նրանք կարդում են թէ լսում:

ՊԱՆԴԻՍԻ ԵՐԳ

ԱՆԽՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ

Քիչ կը մնայ սիրտս պատուի,
Խելքս կորցնեմ, այ ակալէր,
Գլուխս առնեմ, սարերն ընկնեմ,
Գոռամ, բոռամ, ջան սարեր...

Թէ որ դարդս կը հասկնաս,
Ձէն տուր սաղիդ, ակալէր ջան.
Երևած սիրտս սաղիդ հետ լաց,
Դարդս հալի, հովանամ:

Տուն ու օճախս էն ինչ թողի
Քամու բերանն ընկայ ես,
Քարէ, արուն արցունք լացի,
Գնաց զարունն իմ սրտէս:

Ձարկ թեւերին, աշուղ ակալէր,
Երգերն անոնչ թող խօսան...
Ա՛խ, վաղուց է, որ չեմ լացեր
Էսպէս սրտանց, ակալէր ջան...

1898 թ. 5 Յուլիսի.

Օդեսա:

Ի՛նչ վան... սիրտս խոտ բաղչի պէս
Ծառով, ծաղկով կանանչ էր.
Սէրս էլ նազան բլբուլի պէս
Բաղումս անոնչ կը կանչէր:

Ինձի ըսիր, անխիղճ աղջիկ,
—«Ախպէր, բանդիդ մայիլ եմ.
«Ջան, բլբուլիդ ձէնին մեռնեմ,
«Հէ, չէ վարդմ' թող քաղեմ—»:

Ջահէլ էի, ջիւան էի—
Սե ալքերէն շատ խաբւայ.
Ըսի—բաղս մատաղ քեզի—
Անո՛ւշ լեզւէն զիլ խաբւայ...

Վախ, անգութը բաղս մտաւ,
Մ'իս, արորեց ծաղկունքս,
Վախ, բլբուլիս բռնեց, խեղդեց,
Կոտրեց նուռս, չինարս...

1898 թ. 2-ն Օգոստոսի
Օդեսսա

Լազարի՛թ երկինք խո՛րն ու անձէր,
Դարեր թռնիմ,—ափ չկայ.
Ջւարի՛թ աստղեր, խօսուէն աստղեր,
Դարեր թւեմ, չափ չկայ...

Ի՛նչ, երկինքը թա՛րմ ու անո՛ւշ
Բոյր չշնէր սրտիս մէջ,
Մ'իս, աստղերը այնքան քնքո՛ւշ
Երգ չասէին սրտիս մէջ:

Բայց ախ, հիմա երկինք դարձեր
Նման մռայլ քարայրին,
Աստղերն ամէն համր ու հանգեր,
Սիրոս, սիրոս—լո՛ւռ շիրիմ...

1898 թ. 12-ն Մարտի
Աղէքսանդրպոլ:

Վ. Գ. ԲԵԼԻՆՍԿԻ

(Մահաւան յիսնամեակի առիթով)

Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

VII

Երբ մարդ պատկերացնում է իր առաջ աչն պայմանները, որոնց մէջ պիտի գործէր Բելինսկին, զարմացած մնում է նրա հոգու ուժի առաջ: Ճնշումը ծանրանում է ամեն տեղ, անտարբերութիւն հասարակութեան մէջ, խոնարհ լռութիւն ժողովրդի խաւերում, գրականութեան մէջ դադափարազուրկ և անարժան մարդիկ, թանձր խաւար լայնածաւալ պետութեան ամեն անկիւնում: Աստիճանաւորը բռնել է բոլոր տեղերը, Վոլէյ, Վսեկին զու չոանլ—լսւում է վերեւից, ճիւղտը սուլում է աջ ու ձախ—և այդ բոլորի մէջ մի մարդ, որ յոյսը դրած նաև մի քանի իր նմանների վրայ, հաւատում է լաւագոյն ապագայի, կռիւ է սկսում տիրապետող խաւարի և անզգայութեան դէմ և այդ կռոււմ էլ հոգին աւանդում: Պէտք է միջ հոգի և հոգու մեծ կարողութիւններ, հարկաւոր է անօրինակ հաւատ դէպի սեփական ուժերը, ջերմ ու խորին սէր դէպի եղբայրը, որ մարդ կարողանայ չվհատել այդ տեսակ պայմաններում, այլ կռւի դուրս գալ, այն էլ՝ յաղթանակի յուսով տոգորւած:

¹⁾ Տես Մուրճ, 1898 № 6, 7—8:

Ի՞նչն է այստեղ զլիսաւորը. Բէլինսկու բնաւորութիւնը: Այդ բնաւորութիւնը կրօնական էր: Թող սխալ չհասկանան մեր միտքը: Կրօնական բնաւորութեան տէր է նա, ով հաւատ ունի դէպի իր գործը: Կրօնական մարդը ոչ միայն զիտէ մի բան, այլ և հաւատում է այդ բանին, նրա գիացածը այնպէս անկախ չի վաչր ընկած գիտակցութեան որ և է անկիւնում, նա սերտ կերպով կապկաւած է նրա ամբողջ էութեան, հոգեկան աշխարհի հետ: Կրօնական մարդը ամենից առաջ ամբողջական տիպ է, նրա հոգում բաժան դրութիւն չկայ. սիրան ու միտքը միացած են ու օժանդակում են իրար: Բանն այստեղ ձէւը չէ, այլ բովանդակութիւնը. ինչի էլ հաւատալիս լինի նա, միայն թէ այդ գործին նւիրւի իր ամբողջ հոգով, այդ գործից դուրս ոչնչանայ և նրա մէջ միայն ապրի—դրանով արդէն նա կրօնական մարդ է: Դրանք ջանքեր են պատմութեան մէջ, դրանցից են դուրս գալիս մարտիրոսները, դրանք են երկրի ազգը: Եւ միայն այդ մարդիկն են որ չեն վհատում, միշտ յուսառատ են և աննշկուն, չեն ընկճում ոչ բռնութեան, ոչ ճնշման, ոչ ուժեր ջլատող անտարբերութեան տակ: Բէլինսկին այդ տեսակ մարդ էր, այդ շատկութիւնները խոշոր չափով ունէր, և այդ կողմից նա իր մեծ ժողովրդի հաւատարիմ ներկայացուցիչը, ընդհանրացումն է, տիպն է:

Կրօնական բնաւորութիւններն էլ տեսակ տեսակ են լինում: Կան որ ստացածն ընդունում ու պաշտամունքի և հաւատի նիւթ են դարձնում առանց քննադատելու: Բէլինսկին այդ տեսակներից չէ: Այդպէս են այն մարդիկ. որոնց մէջ միայն զգացմունքն է խօսում. բայց Բէլինսկին նաև մեծ քննադատական խելք ունէր: Այդ խելքը աշխուրջ հսկում էր պաշտամունքի առարկայի ճշմարտութեան վրայ և միայն ճշմարիտ ¹⁾ լինելու պայմանով մի բան կարող էր նրա համար պաշտելի լինել: Արդէս մտածող Բէլինսկին ազնիւ մտածող էր: Ազնիւ մտածողն ամենից առաջ ինքն իրան չի խաբում. նա չի ձևանում ճշմարտութեան տէր երբ չի հաւատում իր ունեցածի ճշմարտութեան. բաւական է որ կասկածեց, նա չի մեռնում իր կասկածը,

¹. Ճշմարիտ ասելով մենք հասկանում ենք այստեղ ռուսաց правда խօսքը, որ միանգամայն նշանակում է թէ ճշմարտութիւն, թէ արդարութիւն

այլ ամեն կերպ հետամուտ է լինում՝ նրան և փնտռում՝ նրա աղբիւրը, կրկին ու կրկին քննութեան ենթարկում իր համոզմունքներն ու դաւանանքը և սխալ համարելուց յետո՛յ՝ կռիւ յայտնում՝ նրանց դէմ՝ և փնտռում նոր ճշմարտութիւն, որ բաւականութիւն տայ մոքին էլ, սրտին էլ, որ կարողանայ սնուցանել մարդու հոգին: Ահա թէ ինչու Բէլինսկին այնքան անգամ փոխեց իր համոզսունքները, նրանց հետ էլ՝ իր կռուքերը: Իսկ նրա անքուն գիշերները, սոսկալի տանջանքները, ջղաձիւն ցնցումները առաջ էին դալիս նրանից, որ ճշմարտութիւնը նա փնտռում էր ոչ որպէս սառը զիտնական՝ հետաքրքրութիւնից դրդւած, այլ որպէս կենդանի և զգայուն մարդ, որի համար իր փնտածը օգի չափ անհրաժեշտ է:

Լինելով զօրեղ բնաւորութիւն, նա պահանջ էր զգում արտաքին աշխարհում արտայայտելու. լինելով կրօնական բնաւորութիւն, նա իր արտայայտելը միշտ յարմարեցնում ու համաձայնեցնում էր իր դաւանանքին: Նրա խօսքն ու գործը երբէք բաժան չեն եղել: Ինչպէս անկեղծ էր իր մտածմունքների վերաբերմամբ, այնպէս անկեղծ էր և շրջապատի, ու ամենից առաջ՝ ինքն իր վերաբերմամբ: Նա չունէր այն շնչին ինքնասիրութիւնը թէ՛ ինչ ասել եմ՝ ասել եմ, թէկուզ սուտ լինէր իր ասածը և ինքն էլ լաւ իմանար իր ասածի սուտ լինելը: Ընդհակառակը ոչ ոք նրա մոքերին գուցէ այնպէս աշալուրջ չէր հսկում ինչպէս ինքը. և ինքն էր լինում իր սխալի առաջին ուղղողը, իր սխալ մոքերի առաջին հալածողը և այն էլ ինչ հալածող... պէտք է կարդալ նրա նամակներն ու տեսնել:.. Երբ 40 թ. նա փոխեց իր համոզմունքները՝ կռիւ սկսեց իր մի տարի առաջ յայտնած մոքերի հետ, առանց քաշելու թէ նրան ուրացող ու «շարժուն եղեգն» կը համարեն: Արջմիտ ու զգայուն ընթերցողը տեսնում և ոչինչ չէր ասում: ասելու էլ բան չկար: Բէլինսկին իր համոզմունքները փոխում էր ոչ թէ որ և է ստոր շահից ու անձնական, տշխարհային մեծ կամ փոքր հաշիւներից զրդւած, այլ ներքին, անդիմադրելի պահանջից մղւած. նրան փոխողը ճշմարտութիւնն էր, որին սիրում էր, երկրպագում, որի համար և ապրում էր:

Ահա և մի այլ խոշոր գիծ, այդ անշահասիրութիւնը՝ ուղղակի և փոխաբերական մոքով: Բարեկամների հետ նա կապւած էր զուտ

գաղափարական շահերով և այլ կերպ էլ չէր հասկանում բարեկամութիւնն ասած բանը. բաժանւում էր դարձեալ նոյն շահերից դրդւած. այսպէս նա չինայեց իր ամենասիրելի ընկերներից մէկին՝ Կ. Ակսակովին, երբ տեսաւ թէ նա ուրիշ մոքերի ու համոզմունքների տէր է. և վերաբերուեց դէպի նա աւելի խիստ, քան թէ արժանի էր այդ մաքուր գրական գործիչը: Կողմնապահութիւնը չի արատաւորել նրա գրիչը. նրա ոգևորութեամբ լի կարծիքները արդիւնք են խնդրին խիստ ջերմ վերաբերւելու: Միմի ժամանակ նա անդարձ տարւում էր այս ու այն սիրած գրողին և նրանից դուրս էլ մարդ չէր ուզում ճանաչել. բայց այդ բոլորը ջերմ սիրոյ և հետաքրքրութեան պտուղ են և իրանց հիմքով սխալ մոքեր ու կարծիքներ երբեք նրան չեն թելադրել:

Ասածներին հետ միանում է նրա զգացմունքի խորութիւնը, անկեղծութիւնն ու հարստութիւնը, մի խօսքով՝ սրտի լայնութիւնը և ամբողջացնում է նրա հոգեկան պատկերը: Պուշկինի մասին գրած յօդւածներից մէկում նա իւրատեսակ հասկանալով ու մեկնելով Գէօթէի այն ասածը թէ՝ «Խնչպիսի ընթերցող կ'ուզէի: Ես կ'ուզէի այնպիսի ընթերցող, որ ինձ, իրան ու ամբողջ աշխարհը մոռանար և ապրէր եմ գրքում», Բէլինսկին երևան է հանում իր հոգու հարստութիւնը: Նա ընդունակ էր մոռնել ամենքի դուրսն ամէջ, խորը կերպով համազգայ հեղինակին ու նրա հերոսներին, և այդ շատութիւնը դառնում է նրա աննման քննադատութեան հիմնաքարն ու յաջողութեան բանալին: Նա գեղարուեստի ստեղծած մարդկանց հետ ապրում էր ինչպէս կարելի է կենդանի մարդկանց հետ ապրել, բառացի մոքով խնդում և տրտմում էր նրանց հետ, լաց էր լինում նրանց վրայ: Խնչ ասել կ'ուզի որ այդպիսի գրողը կարող էր ազդել ժամանակակիցների վրայ և ազդում է մինչև այսօր այն մարդկանց վրայ, որոնց հոգին բաց է անկեղծութեան համար:

Իր այդ անկեղծութիւնով նա ոչ միայն բացառիկ և առաջնակարգ տեղ գրաւեց գրականութեան մէջ, այլ և դարձաւ քաղաքական հեղինակութիւն ընկերների ու ծանօթների շրջանում: Նա մի տեսակ մարմնացած խիղճ էր և մօտիկ մարդիկ քաշւում ու զգուշանում էին իրանց հոգու վատ կողմերը նրա առաջ բերելու: Վաչ

էր թէ նկատեց. այնուհետեւ սկսում էր հալածել, ջանդիմանել, կըշտամբել մինչև որ կարողանար ուղղել: Եւ զարմանալի չէ, որ այդ սուրբը ամենքի վրայ մեծ տպաւորութիւն և խորն ազդեցութիւն էր անում: Նիկրասովն, ասում են, հէնց որ նստում էր գրելու, նոյն իսկ Բէլինսկու մահից յետոյ, իսկոյն առաջը նկարւում էր մեծ տանջւածի պատկերը: Բարեկամ թէ թշնամի չեն կարողացել մինչև այսօր նրա վատն ասել, որովհետև նա վատ կողմեր չի ունեցել:

Այսպիսի մարդ է եղել ահա Բէլինսկին: Բաց նա ոչ միայն նշանաւոր տիպ է, այլ և շատ խոշոր հասարակական գործիչ: Մի քանի խօսք էլ այդ գործունէութեան մասին:

VIII

Նախ՝ կարդացէք այս նամակի հատուածը.

«Ռուսաստանում ես շատ եմ ման եկել. Բէլինսկու անունը յայտնի է ամեն փոքր ի շատէ մտածող երիտասարդի, ամեն մարդու, որ թարմ օդի կարիք ունի և խեղդւում է գաւառական կեանքի հոտած ճահճի մէջ: Նահանգական քաղաքներում չկայ մի գիմնաղի ուսուցիչ, որ անգիր չիմանայ նրա նամակները Գոգոլին... Մեր փրկելովը Բէլինսկուն ենք պարտական, ասում են երիտասարդ ազնիւ մարդիկ գաւառում ամեն տեղ: Եւ իսկապէս գաւառում դուք հարկանց երկու դասակարգ կարող էք տեսնել. մի կողմից բառի իսկական մոքով աստիճանաւորներ, ժապաւէնի, խաչերի ու աստիճանների գերի, կալւածատէրեր, որոնք ատում են իդէօլոգներին և կապած են իրանց տիրական արժանապատութեան հետ՝ ճորտատիրութեան կողմից—դրանք ընդհանրապէս զգւելի են: Նրջում էք ձեր երեսը միւս կողմը և տեսնում էք ազնիւ երիտասարդներ, չարիքի և ճրնշման դէմ զայրացող, էմանսիպացիայի և ամեն տեսակ ազատութեան ախոյաններ, տոգորւած մարդասիրական գաղափարներով... Եւ եթէ ձեզ հարկաւոր է ճնշւածների ցաւերին ու դժբախտութեան ցաւակցելու ընդունակ ազնիւ մարդ, եթէ ձեզ հարկաւոր է ազնիւ բժիշկ, ազնիւ քննիչ, որ պատրաստ է կռիւ մոնեխու, գաւառում դրանց փնտռեցէք Բէլինսկու հետևողների մէջ ¹⁾»:

¹⁾ Русск. Мысль, 1898 թ. май II, էջ 63.

Նամակի գրողը Բէլինսկու նախկին ընկերն է՝ Կ. Ախակովը, գրում է իր հօրը 1856 թ. աշխինքն ութ տարի Բէլինսկու մահից յետոյ: Հաւատացող մարդը կարողացել է սկզբնական անձեւ զանգուածին կերպարանք տալ, կարողացել է իր շնչով կենդանացնել անտարբերութեան անապատը և երկու դասի վերածել հասարակութեան: Նա կարողացել է գրաքննական անտանելի պայմաններում իր ազատարար գաղափարները զգացմունքի թափով մտցնել իր ընթերցողների մէջ. նա անուղղակի կերպով հասել է իր նպատակին, կարողացել է զգալի դարձնել շրջապատող կեանքի անկատարութիւնը, կարողացել է մարդասիրական գաղափարներ տարածել և զգացմունքներ պատւաստել ու կարեւոր և անհրաժեշտ համարել տալ կեանքի վերակազմութիւնը: Զարմանալի էին այն ժամանակեայ գրողներն ու ընթերցողները. նրանք կարողանում էին հասկանալ իրար, թէ և անուղղակի ձևով: Ինչ որ ազատւում էր «կէտ ձկան փորից»՝ գրաքննական ատեանի ձանկերից, անշուշտ էր ազդում. իսկ ուղղակի խօսքերն էլ, արտայայտւած իր նմանը չունեցող թափով, Գոտոլին գրած նամակները բերին: Զպիեցէք նրա անմիջական ազդեցութիւնը. «չկայ մի ուսուցիչ, որ անգիր չիմանայ Գոգոլին գրած նամակները»!.. Բայց նրա գործը այս անմիջական և մօտ ազդեցութիւնը չէ միայն:

Բէլինսկին իր գործունէութեան ընթացքում գնահատութեան ենթարկեց ոուս գրականութեան ամբողջ անցեալը՝ սկսած Լոմոնոսովից մինչև նոր գրողները: Առաջին անգամ հասարակութիւնն առիթ ունեցաւ իր գրողների մասին այնպիսի կարծիքներ լսելու, որոնք հիմնւած են ոչ թէ անձնական ճաշակի, այլ ջայտնի տեսակէտների վրայ: Այսպիսով՝ գրական երևոյթներն առաջին անգամ համակարգութեան տակ ընկան, առաջին անգամ ոուս գրողները լսեցին և հիմնաւոր կերպով գնահատեցին թէ իրանց պատմական նշանակութեան և թէ գեղարեստական արժանիքների կոշմից: Յոյց տրեց թէ ով ինչ նոր ուղղութիւն ու զգացմունքների աշխարհ է բերում, ով ինչ ազդեցութիւն է ունեցել յետագայ գրողների վրայ, ինչ փոփոխութիւն ու ազդեցութիւն է կրել գրականութիւնն ինքը և ինչ պատկեր ունի ներկայումս: Այս բոլորը, որ այժմ արդէն մտածէ ամեն թէ մեծ, թէ փոքր՝ գրականութեան ձեռնարկների

մէջ, աւանց յիշատակելու իհարկէ թէ ով է այդ կարծիքների առաջին յայտնողը, 30.40-թթ. նորութիւններ էին և մեծ ներգործութիւն ունեցան ընթերցող հասարակութեան մտային ու բարոյական զարգացման վրայ: Բէլինսկին կարողացաւ ճանաչեցնել տալ իր ժամանակակիցներին նրանց գրական՝ ուրեմն և՛ հոգեկան արտայայտութիւնների անցեալը, կապել նրանց իսկական և զիտակցական երախտիքի ու յարգանքի կապերով այդ անցեալի հետ, և տարածեց բազմաթիւ առողջ մոքեր գրականութեան մասին ընդհանրապէս և ռուս գրականութեան մասին մասնաւորապէս:

Գնահատելով անցեալը, նա աչքից երբէք բաց չէր թողնում ներկան և միշտ առաջինն էր, որ նկատում էր նոր գրողի երեւալը և գնահատում նրան ու նրա երկը: Առաջին անգամ նա էր, որ Լերմոնտովին, նրա մի անստորագիր քերթւածքի համար՝ անւանեց շատ խոշոր տաղանդ. նա էր, որ նոյն պայմաններում կարողացաւ ճանաչել Տուրգենևի տաղանդը. նա էր որ առաջին անգամ գնահատեց Կոլցովին, Նեկրասովին, Գոստոևսկուն, Գրիգորևիչին, Գոնչարովին. նա էր դարձեալ, որ հասարակութեան անորոշ ու մութ զգացմունքի վրայ հիմնւած ջերմ հետաքրքրութիւնը դէպի Պուշկինը, պարզեց ու որոշեց, ցոյց տւեց այդ վերաբերմունքի բանական հիմքերը և իր ընդարձակ յօլւածներով պարզեց նրա խնդիրները ու խնդիրները նրան ունենալը: Եւ նա կարողանում էր համոզել ու ընդունել տալ իր կարծիքները: Հարկաւ այդ բոլորն առանց կուրի չէր լինում. առաջին օրերից իսկ նա մեծ թւով հակառակորդներ ու թշնամիներ վաստակից, որոնք գնալով ջազմացան, նրա մոքերն ու կարծիքները հին ու նոր գրողների մասին շարժում էին շատ-շատերի զայրոյթը և մանր ու չնչին գրողների ատելութիւնը. և բոլոր դժգոհները յարձակուում էին նրա վրայ, մեծ մասն անվայել ու անպատկառ ձևերով: Բէլինսկին, կրակ կորած՝ մի կողմից իր հայեացքներն էր պաշտպանում, միւս կողմից իր հովանաւորութեան տակ անած գրողին և նրա իրաւացի հռչակը տարածում:

Բէլինսկուն ամենամեծ հոգսը պատճառեց և ամենաշատ վեճերի առիթ տւաւ ճնատուրալիստական դպրոցի պաշտպանելը, այդ

անունն էր տւել նա Գոգոլի բերած գրական ուղղութեան ¹⁾։ Դեռ այն ժամանակ երբ Գոգոլը մի անյայտ գրող էր և առաջին գիրքն էր հրատարակել, երբ դեռ նրան չէին զանազանում սովորական սրամիտ գրողից, Բէլինսկին բարձր, ի լուր ամենքի յայտնեց, որ Գոգոլը բոլորովին նոր գրական ուղղութիւն է բերում, նրան անւանեց նոր ուղղութեան հայր և փայլուն ու արգասաւոր ապագայ խոստացաւ այդ ուղղութեան։ Իրերի ընթացքը աւարացրաւ նրա ասածը։ Նոր ծրող ուղղութիւնը պաշտպանելով անձրևի նման տեղացող յարձակումներից ու ծաղրից, նա իր պաշտպանութեան բերդն ընտրեց այն արդիւնաւոր միտքը թէ գրականութիւնը պիտի մօտենայ իրականութեան, վերարտադրի այդ իրականութիւնը և թափանցի իրական կեանքի շահերով. և այսպէս պիտի լինի ոչ միայն գրականութեան գեղարւեստական ճիւղը այլ և նրա բոլոր ճիւղերը։ Գոգոլն իր գլխական երկերով, որ լոյս ընծայեց դրանից յետոյ, մանաւանդ Բէլինսկին իր օգեւորած քարոզով կարողացան քաղաքացիութիւն տալ նոր ուղղութեան, դրա հետ էլ մտքերի նոր հոսանքին և իրանց գաղափարներով ու սկզբունքներով կրթել նոր գրողների աճող սերունդը, որ մի տասնեակ տարւոյ ընթացքում հեղեղեց գրականութիւնը բորձր գեղարւեստական երկերով՝ թափանցւած նոյնքան բորձր հասարակական շահերով։ Թէ նրա հետ անմիջական շփում ունեցող գրողները և թէ յետագայում երեցածները, բոլորն էլ ծծեցին նրա քարոզները, անունդ առան նրանցից և այն օրւանից ոռւս գրականութիւնն ընթանում է նրա գծած շաւղով. նոյն իրականութեան հաւատարիմ լինելու քարոզն ամեն տեղ, նոյն հասարակական շահերի ջատագովութիւնը գեղարւեստի երկերում, նոյն «արւեստը կեանքի համար» ուսմունքը...

Նրա զօրած ուղղութեամբ գնաց ոչ միայն ոռւս գրականութեան վիպական ճիւղը, այլ և քննադատականը։ Նա ինքն առաջին ոռւս քննադատն էր և բոլոր յետագայ քննադատներն իրանց ախլի խոշորագոյն գծերով ու գրական դասանանքի հիմնական կէ-

¹⁾ Բէլինսկիյողները թող ուռւտական նստուրալիզմը չչփոթեն ֆրանսիականի հետ. դրանք տարբեր ուղղութիւններ են և մէջները սալ ու ձոր կալ։

տերով նրա նման են. այն օրերից մտաւ ոռւս քննադատութեան մէջ հեղինակի տւած կեանքի մասին խօսելը, նրա տւածի հիման վրայ կեանքը վերլուծելը: Ռուս նշանաւոր քննադատներն այդ ճանապարհից դուրս չեկան. դաւանանքները լայնացան, շահերը ճոխացան, բայց ոչ ոք այլ ևս չդաւաճանեց իրականութեան, ընդհակառակն՝ ամենքը հէնց այդ իրականութեան անուանից սկսեցին խօսել. սկսեցին բաղդատել գեղարւեստական երկի տւածն ու արտաքին՝ իրական կեանքը, սկսեցին որոշել հեղինակի յարաբերութիւնները դէպի այդ կեանքը, այդ յարաբերութիւնների հիման վրայ գծել հեղինակի հոգեկան պատկերը, այսինքն անել այն՝ ինչ վերջին տարիները, մանաւանդ սկսած 40-թւից, անում էր Բէլինսկին՝ գրական քննադատութիւնը սերտ կապելով հրապարակախօսութեան հետ և նրա իրաւասութեան տակ դնելով նաև ոչ գրական հարցեր ու շահեր:

Բայց դրանով էլ դեռ չի ստառւում Բէլինսկու կատարած դերը: Նրա ամենամեծ ծառայութիւնը այն պիտի համարել, որ նա արաւ ոռւս մտքի համար: Այստեղ նրա գործունէութիւնը երկու ճիւղ ունի. մէկը կարելի է մեծ մասով վերջացած համարել, միւսը կայ և դեռ շատ երկար կը մնայ: Մենք աչքի առաջ ունինք նրա յարաբերութիւնները սլաւեանասէրների հետ և նրա «անձնուորութեան» գաղափարը:

40 թ. ոռւս առաջաւոր մարդկանց բանակում՝ բաժանում՝ առաջ եկաւ և ծնունդ տւաւ երկու ուղղութիւնների՝ արեւմտական և սլաւեանասէր (սլաւեանոֆիլ), որոնց կռիւները բռնում են 40, 50 և աւելի թույլ՝ 60-ական ու յետագայ տարիները: Հիմնական տարբերութիւնները մինչև այսօր էլ այնքան պարզ որոշւած չեն. մի բան անկասկած է, որ այդ կռիւները մի նշանաւոր չափով արդիւնք են թիւրիմացութիւնների, որոնց պատճառները ժամանակի պայմաններին մէջ են թաքնւած: Գրաքննական խտուրթիւնները թույլ չէին տալիս որոշակի յայտնել մտքերը, այնպէս որ հակառակորդի մըտքերն ու իսկական համոզմունքները մնում էր տողամիջերով հասկանալ կամ ենթադրութիւններ անել: Այս հանգամանքը, միացած Բէլինսկու՝ հակառակ բանակի գլխաւորի՝ տաք ու բորբոք խառնւածքի հետ, մի շարք անհամաձայնութիւնների ու մրցումների առիթ

տւաւ: Երկու կողմի մարդիկն էլ գործում էին բարձր գաղափարական շահերից զրդւած, երկու կողմն էլ մաքուր ներկայացուցիչներ ունէր, որոնք ջերմ հայրենասէրներ էին, իրանց ժողովըրդին ծառայելու բռնուն ցանկութեամբ և լցւած:

Մի կէտ սակայն պարզւած է արդէ՞ս:

Այդ նշանաւոր տարիների յարուցած բազմաթիւ կարեւոր հարցերի շարքում, առաջին տեղերից մինն է բռնում հայրենի ժողովրդի զարգացման և այդ զարգացման ճանապարհի հարցը. այստեղ էր որ երկու բանականները տարբերում էին: Արեւմտականները կարծում էին, որ հայրենիքի ցանկալի յառաջադիմութիւնը կարելի է ապահովել միայն Արեւմտեան Ներսիսի այն հիմնարկութիւնների մոցնելովը, որոնք դէմ չեն ժողովրդի ոգուն, օգտակար են և արդարութեան վրայ հիմնւած: Սլաւեանասէրները ասում էին, որ Ռուսիան մի առաքելութիւն ունի կատարելու, որ նրան վիճակւած է մի մեծ պատմական դեր, որ նա պիտի երջանկացնի ամբողջ աշխարհը՝ նաև ձեռնացած ու փթած արեւմուտքին: և որ հայրենիքը պիտի զարգանայ ազգային այն հիմունքների վրայ, որ նա մշակել է դարերով և որոնք թէ օգտակար են և թէ արդար. ու մէջ էին բերում հին ռուսական վարչական ձևերը, ուր ժողովրդի ներկայացուցիչները խորհրդակցական մարմին են կազմում, իսկ թագաւորը իրազործող իշխանութեան ներկայացուցիչն է: Այս բոլորը սակայն այն ժամանակ այսպէս պարզ ու որոշ չէր ասւում. այն ժամանակ ամենից լաւ երևում էր վարդապետութեան խորհրդազգաժական կողմը, որից նա մինչև վերջն էլ չազատւեց:

Նկատելով այս ուղղութեան մութ ու միստիքական պատկերը և նրա պահպանողական բնոյթ կրելը, Բէլինսկին իր բոլոր ուժով գինւեց նրա դէմ և կարողացաւ իր մտքերին գերակշռութիւն տալ ընթերցողների աչքում: Արեւմտականների վարդապետութիւնը պարզ էր և հասկանալի, գործնական ու ցանկալի այն ժամանակ, որովհետև առաջարկում էր փոխառութեան դիմել այնտեղ, ուր ամենքը սովոր էին տեսնել լուսաւորութիւն և համեմատական բարօրութիւն: Մի կողմից մշակելով ու պարզելով իր մտքերն այդ մասին, միւս կողմից Բէլինսկին տւեց և գործնական ծրագիր, որ ավտփւած է Գոգոլին գրած նամակի վերջին տողերում. նա կարողացաւ մարդա-

րէի աչքով տեսնել կեանքի բռնելիք ապագայ ընթացքը, յետագան նրա դրած հարցերով զբաղւեց և զբաղուած է մինչև այսօր, օրինակ՝ ծեծի վերացումը: Մեծ քննադատը կենդանի է դեռ!...

Բայց նա կենդանի է ոչ միայն գործնական կեանքում, նա մինչև այսօր էլ իր շնչով տաքացնում է ռուս միտքը: Նա հիմք դրեց ռուսական ինքնուրոյն մտքի, այդ հիմքը դեռ նրա կենդանութեան ժամանակ իր մէջ առաւ Սովրեմեննիկ ամսագիրը, որ այնքան մեծ դեր էխաղացել մինչև 60-ական թւերը, իսկ 68-թւից ժողովրդային զայրուիչ ամսագիրը, որ միայն 80-թթ. դարարեց: Մարդկային անձնաւորութիւնն այժմ ինձ համար բարձր է ամեն բանից—ահա ռուսական մտքի կորիզը, որ արտայայտեց Բէլինսկու նամակում, այն օրւանից մարդկային անձնաւորութիւնը դարձաւ մի կենդան մտածմունքների և միևնույն ժամանակ մի չափ գնահատութեան, այդ աղբիւրը շատերին սնուցեց, աւելի ու աւելի յորդացաւ և մեծացաւ, այդ հացեացքը մտաւ ամեն տեղ, շատ մտաւոր մշակներ շահեցրին այդ թանկագին ժառանգութիւնը, ոմանք նրա դիտական հիմքերը տալով, ոմանք նրա վրայ յառաջադիմութեան տեսութիւն հիմնելով, սմանք գործնական ծրագիրներ կազմելով. այդ ուղղութիւնը ուղղակի զծով եկաւ և դարձաւ «ժողովրդասիրութիւն» (народничество) և շարունակոււմ է մինչև այսօր: Այդ մտքով են սնւել ու իրանցն էլ վրան աւելացրել այն բոլոր մարդիկ, որ մեծ են և լուսաւոր Ռուսիայում՝ Չեռնըշևսկի, Դոբրոլիւբով, Միխայլովսկի և այլն: Բէլինսկու հիմնական միտքը ամեն տեսակ փորձանքների յանդիպելով՝ ցոյց տաւ իր կենսունակութիւնը, ճշմարտութիւնն ու արդարութիւնը...

Ահա թէ ո՞վ էր և ինչ է արել այն մարդը, որի մահւան յիսնամեակը յարգանքով չիշեցին ու տօնեցին Ռուսաստանի բոլոր անկիւններում այս տարւայ մայիսի 28-ին:

Մենք հայերս նոյնպէս շատ ենք պարտական այդ մարդուն, մեզանից շատ շատերն են սնւել նրա և նրա յաջորդների մտքերից, լինելով ռուս գրականութեան սղգեցութեան տակ մեր թէ գրականութիւնը, թէ քննադատութիւնը և թէ նորահաս միտքը կրել է նրա ազդեցութիւնը: Միայն ռուսները չեն, որ պարտական են նրան. մենք էլ ենք շատ պարտական:

Կ Ո Չ

ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆԻ

Другъ мой, братъ мой, усталый, страдающій братъ,
Кто бы ты ни былъ, не падай душой.

Надсонъ.

Ընկեր իմ, թէև քեզ չեմ ճանաչում,
Բայց ով էլ լինես,
Թող խօսքըս հնչէ քո հոգու խորքում
Ձերմ աղօթքի պէս.
Ես քեզ կանչում եմ յանուն սրբազան
Իդէալներիդ,
Դձուրս եկ ասպարէզ, ցոյց տուր անասան
Կեանքը ճշմարիտ

Շուրջըդ գիշեր է, մարդիկ մոլորած
Իրար են անցել,
Եղբայր եղբոր դէմ՝ սիրտը քարացած՝
Կռիւ է բացել.
Կեանքը լցւել է մոլութիւններով,
Ձը կայ սրբութիւն,
Վերացել է սէր, և խիղճ ու գորով
Օտար են մարդունս

Ահա այն կողմում եղբայրը եղբոր
Խեղդում է դառով,
Կամ լեզի դարձնում նրա կեանքը բոլոր
Նենգամիտ խաղով:

Դու այդ տեսնում ես, և հոգիդ տանջւում,
 Յաւում է խորքից,—
 Բայց ինչո՞ւ, ասա՛ւ, դու ձայն չես հանում,
 Դիտում ես հեռից:

...«Ինչո՞ւ»... Մի խօսիր. դու չես կարօտել
 Երբեք օգնութեան.

Սիրտըդ ինչ անոյշ խինդով է լցւել,
 Երբ գտել ես այն...

Դու էլ ես թշւառ և օգնող չունես,
 Մի Բէք ես փնտրում.

Բայց երբ չը կայ այն, էլ ինչո՞ւ քաշես
 Եւ ապրես հեռում:

Քեզ են ըսպասում անթիւ թշւառներ՝
 Անվերջ յուսալով.

Գնա՛, ինչ անենք՝ քեզ կ'ուզեն լուտանքներ
 Անկուռ բերանով.

Նըրանք չը գիտեն՝ ինչ է փրկութիւն,
 Ինչ է արեւ-լոյս,

Բայց ըսպասում են տենչերով անհուն,
 Դեռ չէ մարել յոյս:

Վըշտերիդ վըրան անվախ բարձրացիր,
 Դարձրո՛ւ փըլատակ,—

Եթէ չես կարող, գէթ գաղտնի պահիր
 Նըրանց կրճքիդ տակ.

Երբ ձեռք կը մեկնես մթնում կորչողին,
 Նա չի խարխափիլ,

Հաւատա՛ն, նոր կեանք կառնէ քո հոգին,
 Էլ չես տառապիլ:

29 փետրուարի 1898 թ.

Մաշտաղա

ՀԻՒՄՈՒՄԱՓԱՅԼ ԵՒ Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

(Գրականական-քննական էտիւդ)

ԿԱՐ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ 1)

III

Ս. Շահազիզեանի «Լեռնի վիշտը» պոէման մի ուսանողական գրածք է. նրա առաջնորդող իմաստը շատ պարզ է. հայը տգէտ է, հարկաւոր են նրան ուսում և գիտութիւն. հայը չունի դպրոցներ և խելացի վարժապետ-դաստիարակիչներ, հարկաւոր են նրան կազմակերպւած դպրոցներ և իրանց վեհ պարտականութիւնը ծանուցող մանկավարժներ. հայ կնոջ ընտանեկան զիրքը ստորադրեալ է և ճորտացին, նա չի իմանում իր մայրենի լեզուն (?) ¹, հարկաւոր է բարեփոխել նրա զիրքը, տալ նրան ուսում. հայ կրօնաւորը անբարեխիղճ է և չի հասկանում քրիստոնէութեան վեհ էութիւնը. հայ հարստականը, «արծաթասէր» է,—հարկաւոր է բարձրացնել նրանց մտաւոր և բարոյական հորիզոնը լուսաւորութեան միջոցով մի խօսքով գիտութիւն է մաշք բարեաց, տգիտութիւն է ծնող չարեաց: Այս տարրական և համակրելի իդէան արծարծւում է զանազան վարիացիներով 'ի ղէմս վշտացող Լեռնի, որ գնում է հայրենիք ականատեսելու ազգացին իրերի դրութիւնը և ըստ կարեաց չափ զարմանելու հասարակութեան կարիքները:

¹) Տես Մարտ № 5. 7—8.—². Հարցականը բնագրինն է. ԽՄԲ.

Զարմանալի բան. դուք կարդում էք Վեռնի վիշտը՝ պօէման, բայց չէք վշտանում հերոսի հեա, չէք ոգևորւում նրա ճարտասանական տիրադներով: Նրա բարձր տոնը, նրա բարոյախօսական խրատները տպաւորութիւն չեն գործում. դուք լսում էք նրան մի ինչ որ սպասողութեան մէջ, դուք յոյսով էք, որ ձեր գրգռած զգացմունքը գոհացում կը ստանայ, — բայց իզուր. դուք միայն զարմանում էք նրա խօսելու վարպետութեան, սահուն և գունաւոր լեզւի վրայ, և չէք զգացւում: Ձեր առաջ կանգնած է մի հռետոր, որ վշտանում է հասարակական անկազմութիւնից, որովհետեւ վշտացողը աւելի հետաքրքրական է քան ուրախացողը: Երբ նա ուրախանում է բանի, նրան պակասում է ներքին կրակ, երբ նա արամծւմ է կամ սրտմտում, նրա հոգու այդ բացասական արտայայտութիւնը զուրկ է լինում կրքից և ոյժից: Նրա վիշտը բղխում է գլխից և ոչ սրտից: Որոշ կրթութիւնը, ժամանակին տիրող գաղափարները պատւաստել են նրան որոշ հայեացքներ, և նա, ունենալով խօսելու ձիրք՝ շահագործում է այդ ձիրքը առանց խոր համոզմունքի և զղացածութեան: Մեզ թւում է, որ այդ ճշգրիտ վիշտը մի «պողա» է՝ եւրոպական պողա՝ ասիական աստառով. նա, կարծես, դասագրքից է խօսում: Բանաստեղծը ծանապարհելով իր հերոսին դէպի հայրենիք՝ Միլի, Բայրնի, Շէքսպիրի հովանու տակ ռեկլամծւմ է նրա ծանապարհորդութիւնը. և այդ գրականական նշանակը (ВЫВѢСКА) յիշեցնում է մեզ իր ապրանքը գովող առևտրականին:

Վեռնը մի զիլետանո է, որ չի սեփականել եւրոպական քաղաքակրթութեան հիմքերը. նա սահում է ականատար մարդկանց թւերի տակ, գեղեցիկ գաղափարների մակերևոյթով, առանց գիտակցելու, որ այդ քաղաքակրթութիւնը անցել է ամենադժւարին ճանապարհներով և ձեռք է բերել դաժան աշխատանքով:

Վեռնը վշտանում է հասարակական չարիքներից, ուրեմն պէտք է կարծել, որ նրա առաջնորդող սկզբունքը քաղաքացիական պարտականութիւնն է, այն սրբազան պարտականութիւնը, որ դարուս քաղաքակրթութիւնը և քրիստոնէական ուսմունքը ջանում են դարձնել մարդկային կեանքի միակ ղեկավար ոյժ: Ի՞նչ է անում նա. կատարում է արդեօք մի գործ, որ կապ ունենար անձնական գոհաբերութեան հետ: Նա միայն զիտում է և զատում:

Մենք պատկառանքով ենք լսում Լևոնին, կարծելով, որ նա կ'աւետի մեզ նոր ձգտումներ և նոր վերաբերում դէպի շրջապատողները, կ'աւետի ոչ միայն խօսքով, այլ և գործով. մենք սպասում ենք, որ հայրենիքի ցաւերին ականատես երիտասարդը, որ վշտացող է ձեռնում իրերի դրութիւնից և շանթեր է արձակում հասարակական կեանքին տիրապետող տարրերի դէմ, այդ, ըստ երևութին, բոցավառվող երիտասարդը վերացական դատողութիւնից կ'անցնի գործի, բանաստեղծական ուսւառնումից կ'իջնի երկիրը և գաղափարի կենդանի զինուոր կը դառնայ. բայց մեր յոյսերը 'իդերե են ելնում: Լևոնը եկել է հայրենիք տոննաբանելու, նոր սերտած դասերը կրկնելու ազգայինների առաջ, լաւ գաղափարների սերմանիչ հանդիսանալու:

Ճշմարտութիւնը արծաթ չէ, որ առնես և տաս ուրիշին: Ամեն մարդ մշակում է իր գիտակցութեան մէջ որոշ համոզմունքներ. և սրանց հաստատ լինելը պայմանաւորւում է եւանդուն աշխատանքով գործնական կեանքում: Պատեփական բարբառումները և հայրենասիրական դեկլամացիան մի աններելի խաղ է իրելի դէմ բողոքող երիտասարդի համար, որ «ուխտել էր» գործունեաց քաղաքացի լինել: Այսպէս է հասկանում հերոսը իր քաղաքացիական պարտականութիւնները:

Չէ որ մեր առաջ կանգնած է մի Փրազեօր Չայլդ Հարդլի վերնազեքստով, որ արբում է իր ճառերի խորիմաստութիւնից, իր զուրեկան ձայնի հնչիւններից:

Լևոնները մտածում են միայն նրա մասին, որ իրանց մտքերը գեղեցկակազմ և ներդաշնակ լինեն և նրանց արտայայտող Փրազները կոկ և գեղեցիկ: Նոքա ներկայանում են մեզ բարձր ձգտումներով, և ոգևորւած ազնիւ հայեացքներով՝ մատնացոյց են տնում կեանքի անհարթութիւնների վրայ, կոկորդիլոսի արտասունքներ թափում, ախ ու վախ քաշում, հոգոցներ հանում, ճիչ և տղաղակ բարձրացնում առանց տեղից շարժւելու և մի փորձ փորձելու բարելաւել շրջապատողների կեանքը: Քննադատութեան պարտքն է գահավիժել այսպիսի տիպերին, ցոյց տալ, որ նրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ դարդակ Փրազեօրներ. կրիտիկան պարտական է մերկացնել այս ճոճուան և անբովանդակ տիպերի բարոյական սնանկութիւնը:

Գեղեցիկ ճառողների հոգեբանութիւնը նրանումն է, որ նրանք անկեղծ են յափշտակւում իրանց ճարտարութեան հոսանքով. նրանք ունեն վառ երևակայութիւն և ապրում են երևակայութեամբ, իսկ իրական կեանքում անգործ են: Վաչելու և գեղեցիկ խօսքը լիովին փոխարինում է նրանց համար ամեն մի գործ: Աւոնները ոչ միայն օգտաւէտ չեն, այլ և վնասակար. նրանք ազդեցութիւն են գործում շատերի վրայ, մանաւանդ անփորձների և չկազմակերպւած անհատների վրայ, յափշտակւում են իրանց փայլուն ընդունակութեամբ ճառախօսելու, զարթեցնում են սնափառութեան զգացմունք և կեանքում նպաստում են այնպիսի աիպարների առաջանալուն, որոնք գեղեցիկ խօսքը գերադասում են գործից, արւեստականը բնականից, բարոյախօսութիւնը կենդանի գործունէութիւնից: Եթէ Աւոնի ժամանակակից հայ տիկիներն ու օրիորդները լուսաւորւած լինէին և լսէին նրա փայլուն, ըստ կազմի, և յորդահոս խօսքը, նրա հրապուրիչ ձայնը, տեսնէին նրա խորհրդաւոր Զայլ-Հարուլեան զգեստը և Թախծալից դէմքը, վերջապէս, նրա բանաստեղծական գրաւչութիւնը, անշուշտ նրանք հիացած կը լինէին Աւոնից և, գուցէ, երկրպագէին նրան: Գեղեցիկ սեռը, կեանքից հեռու լինելով և քիչ ծանաչելով մարդկային բարդ հոգեբանութիւնը՝ հեշտութեամբ է ենթարկւում արտաքին փայլի ազդեցութեան, նա չգիտէ կեանքը, որովհետեւ նեղ է նրա ասպարէզը, ուստի աւելի լաւատես է, քան տղամարդիկ, և երբեմն չափազանց հաւատացող: Գեղեցիկ սեռը և երիտասարդութիւնը առհասարակ ունեն իրանց դարդերն ու ցաւերը, իրանց յոյսերն և անուրջները, որոնք խորը թաքնւում են նրանց սրտի մի անկիւնում: Կինը չունի ասպարէզ ընտանիքից դուրս և զուրկ է միջոցից հրապարակ հանելու իր մտաւոր և բարոյական ոյժերը: Երիտասարդութիւնը սրտի բաբախումով և մտքի լարածութեամբ հետեւում է հասարակական և գրականական երևույթներին: Երևակայեցէք մի րոպէ, որ Աւոնը իր գունաւոր գողտրիկ լեզւով խօսում է նրանց հետ, բողբոջում է կեանքի անկազմութեան դէմ, մտքի ու խղճի ազատութիւն է քարոզում, պաշտպան է հանդիսանում անպաշտպան կանանց ոտնակոխած իրաւունքների, բացասում է ու մտրակում. բնական է, որ հովանաւորւած գեղեցիկ սեռը պիտի հիանայ իր պահապան հրեշտակից և նւիրի նրան իր բոլոր

համակրութիւնները. բնական է նոյնպէս, որ և ողեղմայլ երիտա-
սարդները ազատամիտ ինտելիգենտի ճարտար լեզուից թուլած՝ առանց
քննական հայեացքի պիտի նւաճեն: Նրանք կը հաւատան Վեռնին
և կը սիրեն նրան այն բուռն և ջերմ սիրով, որով մենք սիրում
ենք մեր անուրջները, մեր յոյսերն ու իղէալները. նրանք կը մար-
մնացնեն Վեռնի մէջ այն բարոյական ոյժը, որով մենք մաքառում
ենք կեանքի դառնութիւնների դէմ, նրանք կ'երկրպագեն Վեռնին,
որ շարժել է նրանց ուղեղը, գրգռել է նրանց ջղերը և ցաւակցող
է երևում:

Բայց ինչ կարող է տալ Վեռնը այն մարդկանց, որոնց յափշ-
տակել է իր արտաքին փայլով և որոնց զգացականութիւնն է զըր-
գըռել: Զէ որ Վեռնները պարտական են կենդանի օրինակ լինել
իրանց հաւատացող ունկնդիրներին. նրանք պատասխանատու են թէ
հասարակութեան և թէ իրանց խղճի առաջ: Այո, այսպիսի ճար-
տարախօսները վնասակար են նրանով, որ զարթեցնում են անփորձ
սրտերը իրանց փայլի, անձնական հաճոյքի համար. բայց երբ հար-
կաւոր է լինում դէմ տալ ուշալական խռնդոտներին, իրագործել
քարոզած գաղափարները, նրանք չքանում են ասպարիզից, թող-
նելով միամիտներին յուսախաբութեան և դառն հիասթափութեան
մէջ. մինչդեռ լուրջ մարդիկ հէնց սկզբից ծանաչում են Փանֆա-
րոններին և, ըստ արժանեղոյն, գնահատում նրանց: Ով յաւակնու-
թիւն ունի զարթեցնել մարդկանց մէջ լաւագոյն բնազդումներ, նա
պիտի ընդունակ լինի բաւականութիւն տալ նրանց. ներկայ հա-
սարակական կազմի դատաւոր լինելը աւելի հեշտ է, քան բարեշի-
նել այդ կազմը ¹:

Բանաստեղծութիւնը դիւթիչ տպաւորութիւն է անում, երբ
նրա մէջ արտափայլում է հեղինակի կենդանի հողին, նրա յուզ-
մունքներն և ուրախութիւնները, նրա ներքին աշխարհը և սրան

¹. Պր. Կոուածագրի ալդ պահանջին մենք չենք կարող անպայման
կերպով ստորագրել. նա, ով կարող է «զարթեցնել մարդկանց մէջ լաւագոյն
բնազդումներ», — նա իրաւունք և պարտականութիւն ունի ալդ լաւագոյն
բնազդումները արթնացնելու, նաև բոլորովին անկախ այն բանից, թէ որ-
քան ինքը պիտի կարողանալ հասարակութեան արթնացրած պահանջնե-
րին բաւարարելիւն տալ: ՆՄԱՆ. ԽՆԻՅ.

ոչ թ մեծ կրակը, նրա տեմպերամենտը. երբ հեղինակը ներշնչում է իր համոզւածութիւնը թէ իր ստեղծած տիպարների և թէ ընթերցողների մէջ. հակառակ դէպքում, բանաստեղծութիւնը կորցնում է իր բարձր նշանակութիւնը և չի կարող առաջացնել բանաստեղծի և ընթերցողի մէջ փոխադարձ համակրութիւն:

Ս. Շահազիզեանը անկասկած ունէր որոշ հայեացքներ կեանքի վրայ. նա ուզեցել է իր գաղափարները անձնաւորել Վեռնի մէջ, գաղափարների, որ դուրս է բերել իր կրթութիւնից և «շիւսիսափայլ» ամսագրից: Նա պահանջ է զգացել ծանօթացնել հասարակութիւնը իր մտքի գործարանում վերամշակած նիւթերի հետ չանձինս Վեռնի: Մենք համակրում ենք նրա գաղափարներին, մենք համամիտ ենք նրան և թէ Վեռնին, բայց շահւում է արդեօք խաւար կեանքը բարեացակամների տեսական խորհրդակցութիւններից. բարեփոխում է իրականութիւնը առանց իդէական սպասաւորների և նւիրւած գործիչների: Զէ որ մենք զգուժում ենք այն բուրժուաներից, որոնք չունենալով ոչ մի իրական կապ բարձրարութեան և բարոյականութեան հետ, ցինիկաբար ճարտարում են էթիկայի և մեծ սկզբունքների մասին:

Ճշմարտութիւնը վերացական Ֆորմուլաների մէջ չէ. նա արտայայտւում է կենդանի անձնաւորութիւնների մէջ. եթէ մէկի քարոզը չի համապատասխանում նրա գործին, նա մեղանչում է ծըշմարտութեան դէմ: Վեռնը ճառում է և, կարծես, ոգևորւում լինի իր զուրեկան ձայնից. նա ատենաբանում է զարմանալի ինքնահաւանութեամբ և ինքը իրան առաջինը ծափահարում. նրա ընդհանուր Ֆրազները և հասկացողութիւնները կազմւել են նրա մէջ տեսականապէս, և ոչ կեանքի փորձերով: Մենք չենք տեսնում նրա աղիողորմ ճառերի մէջ զգացւած իդէա և անմիջական զգացմունք, նրա ողբի մէջ—արտասուք, իսկական թախծի նշաններ, այլ միայն գլխային դատողութիւն և հանդիսատեսի գիտողութիւն,

Վեռնը և նրա համակրող, մինչև իսկ պաշտող հեղինակը, նմանութիւն են բերում այն նւագածուի, որը դաշնամուրը դարձնում է երգեհոն և որը մասնների արագութեամբ ու վարժով դուրս է բերում զանազան դաշլալիկներ, իր արտաքին տեսնիկայի շնորհիւ սահում է կլաւիշների վրայով, բայց աւելի ոչինչ. մինչդեռ լուրջ

և մտացածին նւագումը պիտի կատարւի այնպէս, որ լսողներին պարզ երևայ նւագողի միտքն ու հոգին, երևայ կենդանի մարդը և ոչ լարւած մեքենան:

Բարոյական ուսմունքը և սոսկ քարոզը երբէք չեն նպաստել առաջիմութեան և չեն խաղացել ներգործական գեր ազգերի քաղաքակրթութեան մէջ: Բարութիւն, ազնւութիւն, ուսում քարոզելուց ոչ մի մարդ չի դարձել բարի, ազնիւ և լուսւորւած. բարձրացրէք հասարակութեան զարգացման աստիճանը, գործով մրցեցէք խաւարի հետ, տարածեցէք ուսում և գիտութիւն, այն ժամանակ ըմբռնելի կը լինեն բարին և ազնիւը, կը նրբանան մեր հասկացողութիւնները, կ'առաջադիմի հասարակութիւնը: Խրատը, քարոզը ոչինչ են առանց կենդանի օրինակի. ցաւակցել շրջապատողներին առանց փորձ փորձելու դարմանելու նրանց ցաւերը նշանակում է հասկանալ քարոզած գաղափարի վեհութիւնը և ապացոյց է, որ խօսողը չի հաւատում իր գաղափարի կենսունակութեան. դա նշանակում է աններելի խաղ բռնել գիտութեան ծարաւի, ազատ օդի և լոյսի կարօտ մի հասարակութեան հետ: Իրաւ է, իղէալները մեծ գեր են կատարում կեանքի մէջ. նրանք յեղափոխում են մտքերը, բայց միայն այդ գէպքում, երբ նրանց քարոզողները մարտնչում են, դառն փորձերի գնով պաշտպանում են իրանց դաւանանքը: Ինչ է անում Լևոնը. ինչո՞ւմ է երեւում նրա համոզւածութիւնը և ինչո՞վ ապացուցեց նա, որ իր սրտում կրում է ճշմարիտ քաղաքացիական վիշտ, վիշտ, որ առաջ եկած լինէր իրականութեան հետ շփւելուց, հասարակական չարիքների դէմ մաքառելուց: Արելի է երկու ենթադրութիւն անել. կամ նա կամքի ոյժ չունէր և անընդունակ էր գործելու, կամ նորաւարտ երիտասարդը թերուս էր և չէր հասկանում իր քաղաքացիական պարտականութիւնը:

Լևոնները խօսքերով քաջամարտիկներ են և ընդունակ զոհի և հերոսութեան. մեծամասնութիւնը այդպէս է հասկանում նրանց: Լսելով նրանց գեղեցիկ ձառերը մարդու, քաղաքացու և հասարակութեան բարօրութեան մասին՝ միամիտները կարծում են, թէ իրանց առաջ կանգնած են պատգամախօսներ, եռանդուն գործիչներ: Մինչդեռ իրականութեան մէջ նրանք ոչ այլ ինչ են, եթէ ոչ թաւամ, ծիւրեալ, ինքնահաւան եսականներ, Ֆրազներով և երկա-

կայութեամբ աշխարհը վերաստեղծող, մի ինչ որ բուսական ներ-
ազդմամբ յափշտակող արարածներ, որոնք անընդունակ են վճռա-
կան քայլի, երկար աշխատանքի և զիմացկանութեան: Համոզուած
մարտնչողը կեանքից չի խորշում: Նրա առաջ կենդանի պատկերա-
նում է անզարդ իրականութիւնը իր խաւարով և մոլորութիւննե-
րով, և բաւական է շրջապատողների մի թույլ ձգտում դէպի բարին
ապնիւը, մի աղօտ լոյս, որ նա թեւաւորւի և չարիքի դէմ մա-
քառելու ոյժ զգայ իր մէջ: Յիսնական թւականները այնքան բո-
ւականդակաւոր էին, որ Վեոնը, եթէ ուզենար, կարող էր այդ գա-
ղափարակոծ ժամանակից քաղել քաջալերութիւն և եռանդ՝ գոր-
ծունեաց լինելու համար: Նա խոյս տւեց կեանքի մէջ անմիջապէս
մասնակցելուց և շուրջից իրօք նպաստել նոր բուրմունքի յաղթա-
նակին, որովհետեւ նոր գործի ձանապարհը փշոտ էր և պահանջում
էր անձնական զրկանք:

Վեոնը բանաստեղծող ճարտասան է: Սոյն բուսին, երբ նա խօ-
սում է, գուցէ նա անկեղծ է: Նա ունի մի աչքի ընկնող յատկու-
թիւն՝ սաստիկ բորբոքել և շուտ հանգչել: Եթէ մարդկային առաջ-
դիմութիւնը կատարէր այնպէս շուտ, ինչպէս շուտ բորբոքւում
է Վեոնը, անշուշտ նա մեծ մարդ կը լինէր: Նրա բանուկ լեզուն
ուրիշներից շատ բարձր է դասում նրան. բորբոքւելով իր գաղա-
փարներից՝ նա, կարծես, պատրաստ է կռիւ մղել երկրի բոլոր շա-
րիքների դէմ. բայց նրա բնաւորութեան զրամատիզմը նրանումն է,
որ, նոր բորբոքւած, իսկոյն հանգչում է, բուսական եռանդով հիմ-
նաւոր գործեր չեն կատարւում. բարիքի ծոնապարհը փշոտ է և
պահանջում է անսպառ տոկունութիւն:

Վեոնը մի փամփուշտ է, որ հիացնելով հանդիսականներին իր
տեսողութեամբ՝ իսկոյն տրաքւում-չքանում է տարածութեան մէջ.
նա սապոնի բշտիկ է. նրա կեանքը մի անընդհատ ինքնապատրանք
է, հիասթափութիւնների տխուր պատկեր. նա կարող է յուզել շա-
տերին և չհանգստացնել. նա գրգռում է ծարաւը, բայց չի յագեց-
նում. նա ընդունակ է միամիտներին տանել մոլորապտույտ ձանա-
պարհներով դէպի լերան գազաթը և չքանալ, երբ հարկաւոր է
նրա օգնութիւնը վայր իջնելու համար: Վեոնի մեծ և շլացուցիչ

խօսքերը բղխում են աւելի անուշ վաստակելու փափագից, քան մարդ ճանաչելու առաքինութիւնից:

Լուսաւորած Լեւոնը ընկճում է իրականութեան տխուր տեսարանների առաջ և իր յոյսը դնում է նոր գաղափարների ոյժի վրայ. նա չի մտածում այն մասին, թէ, որքան էլ գաղափարը նշանաւոր լինի, անկարելի է սպասել նրանից շօշափելի շահ, երբ նրան քարոզողը զուրկ է եռանդից: Եթէ նա իր քարոզած գաղափարները դարձրած լինէր մտաւոր սեփականութիւն, նա չէր կարող անմիջապէս չմասնակցել այն կռիւ մէջ, որ մղւում էր մեր հասարակական կեանքի և գրականութեան մէջ: Կեանքը վերանորոգւում է մարդկանցով և ոչ գեղանի խօսքերով: Լեւոնը գնում է հայրենիք և հանդիպում է խաւարի և տգիտութեան. բնական է, որ նրա քաղաքակիրթ միտքը յուզւէր այդ հանգամանքից. բայց նա չէր կարող վշտանալ իրականութեան շրջանակներից դուրս՝ առանց ներդործական մասնակցութեան կեանքի մէջ, ինչպէս աշխատում է համոզել մեզ բանաստեղծը: Ճշմարիտ վիշտը առաջանում է իրականութեան մէջ ստացած բարոյական հարւածներից. կենդանի գործիչը կարող է վշտանալ և խորը վշտանալ, բայց ոչ Լեւոնը, որ միայն դիտում է կեանքը և պարսաւում նրա երեւթւթները. նա կարող էր ցաւակցել, բայց ոչ ցաւել: Այս է պատճառը, որ Լեւոնի վիշտը վերացական վիշտ է, և ոչ կեանքից դուրս բերւած. դա դիտողի կամ մտածողի վիշտ է և ոչ գործողի. դա Բայրոնի, այդ համաշխարհային քաղաքացու վշտի բուրմունք է և ոչ սեփական կաշու վրայ փորձած, մոքի ու հոգու շփոթից, ներքին մրցողութիւնից առաջացած վիշտ: Ուստի Լեւոնը աւելի կամենում է վշտանալ, քան կրում է իր սրտում այդ ծանր զգացմունքի անտանելի բեռը: Եթէ բանաստեղծը ուզում էր պատկերացնել մտաւորանջ կրեացող Լեւոնի մէջ ընտիր քաղաքացիների յուզմունքները և մտաւոր կերպարանքը, այդ նրան չի աջողւել. նա չի հասկացել ժամանակի արարող և գործունեաց ոգին, ժամանակի, որի հոգեբանութիւնը բնորոշւում է ոչ միայն բացասական վերաբերմամբ դէպի իրականութիւնը, այլ և տենդային դրական գործունէութեամբ: Լեւոնը մի տեսակ ծաղր է այն պարտաճանաչ և անձնուրաց մրցորդների, որոնց իդէական աշխոյժը առաջացրեց առողջ հրապարակախօսու-

Թիւն, լուրջ գրականութիւն և, ամենագլխաւորը, կենդանի առաջադիմական հոսանք, որ փորձում էր տապալել ասիականութեան տիրապետութիւնը կեանքի մէջ:

Այսպէս թէ այնպէս Վեռնի վիշտը՝ պօէման ունէր որոշ ծաւալով հասարակական նշանակութիւն, ինչպէս մի զրւածք, որ կիսով չափ ցոլացնում է նոր բուրմունքները. բացի այդ՝ դա առաջին փորձն էր պօէմա գրելու եւրոպական մաքով, ուստի չէր կարող զերծ մնալ թերութիւններից: Ամբողջ աշխատութիւնը կրում է թերակատարութեան կնիք, թէ հերոսի գծագրութեան և թէ առաջնորդող մաքերի զարգացման մէջ, Կեանքի երևոյթները, հասարակութեան նիստ ու կացը, բարքն ու վարքը, մի խօսքով՝ հայ իրականութիւնը շատ թեթեւ գծերով են վերարտադրւած պօէմայի մէջ առանց կենդանի պատկերների. միայն բնութեան նկարագիրները պատշաճաւոր գոյներով, գեղեցիկ համեմատութիւններով, և շնորհալի լեզուն տալիս են վէպին փոքր ՚իշատէ գեղարեւտական բնաւորութիւն: Մտքերի արտայայտութեան ձևը այնքան արեւեստական է և զուրկ պատկերաւորութիւնից, որ թէ հեղինակը և թէ Վեռնը աւելի ոգում են (декламируют), քան զեղում իրանց անմիջական զգացմունքները, և պօէմայի մեծամասն երեսները կարելի էր նոյն աշողութեամբ արձակ լեզով գրել:

Բանաստեղծը փշրում է իր ժամանակի ներկան առանց կենդանի վերաստեղծման այդ ներկայի և չի արտադրում հալեացքների ամբողջութիւն. նրա քարոզը, թէ մեզ հարկաւոր են չազգասէրներ, չխղճի ու մտքի ազատութիւն» մի բարի ցանկութիւն է, մի զարճախաղ, որ շոյում է հեղինակի քաղաքակիրթ միտքը: Նրա բացասական վերաբերումը դէպի ժամանակակից կարգ ու սարգերը, նրա սկեպտիկականութիւնը իրական կեանքի նկատմամբ, նրա համակրութիւնը նոր հոսանքին պէտք է համարել հեղինակի գլխաւոր վաստակը:

Ձկայ սկզբունք, որ լինէր անսայթաք օրէնք: Երբ մի զաղափար օրէնքի բնաւորութիւն է ստանում նրան դաւանողի աչքում, նա կորցնում է իր կենսունակութիւնը, իսկ ինքը դաւանողը դաւնում է նրա հըլու հպատակ առանց սեփական գոյնի և ինքնուրոյնութեան: Այսպիսի տալաւորութիւն է գործում Ս. Շահազիզեանը:

որ իր ուսուցիչների յայտարարած ծրագրից դուրս ոչինչ չի քարոզում, անգամ կրճատում է նրանց ծրագիրը. նա չի անում ոչ մի ինքնուրոյն լուսաբանութիւն ժամանակակից խնդիրների: Յափըշտակել լաւ բանով կարող է ամեն մարդ, որ տպաւորւող է և ներունակ. գործիչ կարող է լինել միայն նա, որ վերամշակում է իր տպաւորութիւնները և անց է կացնում նրանց իր մտքի աւ սրտի բովով. այդպիսին միայն ընդունակ է ներգործական դեր խաղալ կեանքի մէջ և բարեփոխել մտքերը: Լաւ գաղափարների ազդեցութեան ենթարկւում են շատերը, իսկ նրանց իւրացնում են միայն ընտիրները:

«Լեւոնի վիշտը» մի բանակուական գրւածք է գեղապաճոցճ զգեստով, մի փորձ՝ բանաստեղծօրէն փառաբանել նոր բուրմունքը: Հեղինակը ուզեց նոր տիպարի գործիչ-Լեւոնի գլուխը զարդարել դափնեաց պսակով, դուրս բերելով նրան պաշտպան առաջադիմութեան և հասարակական բարիքի, պատելով նրա երեսը հիասթափութեան և քաղաքացիական վշտի քօղով. դա ժամանակի մոդային իղձ էր, որով վարագուրւում էին շատ անհատներ և գրողներ:

IV

Մենք տեսնք, որ Ս. Շահազիզեանի պօէման չի պարունակում իր մէջ ոչ մի գաղափար, որ շօշափւած չլինէր իր ժամանակակից հրապարակաստութեան մէջ: Փոխ առնելով իր նիւթերը «Հիւսիսափայլ»-ից և յիսնական թւականների գրականութիւնից՝ նա մշակում էր նրանց իր մտքի համեստ գործարանում առանց ճշմարիտ բանաստեղծական աւելնի և ոգւորութեան, առանց ներքին կրակի:

Ծանօթ լինելով ռուսաց և եւրոպական գրականութեան ներկայացուցիչների հետ և կրթելով իր բանաստեղծական ճաշակը նրանց ստեղծագործութեան արտադրութիւններով՝ նա լիովին ենթարկւում է այն բանաստեղծների ազդեցութեան, որոնք այսպէս թէ այնպէս աւելի համապատասխանում էին իր ներքին տրամադրութեան: Անգլիացի մեծ հեղինակի դիւթիչ քանքարը, նրա հպարտ հոգին և ամբարտաւան վերաբերումը դէպի մարդիկ, տիեզերական վշտի երգիչ-Բայրոնը գերում է և կաշկանդում Ս. Շահա-

զիզեանին մինչև այն աստիճան, որ սա լիովին ճնշուած է, մինչև իսկ կուլ գնում բանաստեղծ-տիտանի կարող ոյժին. իր ոտանաւորներին մէկում նա պաթեթիկաբար բացականչում է.

Համաշխարհական պոէտ պանծալի,
Դու քեզ կանգնեցիր երկնահաս արձան.

Ով Բայրոն, ասա, հիմ քո մէջ դրեց
Այն վսեմ թախիճն յուսահատութեան.
Ի՛նչպէս քո հոգին իւր մէջ ամփոփեց
Այն խաւար դժոխք ամենակործան:

Բանաստեղծի այս ոգեզմայլ խօսքերը ցոյց են տալիս, որ նա երկրպագում է անգլիական հանճարին, իսկ երկրպագութիւնից մինչև ստրկական հետևողութիւն մի քաջ է. և, իրաւ, նա դառնում է Բայրոնի զեղարեւոտանոցի համեստ մշակներից մէկը, որ լարում է և տրամադրում ըստ թելադրութեան իր հովանաւոր տիրոջ:

«Լեոնի վիշտը» պոէման ընդօրինակած է Բայրոնի «Չալդ Հարոլդ»-ից այն տարբերութեամբ, որ Չալդ Հարոլդը ներշնչում է բացասական ոգով ընդհանուր քաղաքակրթութեան բնաւորութեան դէմ, իսկ Լեոնը դատաւիտում է մի նեղ միջնաւայրի—ազգային հասարակեցութեան խախտում հիմքերը. մէկի ներքին շփոթը առաջ է զալիս մարդկային կեանքի անկազմութիւնից, միւսինը—հայրենի խաւարից. մէկը խոտում է առաջադիմութիւնից սրբող արեւմուտքը, միւսը իր յետագէմ հայրենակիցներին: Լեոնը արեւստապէս դուրս է բերւած Չալդ Հարոլդ, մի տիպար, որ արիւն և մարմին է ստացել մեզ օտար և, գուցէ, անհասկանալի իրականութեան մէջ: Բայրոնը այն մեծ զեղարեւոտագէտն է, որ լաշն աշխարհայեացքի և աննման մտաւոր ոյժերի շնորհիւ ընդգրկում է ամբողջ տիեզերքը, դիտում է իրերը և երևոյթները և վերարտադրում է համամարդկային նշանակութիւն ունեցող մտքեր և պատկերներ. նա բանաստեղծ-մտածող է. նրա վիշտը և յուսահատութիւնը ի դէմս Չալդ-Հարոլդի առաջանում են այլ աղբիւրից, ծագում են այլ հասարակական և քաղաքական պայմանների մէջ սնւած անհատականութիւնից. նրանք բղխում են այնպիսի մտա-

ւոր աշխարհից, որտեղ տիրում են վերամբարձ շահեր և ձգտումներ՝ մշակած և անցած լուսաւորւած ազգերի յարատւ պատմական կեանքով: Չայլդ-Հարոլդը տիտանական բնաւորութիւն է, մի անհատ, որ չի կարող տեղակել անշուք հայ իրականութեան շրջանակների մէջ: Լեոնը անկարող է դիմանալ իր փոքրիկ սրտով այն յուզմունքներին և տանջանքներին, որոնց ենթակայ է անգլիացի հերոսը, նա չի կարող ներազդել Բայրոնականութեան ծանր զգացմունքներով: Տրամադրելով Լեոնին ըստ Չայլդ-Հարոլդի, մի երիտասարդի, որ մտածում էր իր հայրենիքի տարրական կարիքների մասին և զբաղւած էր ամենահասարակ խնդիրներով՝ բանաստեղծը մացրեց նրա բնաւորութեան մէջ կեղծ հնչիւն, զրկեց նրան բնականութիւնից և դարձրեց իր ոյժերից վեր բրդոյ, բարձրածիչ և գործի անընդունակ անձնաւորութիւն: Բայրոնող հայ երիտասարդը չէր կարող այլապէս լինել. նա ակամայ պիտի ատենաբանէր և ողէր ուրիշի մտքերը, երբ հարկաւոր էր անմիջապէս զգալ և խօսել:

Ե. Մալաթեանը Մուրճուում մի արդար դատավճիռ է կարգում Վեոնի վիշտը՝ երկի վրայ. նա ասում է, թէ ապր պօէմը ուրիշ բան չէ, բայց եթէ նմանողութիւն Բայրոնի Չայլդ Հարոլդին. ամբողջ տներ նրա մէջ փոխադրւած են կամ ուղղակի թարգմանւած անգլիական հեղինակի ռուս թարգմանիչ Մինայելից: Իր այս դատավճիռը հիմնաւորելով բազմաթիւ համեմատական հատւածներով՝ քննադատը, դժբաղդաբար, այն կարծիքն է յայտնում, որ Վ. Շահազիզեանը բաւականին ինքնուրոյն մտածող է՝ մի ճանաչւած աւտորիտետի ստրկաբար չհետեւելու համար: Մենք կարծում ենք, որ այստեղ հարց չի կարող լինել բանաստեղծի ինքնուրոյնութեան կամ մտածող լինելու մասին, յատկութիւններ որոնցից նա անպայման զուրկ է, այլ հարցը նրանումն է, թէ որքան նա բանաստեղծ է, առհասարակ, և եթէ բանաստեղծ է, ինչ կերպարանքի և չափի:

Բացի յիշած պօէմայից Ս. Շահազիզեանը զրեւ է մի քանի բանաստեղծութիւններ՝ թւով մօտ 60, նոյն գրքոյկի մէջ տպւած: Նրանցից մի մասը անձնական զգացմունքների, պլատոնական սիրոյ արտահայտումներ են, միւս մասը՝ մի տեսակ կրկնողութիւններ են այն մտքերի որ նա արժարժում է զանազան վարիացիներով իր պօէմայի մէջ: Երբ նա վերցնում է իր ստեղծագործութեան համար

հասարակական եղանակ, նա ականջ ճարտարում է և բարոյախոսում. նրա ոյժերը չեն բաւում իր նիւթերը գեղարւեստօրէն վերամշակելու համար, նրա ներազդումը չի կարողանում ընդգրկել հասարակական կարիքների ընդարձակ ասպարէզը: Իր ձիրքի բնութեամբ նա քնարերգակ է, ուստի անկարող է վերաստեղծել շրջապատող կեանքը իր գոյնզգոյն պատկերներով, իր բազմաոտեսակ երեւոյթներով և հարցերով. նա իր սեփական զգացմունքների երգիչ է: Քանզեւ ժամանակակից կուռքերը, տրանջալով իրերի դրութիւնից, անիծելով և բողոքելով՝ նա շուտ է լքում և բարոյապէս խորտակւում. նա զրգոււում է և մինչև իսկ չարանում, երբ նւագում է հասարակական եղանակ, և, բնականաբար, ուսուցանում է և քարոզում:

«Եւ դու, հայ կղեր, բաւական է քեզ.

Նայիր դու, հայր իմ, ի՞նչ մեծակշիռ

եկել են օրեր. դու այդ չգիտես.

Մի բաց աչերդ՝ և լաւ ըմբռնիր:

.....

Գործ ենք պահանջում, գործ, արիւթիւն,

Ոչ անփոյթ հանգիստ և զրպարտութիւն.

.....

«Մի նայիր անբաղդ քո ազգի վերայ,

Տես ինչ ալեկոծ ծովի մէջ է նա.

Առաջատու պատռած, կայմը խորտակած,

Շանթեր, կայծակներ մահով զինւորւած:

Վեր կաց, հոգեւոր հայր վիրաւորի,

Ո՛ւր էս դու, ձայն տուր, թող լսենք քո ձայն,

Լսենք քո քարոզ հայրենասիրի,

Որի համար սուրբ է խեղճ Հայաստան:

Ձայն չկայ, աւաղ, եղբարք, ի՞նչ անենք.

Ի՞նչպէս դարմանենք այս մեր վտանգիս,

Եւ հոգեւորի սիրտը գլորենք,

Եւ հասարակին կարգինք աւետիս: էջ 244

Կամ այս օրինակը. «Եզրիտներ և Զէյթուն» ոտանաւորից՝

«Հարազատ եղբանջր, որդի քաջութեան,

Թող չկաշռուէ եղւիտի ոսկին
 Քո սուրբ հաւատը, քո նւիրական
 Աւանդութիւններ, քո եկեղեցին:
 Կարմրի, եթէ Պապի արքանեակ
 Իւր ամօթապարտ որոգայթներով
 Կարաց քեզ որսալ. կարաց խաչտառակ
 Յաղթութիւն կանգնել, և, ծաղր առնելով,
 Կործանել ամուր քո բնակարան.

..... ,

Երբ նրա քնարը նւագում է լիրիկական եղանակ, նա ներշնչուում է բանաստեղծական զգացմունքով, նա իր տեղումն է և կարողանում է կարգաւորել իր տպաւորութիւնները և պատկերների գոյները. անձնական զգացումների սահմանափակ աշխարհում նա ներկայանում է մեզ բանաստեղծ նկարիչ. այստեղ նրա վրձինը քնքոյշ է, գոյները մեղմիկ, լեզուն սահուն և ճկուն. այստեղ քնարերգակը վկայում է իր սրտի յուզմունքները, իր ցնորքները պարզ և անարւեստ, ինչպէս նրանք տպաւորւել են նրա հոգու մէջ. այստեղ նա տպաւորութիւն է գործում ընթերցողի վրայ և շարժում է անհատների սիրտը շողող զգացմունքների: Նրա «Երազը», մի քանի նկարագիրներ «Լեռնի վիշտը» երկի մէջ, «Ոգի Հայաստանի» դրուած են ոգեւորութեամբ, բանաստեղծական նրբազգացութեամբ, պատկերաւոր և առանց կեղծ հնչիւնների. բանաստեղծի երեւակայութիւնը այսպէս է նկարում Հայաստանի ոգուն:

«Ու վ կոյս մանկագեղ, կոյս արեւելքի,
 Հրեշտակ սիրոյ—բայց ոչ թեւաւոր.
 Մի հատիկ գոհար փշրւած թագի,
 Լոյս ես իմ հոգու, տաճար փառաւոր:
 Անմեղութիւնով փայլում ես պայծառ.
 Որպէս շուշանը հայոց դաշտերի.
 Քեզ այդ շուշանից, հոգուս սիրահար,
 Հիւսում եմ պսակ անթառամելի:
 Առաջին անգամ ես այն անմարմին
 Քնքշութիւնը տեսայ կանացի.
 Ա՛խ, տեղատու է շրթունքիդ վարդին

Նրբագեղ քողը արևաբացի՝

. 198 եր.

Այսպիսի բանաստեղծութիւնները սակաւթիւ են: Բանաստեղծը իր լիրիկական ձիրքը զործադրել է այնպիսի նիւթերի վրայ, որոնց մշակումը իր բնական ոյժերից վեր է: Նրա կտաւը փոքրիկ է, իսկ վրձինը չի սիրում գոյների ճոխութիւն. նոյն իսկ իր ընտիր ոտանաւորների մէջ նա տալիս է մեզ էպիզներ, քան աւարտած ամբողջ պատկերներ: Նիսակատարութիւնը թէ գոյների և թէ արծարծելի խնդիրների նկատմամբ՝ նրա բնորոշ յատկութիւններից մէկն է: Նա չի խորասուզւում իրերի մէջ, այլ մակերևոյթաբար է զիտում և իր զիտածը կենդանագրում է թեթեւ գծերով. նա չի ուսումնասիրում և խորը չի լծափանցում:

Ճշմարիտ բանաստեղծը, ինչպէս և ամեն մի լուրջ հեղինակ, իր տեսող աչքերով խորամուխ է լինում երևոյթների մէջ և պայծառ գոյներով կենդանագծում է իր տեսածը. նա ունի հոգու ջղերով սիրած, սրտի հիւթով սնուցած և մտքի ստեղծագործող ոյժերով մարմնացրած գաղափարներ: Ս. Շահազիզեանը չունի հայեացքների ամբողջութիւն, բնածին գգւած իդէալներ, այլ ուրիշներից է քաղում նրանց: Նրա զիտողութիւնները չունին գեղարւեստագէտներին յատուկ նրբամտութիւն. իր իդէալներով նա կոմպիլատոր է, իսկ արւեստով բանաստեղծական ճաշակ ունեցող մի գրական (լիտերատոր):

Հանդէս գալով գրականական ասպարէզ 1864 թ: ականին իր «Լեւոնի վիշտը» երկասիրութեամբ՝ երկար տարիներ այնուհետև նա պահպանում է խորին լուութիւն, կախ է անում իր քնարը պատից և, կարծես, նիրհում լինի լեթարգիական քնով. նա, որ «փոխել է իր ծուռ գաղափարը՝ երգել զինի և սէր» և և իստեղ էր բաժանորդ լինել ազգի ցաւերին», հասարակութեան պիտոյքին՝ ծառայել, որի քնարը ձայնում էր՝

«Ես լսեցի խոր հառաչանք,
Եւ վիշտ հոգու, և գանգատ,
Եւ լաց, և սուգ, և աղաչանք.
Այն էր ազգ իմ հարազատ»:

Ոչ մի բանաստեղծ չի կարող փակել կեանքի և բնութեան տեսարաններին. նրա հոգու մէջ անդրադառնում է ամեն մի հասարակական երևոյթ, ամեն մի իրէական պատկեր. նա իրականի ամենատպաւորւող զաւակն է, ուստի անգոր է խոյս տալ կեանքից։ Ս. Շահազիզեանը ամբողջ տասնեւթը տարի (64—81) հեռանում է աշխարհից, ապրում է իր մէջ. մի ժամանակ լուսաւորութեան ջատագով, առաջադիմութեան պրօշակակիր հեղինակը գոյութիւն չունի հայ իրականութեան և գրականութեան համար։ Նրա աչքի առաջ մղւում է ռուս-տաճկական պատերազմը, ամբողջ հայութիւնը տենդային սպասողութեան մէջ է նոր արշալոյսի ծագման ցնորքների մէջ։ Մուկ ապագայից առաջացող ջղային սարսուռը փոխարինւում է փաղաքշող յոյսերով. յուսալի է հնչում Գամառ-Քաթիպայի քնարը. իսկ «Լեոնի վիշտը» պօէմայի հեղինակը անթափանց է այդ տպաւորութիւնների համար։

Ահեղ պատերազմից յետոյ համաճարակ սովը ճաճկաստանում հարիւրաւոր զոհեր է տանում։ Հայերը մեծ խմբերով թողնում են իրանց բնիկ երկիրը փշուր մը հաց՝ մուրալու օտարութեան մէջ։ Հասարակութեան լաւագոյն անդամները մի սիրտ մի բերան կարեկցութիւն են ձայնում, հրաւէր են կարգում կարօտեալ եղբայրներին օգնելու. իսկ «հասարակաց պիտոյքը» երգող բանաստեղծի գութը չի շարժւում. կարծես, նրա մուսաները սառած լինեն հիւսիսի սառնամանիքում։ Ռուսահայերի հրապարակաստութիւնը և գրականութիւնը ի դէմս Արծրունու և Ռաֆֆու շարունակում են առաջադիմութեան կարապետների իրէական կռիւը աւելի հասուն ուղղութեամբ, աւելի լայն ծաւալով, պաշտպանում են Լեոնի սրտին մօտ սկզբունքները։ Առաջադիմութեան բողբոջները ծլում են, նրա շողերը փայլում են։ Իսկ ամեն քայլափոխում իր ազգասիրութիւնը վկայող բանաստեղծը հանգչում է անցեալի դափնիների վրայ և վայելում է հոգեկան անդորրութիւն։ Նա չի երգում, նրա քնարի լարերը կտրւում են։ Նա պահանջ չի զգում մասնակցել անդարդ կեանքի նւագախմբին, նոյն իսկ չի ողջունում այն առաջադիմական հոսանքին, որի ծածանւող պրօշակի տակ հանդիսաւոր ճառում էր իր փառելի Լեոնը։

Բնորոշ է այս երևոյթը հայ գործչի և հեղինակի կեանքում։

Մտաւոր ոյժերի մի փոքրիկ լարւածութիւն, որի արդիւնք եղաւ մի պօէմա և մի քանի բանաստեղծութիւններ, և ահա մեր բանաստեղծը մատնւում է յուսահատութեան և հիասթափման: Այսպէս շուտ թողնել ասպարէզը, այսպէս շուտ զառամել հոգւով և զինթափ լինել, այժմ, դա տխուր երևոյթ է, եթէ ոչ ողբալի. բայց և ուսանելի է: Լեոնը մեծ շնորհք ցոյց տւեց խօսելում, իսկ նրա արարիչ-հեղինակը գերադասեց լռելու արւեստը, երեւի, հետեւելով այն մտածողին, որ ասում էր. «Տաղանդը նա է, որ իմանում է, թէ երբ պէտք է լռել»:

Յիշած հանգամանքները տալիս են մեր ձեռքը այն բանալին, որով կարելի է բացել բանաստեղծի ներքին աշխարհը և որոշել նրա ձիրքի չափն ու սահմանը. նրանք ճարտար վկայում են, որ բանաստեղծի քաղաքացիական ողբը թույլեական բորբոքման արգասիք էր, որ Լեոնի փքուն Փրազները սրտի անմիջական զեղմունք չէին, այլ արւեստապէս բայրոնողի արտադրութիւն: Հայրենիքի դարգերով անկեղծ վշտացողը չէր կարող արձագանք չտալ հայրենակիցներին ճնշող կծկիծներին. հասարակութեան ուրախութեան և տրտմութեան գրգիռը չէր կարող չշարժել նրա քնարի լարերը, եթէ նա ճշմարիտ բանաստեղծ էր: Նա խորասուզւեց խորին լռութեան մէջ մինչև 1881 թ., երբ լոյս տեսաւ Ա. Երիցեանի Քննադատական յօդւածը Ս. Նազարեանցի գրականական գործունէութեան մասին, մի հանգամանք, որ ստիպեց նրան դուրս գալ ի պաշտպանութիւն իր ուսուցչի. սակայն այդ գրականական աշխոյժը երկար չտևեց. բանաստեղծը զրիտետող հրապարակախօսի դերում գործադրեց 17 տարում պաշարած վառօդը, որ միանգամից բռնկւեց և հանգաւ:

1892 թւականին Մոսկւայի հայ հասարակութիւնը տօնում է նրա երեսնամեայ մանկավարժական և գրականական գործունէութիւնը: Այդ ուրախառիթ դէպքը մի փոքր քաջալերում է բանաստեղծին. նա փորձում է իր քիչ գործադրւած ոյժերը, խփում է իր քնարի լարերին, բայց սրանք չեն հնչում. դառն զգացմունքով նա խոստովանում է, որ իր ամուսան մեռել է և քնարը հանգել, որ «եթէ նոյն իսկ Ապոլոնը հիւսէր փունջեր նրա ճակատը զարդարելու համար», նա հրաժեշտ է տալիս իր ստեղծագործութեան: Բանաստեղծի երևութական իդէալականութիւնը և սաւառնող ոգին

ստանում են չափազանց երկրային կերպարանք. նա, որ հաւատա-
ցնում էր մեզ ճնախ քաղաքացի լինել, և ապա պօէտ, այժմ ունի
մի հատիկ իղձ.

«Երբ ցուրտ դիակդ, կեանքից զրկւած
Մտնի տապան, իմ անգին,
Վերջին շունչս քեզ եմ նւիրած,—
Եւ ինձ տեղ տուր քո կողքին:
Թո՛ղ Պաբրիէլի փողը հնչէ,
Թո՛ղ դաչ ահեղ դատաստան,
Իմ նազելի, ինձ այդ փոյթ չէ,
Սիրոյ զրկում անսասան:
Թէ ինձ հասնի երանութիւն
Այն լուսեղէն աշխարհի,
Մեր հոյէ ծածք, հոյէ անկիւն
Քնդցր ինձ քան մասն Անմահի:

Տես. Յորել. Տարեւարձ.

Մի ժամանակ իդէալիստ և լիբերալ երգիչը չի զրաւում նոյն
իսկ երանութեան փողի հնչիւններով, անմահութեան մասնով. նա
գերադասում է «սիրոյ գիրկը» ամեն բանից և ներքին ձայնը չխա-
բեց նրան. նա համեստ քնարերգակ է, որ զեղում է իր հոգու յուզ-
մունքները և ուրախութիւնները:

Հանդիսաւոր դուրս եկաւ բանաստեղծը դրականական ասպա-
րէզ, բայց անշուք լռեց նրա քնարը: Եթէ նա ապրում լինէր «հա-
սարակաց պիտոյքով», անշուշտ կ'ներընդունէր իրական կեանքից որոշ
տպաւորութիւններ և տիպային պատկերներ. եթէ նա ունենար
իդէական հայեացքներ իրերի վրայ և հետամուտ լինէր նոր հասա-
րակութեան բարոյական աշողութիւններին, բնականաբար նրա քա-
ղաքացիական կամ բանաստեղծական մտքի ներքին գործողութիւնը
կ'արտահնչուէր երգի կամ զեղարեւոտական գրածի մէջ. բայց չէ.
բանաստեղծի երիտասարդ արիւնը կամաց-կամաց սառչում է. անց-
նում է նրա զարուհը, և բորբոքւող երգիչը իր ճախրող մոլեսայով
դառնում է երկրի հասարակ զաւակ և խոնարհւում է քմծիծաղ
իրականութեան առաջ:...

Կեանքը ամենալաւ դատաւորն է. նա մերկացրեց Ս. Շահազիզեանի ներքին կեանքը. նա ցոյց տւեց, որ բայրօնական եղանակը նրա բանաստեղծութեան մէջ մի արտաքին փայլ էր, մի մոգալին գրականական յափշտակութիւն. նրան չպատուաստեց այդ վերամբարձ տրամադրութիւնը: Կեանքը ապացուցեց, որ Ս. Շահազիզեանը այն համեստ բանաստեղծներին է, որոնք չունեն գեղարւեստական քանքար և որոնց ստեղծագործական ոյժերը չեն ներում մշտական և յարատե գործունէութիւն: Նա վերլնդունեց բայրօնականութեան մի քանի արտաքին ձևեր՝ արհամարական և մեծամիտ վերաբերում դէպի կեանքը և մարդիկ, դէմոնականութիւն և հպարտ սլացք, հանդիսաւոր, թատրոնական ոճ և սիրանք: Հետեւելով Բայրօնին և լարելով նրա բացասականութեամբ՝ նա փորձեց հայ հասարակական կեանքի եղանակները երգել նրա բարձր տոնով և տրամադրութեամբ՝ առանց կշռելու իր հոգու և ձայնի կարողութիւնը: Ուզենալով մտրակել մեր կեանքի չարիքները տասն և ութերորդ դարու փիլիսոփայութեան զաւակ-Բայրընի ոգւով՝ նա չափազանց ձգեց իր քնարի լարերը՝ առանց չափելու իր գեղարւեստական ոյժերը: Այս արւեստական լարածութիւնը դրօշմւած է թէ նրա պօէմայի և թէ հասարակական եղանակով գրած բանաստեղծութիւնների վրայ, և այդ պատճառով նրա համեստ կարողութիւնը թուլանում է կարճ միջոցում իր վրայ բարձած ծանր բեռնից. նրա ձայնը և ձգւած լարերը կտրւում են, նրա մոլասն ուժասպառ ընդհատում է իր ստեղծագործութիւնը: Նա շեղւեց իր իսկական ճանապարհից և բռնազբօսեց իր քնարերգական ձիրքը:

Նա մի գրական է (литераторъ), որ լաւ ծանօթ է գրելու արհեստին և իր մոքերը արտայայտում է շնորհալի ձևով և երաժշտական ոճով: Նա տիրապետում է հայոց լեզւին: Թէպէտ նրա լեզուն «Հիւսիսափայլի» շառաւիղն է, բայց գերադաս է վերջինից իր սահունութեամբ և կենդանութեամբ, և աւելի կանոնաւոր է: Շահազիզեան լեզուն հետեւողներ չունի և չէտ է մնացել ժամանակակից գրականական լեզւից. նա ծանրաբեռնւած է գրաբարական խրթին խօսքերով և դարձւածներով. նա փքուն է և արւեստական, զարդարուն է և ճոռոմ: Բանաստեղծը առհասարակ սիրահար է գեղեցիկ խօսքերի և յաճախ բառախաղում է. նա երբեմն մոքեր է

կերտում հաւանած խօսքերը շարելու համար, ուստի պատահում է, որ միտքը հետևում է խաղացկուն լեզւին. նա չափազանց համեմում է և յղկում իր լեզուն, և դրանով գրականական արւեստակութիւնը (мастерство) դարձնում է մի տեսակ կուլտուրի աչդ յատկութիւններով նա յիշեցնում է մեզ սեթևեթօղ օրիորդի, որ, հայելու առաջ կանգնած՝ անդադար դիտում է իր կերպարանքը, զուգւում է և զարդարւում ականղէններով աւելի սիրուն երևալու համար, քան նա կայ իսկապէս: Աչդ յատկանիշը աւելի տեղին է ճարտասանութեան մէջ, իսկ բանաստեղծութեան մէջ նա յաճախ փնտրում է արտայայտած մտքերի պարզութեան և կենդանութեան: Այսպէս թէ աչնպէս նրա պճնազարդ լեզուն նպաստեց հայ բանաստեղծական լեզւի զարգացման, իբրև առաջին աջույ փորձերից մէկը, թէ տեխնիկայի և թէ երաժշտականութեան տեսակէտից:

Բնորոշելով Ս. Շահաղիզեանի բանաստեղծական գործունէութիւնը, մենք չենք կարող համարել նրան իր ժամանակի և սերնդի արտայայտիչ. նա չուեց մեզ լիակատար պատկեր այն ձգտումների և փափազների, որոնցով ղեզուն էին յիսնական թւականները:

Գեղարւեստական գրւածքը ծնունդ է որոշ մտաւոր շրջանի, փայլուն արտայայտութիւն է տիրող ոգու. նա ցոլացնում է իր մէջ ժամանակի էական յատկութիւնները և մատնանիշ է անում պարզ, կտրուկ և ղեղեցիկ ձևերով այն մտաւոր հոսանքների վրայ, որոնք իրականութեան մէջ աննկատելի են մնում մեծամասնութեան համար: Ընդհանուր սրտաբեկութեան միջոցին չեն կարող երևան գալ ոգեզմայլ գրողներ: Սթափւած մտքերի թնդիւնը, ճնշւած սրտերի աղաղակը չափազանց ազգու էին հնչում յիսնական թւականներին, որ Ս. Շահաղիզեանի քնարը չներշնչէր հասարակակցութեան տխուր եղանակներով: Նա արձագանք տւեց իր ժամանակի խնդիրներին, բայց միակողմանի բացասականութեամբ ներկայի: Նա յանդիմանում է «կղերին», որ իր ազգի ձեռնասունն է, մինչև իսկ ոչնչացնում, հռչակելով նրան բոլոր հասարակական չարիքների միակ պատճառ. աչդպիսի մոլեռանդ վերաբերում գէպի մի դասակարգ, որ իր խոշոր թերութիւններով հանգերձ ունի որոշ պատմական անցեալ և մեծ կատարելիք դեր ներկայում, ցոյց է տալիս հեղինակի մակերևութային հայեացքը իրերի վրայ: Նա պախարակում է հարստա-

կանին» և սրան յատուկ նիւթամուտութիւնը վերագրում է հայու-
թեան, «արծաթասէր» վերադիրը (ЭПИТЕТЪ) տալով: Նրա աչքում
իրականութիւնը մի ճահիճ է, հայութիւնը մի անկենդան մարմին
է, և ամեն ինչ վայրենի է ու վատ: Բայց չէ՞ որ մի ազգի առա-
ջադիմութիւնը երկնքից չի ընկնում, այլ բղխում է նոյն ազգի
բնական ոյժերից: Որտեղ և ում մէջ է տեսնում այդ ոյժը ամեն
ինչ բացասող բանաստեղծը: Գիտութիւնը և լուսաւորութիւնը չեն
պատւաստում ազգերին առանց կենդանի միջնորդների, և ամեն
մէկը չի կարող մատակարար լինել այդ վեհ գործում: Ո՞վ պիտի
սփռի գիտութեան լոյսը և հասարակութեան մէջ ուսման միջոցով
զարգացնի առաջադիմելու գիտակցութիւնը: Ո՞ւմ է համակրում
բանաստեղծը, որ իր հակակրութիւնները յայտնում է ամենափայ-
լուն ձևերով. մի՞թէ ամբողջ ազգի մարմինը հիւանդոտ է և նա
չունի մի առաջ մաս էլ. իսկ երկրագործ ժողովուրդը, որ դարերի
արիւնսաներկ հոսանքում անբիժ է պահել իր սրտում ազգային
առաքինութիւնները. իսկ նորաբողբոյ ինտելիգենցիան, որ դուրս
գալով նոյն ժողովրդից, խոհեմ ոտկունութեամբ սկսել է հերկել և
մշակել ազգային անապատ կեանքը: Այո՛, կային հարցեր և բաղ-
ձանքներ, որոնց պատասխանը և գոհացումը չուեց Վեռնի վիշտը՝
պոէմայի հեղինակը: Ժամանակակից ինտելիգենցիան ներշնչած էր
աւելի լուրջ հայեացքներով, որ բաւարարութիւն ստանար իր երգչի
քնարից, իսկ յաջորդ սեռունդը այնքան էր առաջ դնացել, որ
Վեռնի քարոզները կարող էին միայն այբբենական թւել: Նա չու-
սահատեց այն բուպէին, երբ կռիւը կեանքի և մահւան կերպարանք
էր ստացել. իսկ այդ նշանակում է կիսով չափ անձնատուր լինել
խաւարին և նպաստել եթէ ոչ նրա յաղթանակին, զոնեալ նրա
բռնաւոր օրերի յարատեւութեան: Վեռնը հազիւ ճաղկած թառա-
մեց, հազիւ կեանք մտած ծիւրւեց, իսկ բանաստեղծը բոլորովին
չքամեց «դառնութեան բաժակը», որ ուխտով էր քամել, և նրա
«քնարը հանգաւ» հիասթափութեան մէջ:

Ս. Շահազիզեանի իդէաները նորութիւն չէին իր ժամանակի
համար, սակայն հնութիւն էր և պատմական Ֆակոս նոր սերնդի
համար: Եթէ նրա բանաստեղծական գործունէութիւնը հասարա-
կական ինքնագիտակցութեան մի որոշ արգասիք էր, ապա նա այն-

Փակտորներինց չէ, որ ազդում է յաջորդ պատմական երևույթներին վրայ: Բանաստեղծը տեսց իր ժամանակին մի թեթև քաղաքացիական տուրք առանց մանրազնին քննելու լաբիւրինթոս-ազգային կեանքի խաւար ու բորբոսնած անկիւնները: Կրաւել մոքի նոր ուղղութիւնից, ժամանակի հարցերի վերաբերմամբ զալ որոշ եզրակացութիւնների դեռ չի նշանակում սպասաւորել մի իդէալի և ներմուծել կեանքի մէջ նոր դաւանանք¹. բայց և այնպէս՝ զիտակցել մի բան նշանակում է զիտակցածը իրականացնելու ճանապարհի վրայ կանգնել, և այդ տեսակէտից Ս. Շահազիզեանը կատարեց մի համեստ հասարակական գործ: Ընդհանրապէս խօսելով նրա բանաստեղծական գործունէութեան մասին՝ հարկաւոր է մատնացոյց անել այն բնորոշ հանգամանքի վրայ, որ բանաստեղծի վերաբերումը դէպի հասարակութիւնը արիստոկրատիկական է. նրա մոլաները ծախսում են երկնքում և հազիւ են իջնում իրանց բարձունքից. նրանք խուսափում են երկրի աննման զաւակների հոգսերից: Հասարակութեան մէջ նա տեսնում է միայն բարձր խաւերը՝ «կղերին և հարստականներին». նա թուշտում է իրականութեան վրայով և որոշ բարձրութիւնից պատգամներ կարդում: Հասարակութեան միւս տարրերը՝ հայ շինականը, արհեստաւորը չեն զբաւում նրա ուշադրութիւնը: Նրա Լեոնը այցելում է քաղաքներ, բայց չի հետաքրքրւում գիւղական կեանքով (գոնեայ չի խօսում) և գիւղի բնակիչների վիճակով:

Նրա վիշտը կրաւորական է և քիչ կապ ունի այն քաղաքացիական վշտի հետ, որ եռուն ներգործական դեր էր կատարում իրականութեան մէջ ամենաորոշ, դրական դաւանանքով: Նա մրցորդ չէ, այլ կռիւ հանդիսատես, որի փեշակն է փառաքանել մրցորդների վաստակը: Նրա սէրը դէպի հայրենիքը աւելի մի տուրք է պարտականութեան զգացմունքին և հայ մտածողներին տիրապետող տրամադրութեան, քան նրա հոգու բնական պահանջ կամ բովանդակութիւն. դա այն զօրեղ և անարատ սէրը չէ, որ ուժգին

¹. Չենք կարող չնկատել, որ այդ նախադասութեան իմաստը արդէն ինքն ըստինքեան չբռնում է չետազալ պարբերութեամբ Բացի այդ, պ. Եղեաճաղիրը, Լեոնի տիպը փնտրակար չալտունելուց չետոյ, ինքը դարձնալ էջ 1250, խոստովանում է հեղինակի գլխաւոր վաստակը: ՄԱՆ. ԽՄԲ.

խփում էր Ռ. Պատկանեանցի բաբախուն սրտում և որը անմիջապէս ազդում է մեզ վրայ:

Նա չի փայլում սեփական և ինքնուրոյն մշակած գաղափարներով, բայց ունի բանաստեղծական քայլ, որ բացատրւում է նրա լեզւի գունաւորութեամբ, ոճի ներդաշնակութեամբ և ոտանաւորի հնչեղ շափով: Նա չնախատեսեց նոր հոսանքի կարող ոյժը և նրա գալոց յաղթանակը, նա չներշնչեց այդ գիտակցութեամբ... և միայն զրազը կանգնած տրտմակում էր (печальничать), «բայրոնաբար» արհամարելով իրականութիւնը: Եթէ բանաստեղծութիւնը խօսքի և մոքի արւեստ է, Ս. Շահաղիզեանը գեղանի և, գուցէ, սրտառու խօսեց, բայց միտքը չէր ներդաշնակում չղկած խօսքերի հետ: Նա ճարտարող պաշտպան է անհատական բարոյականութեան և ընդհանուր ճշմարտութիւնների, նա երգիչ է իր զգացմունքների և ժամանակակից ընթացիկ մոքերի:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ЭЗОВЪ, Г. А.—Сношенія Петра Великаго съ Армянскимъ народомъ.—Документы, извлеченн. изъ Московск. главнаго и С-Петербургск. архивовъ минист. иностр. дѣлъ, Австрійск. придв. и госуд. архива, Королевско-Баварск. тайн. государственн. архива и другихъ учреждений.—(Այսինքն — ներգրան, Կ. Ա.—Պետրոս Մեծի չարաբերութիւնները Հայոց Ազգի հետ.— Դոկումէնտներ, քաղած Մոսկւայի և Ս. Պետերբուրգի արտաքին գործերի մինիստրութեան արխիւներից, Աւստրիական արքունական և պետական արխիւից, Թագաւորական-բաւարական զաղտնի պետական արխիւից և այլ հիմնարկութիւններից): С. Петербургъ, типогр. Импер. акад. наукъ, 1898. Ներածութիւն I—CXLIX, դոկումէնտներ 1—512 էջ in folio.

Այս նսկալական գործը, որ դրւած է մեր առջև, կարելի է նկատել որպէս հալի վերջին տարիների գրական ինքնապաշտպանութեան արտադրութիւններից մէկը: Այս ամբողջ գործին հոգի տուող ամենուրեք նկատուող աչն տենդենցն է, թէ հաշտարը կուկատում ոչ միայն այժմ բարեկուս է (благонаживный), այլ և որ այդ բարեկուսութիւնը իւր արմատներն ունի վերջին երկու դարու հալերի քաղաքական պատմութեան մէջ:

Այս մեծ գործը երկու բաժին

ունի, որոնցից ամեն մէկը կազմում է գրքի մի-մի արժանաւորութիւնը . 1) պ. Ներգրանի ներածութիւնը և 2) Նրա հրատարակած վկայագրութեան Բալց մինչդեռ վկայագրութեան, թուով 305 հատ, բացառապէս վերաբերում են Պետրոս Մեծի և նորան անմիջապէս շարորդած (մինչև 1736 թ.) ժամանակաշրջանին, ներածութիւնը ընդգրկում է թէ ալ ժամանակամիջոցը և թէ դորանից դէս մինչև վերջին տարիները հայոց ազգի հետ ուսումնաց կապերների և կառավարութեան ունեցած չարաբերութիւնների պատմութեան:

թիւնը, իւր խոշոր դժերով: Նրկուան էլ կարևոր գործեր են, բայց մանաւանդ բազմաթիւ վկայաթղթերի ժողովածուն, որը հրատարակած է ամենամեծ խնամքով, գործի համար անհրաժեշտ հմտութեամբ, և, որ զըլխաւորն է, բուն աղբիւրներից, ինչպէս ընթերցողը կարող է տեսնել նաև գրքի վերնագրից: Վկայաթղթերը դասաւորւած են ժամանակագրական կարգով, սկսած 1698 թականից: Այդ վկայաթղթերը ամենախորը տպաւորութիւն են գործում գէթ հայ ընթերցողի վրայ: Ճիշդ է, նիւթը քիչ թէ չատ հանրածանօթ է, չնորհիւ Բաֆֆիի Վսամալի մելիքութիւնները—ին, ուր ալ ժամանակամիջոցին են վերաբերում գրքի էջ 27-45-ը. մենք գիտէինք Ղարաբաղի մելիքների տւած հատ ջանքերի մասին՝ պարսից և ապա նաև տաճիկների լուծը թօթալիւ համար, գիտէինք մանաւանդ որ նոքա երկար տարիներ Պետրոս Մեծի վրալ լոյսեր էին դրած. գիտէինք Օրի անունով անձի գերի մասին հայերի չարաքերութիւնների մէջ հարգական իշխանների և Պետրոս Մեծի հետ. գիտէինք նաև թէ ինչ հրապարակութեամբ վերջացաւ այդ ամենը,—բայց մի բան գիտենան էլ կալ—գիտենան էլ—և ալն, ինչ դուած է ալ. Նզեանի հրատարակած դոկումէնտների մէջ, մի նոր չափանութեան պէս ազդում է մեզ վրայ, բացի ալն, որ մինչև ալժամ տուգապէս չափանի եղածը աղօտանում է ալս իսկատիւլ դոկումէնտների տւած մանրամասնութիւնների առջև:

Տեսնենք նախ թէ հրատարակած դոկումէնտները ինչ բաների վկայու-

թիւնն են տալիս, առանց որ մտնենք խնդրի մանրամասների մէջ:

1878 թականին Ս. Էջմիածնում, Յակոբ IV կաթողիկոսի նախագահութեամբ կալանում է մի ժողով հոգևորականներից և աշխարհականներից, ուր վճռում է կաթողիկոսի առաջնորդութեամբ մի պատգամաւորութիւն ղրկել Ներոպա՝ օգնութիւն հայցելու՝ Հալեբին պարսից լծից ազատելու համար: Կ. Պոլիս հասնելով՝ կաթողիկոսը, որի յաջորդականութեամբ Ներոպալմ ուխտ գնալը պիտի եղած լինէր, մեռնում է, պատգամաւորութիւնը վերադառնում է, բացի երկտասարդ խորալէլ Օրի՛ից: Վերջինս գնում է Վենետիկ, ուր մնում է երկու ամիս միայն, ապա Ֆրանսիա, ուր մնում է տասներկու տարի, որից վեց տարին անց է կացնում զինուորական ծառայութեան մէջ. ապա թողնում է Ֆրանսիա և անցնում Պֆալցի Պալատենիքը, ուր խոհան-վիլնէլմ ընտրող-իշխանի մօտ ծառայութեան է մտնում, մնալով այդտեղ չորս տարի, որի ընթացքում նա կարողանում է դրանք իշխանին Հալեբի ազատութեան գործի համար: Որպէս երևում է, ալդ օգնութիւնը նախաւոր դարձնելու համար՝ Օրին խոտտանում է համոզել հալեբին՝ հալոց եկեղեցին հպատակեցնել Հռոմալ պապի իշխանութեան: Խոհան-վիլնէլմ իշխանը համաձայնում է ալն պալմանով որ հալոց իշխանները իրեն ղիմեն խնդիրքով, որի համար և Օրին 1698-ին, դնում է հալեբին, ուր նորան արդէն վաղուց մեռած էին կարծում: Օրին ծագեալ զալիս է նախ Էջմիածին, ուր անիշխանութիւն կար

և չի վստահանում իւր գաղտնիքը բայց անել. ապա անցնում է Վարաբաղ, ուր և չափանում է իւր խորհուրդը մեկիքներին, որոնք ժողովում են Վանձասարի հայոց կաթողիկոս փրկապետի մօտ, որ վերջինիս համոզեն միանալու իրենց հետ աղծորացրի համար: Գաղտնի պահելով ժողովելու իրական նպատակը՝ Վանձասարի կաթողիկոսի մօտ Օրին նախ չարուցանում է եկեղեցական-կրօնական վէճ, ուր երեսայ որ կաթողիկոսը բնաւ տրամադիր չէր ընդունելու Օրինի փառաբանութիւնները լօգուտ Հռոմալ կաթողիկ եկեղեցու գերիշխանութեան: Գորանով նախապոչուցայած՝ Օրին և մեկիքները ժողով են կազմում մեկիքներից մէկի մօտ, Անգեղակոթում, ուր և վճռում են Օրինին չանձնել աղերսի թուղթ, մէկը Հռոմալ պապին, մէկը Պֆալցի իշխանին, որպէս նաև Ռուսիոյ ցար Պետր Ալէքսիւիին: Հռոմալ պապի անուամբ տւած թղթի մէջ խոստում էին մեկիքները, որ եթէ Հալեբի ազատութեան դործը գլուխ բերւի՝ իրենք խոտանում են առաջարկել ամենալն Հայոց կաթողիկոսին և Վանձասարի կաթողիկոսին հպատակել Հռոմալ պապին և որ եթէ սոքա համաձայն լինեն՝ իրենք ալժմանից խոտանում են նոցա հետեւելու իսկ Պֆալցի իշխանին ուղղած թղթի մէջ մեկիքները աղերսում են իրենց օգնութեան գալ, որպէս իւր զօրքերի հետ իւր եղբայր Վարլուս իշխանին՝ իրենց վրայ թաղաւոր լինելու համար: Մինչդեռ ժամանակ մի թուղթ էլ տալիս են ցար Պետրոս Ալէքսիւի (հետոյ կալսր

Պետրոս I) անունով, ուր նմանապէս աղերսում են սրան՝ գալ իրենց ազատելու պարսիկներից, խոտանալով հպատակութիւն: Այդ թղթերը մեկիքները տալիս են իրենց պատուրակներին, որոնցից մէկն էր Օրին, միւսը Մինաս վարդապետ Տիգրանեանց, որոնք պիտի միաբան դործէին: Գոցանից սակաւ Մինաս վարդապետին վիճակեց երկրորդական դերի չարմարել և բաւականաւ Օրինի տւած չանձնարարութիւնները կատարելով:—Օրին և Սինաս վարդապետը աչալիսով 1698-ի ապրիլին ճանապարհ են ընկնում Եւրոպա. Օրին ներկայացնում է Պֆալցի ընտրող-իշխանին իւր մի ընդարձակ թուղթը, բաղկացած 36 կէտերից, որ նա պարզում է Պարսից դէմ պատերազմ վարելու լիակատար ծրագիրը: Արշաւանքի մէջ Պֆալցի ընտրող-իշխանին պիտի օգնէին Գերմանիայի կալսրը և Տոսկանայի մեծ դուքսը, եթէ կամենալին. ապա պիտի թուլտուէին խնդրէր Վանաստանի թագաւորից և Վոսկովեստի ցարից որ արշաւանքի զօրքերը անցնէին իրենց երկիրներով. զօրքը, հասնելով Ասորախան, պիտի նաւերով փոխադրէր կամ ցամաքով անցնէր մինչև Գերբէնդ, որի առնելը հետ էր. ապա արշաւանքը կ'ուղղուէր Շամախի, որի առնելովը կը բացէր ճանապարհ դէպի հայոց երկիրը, ուր հալ մեկիքների զօրքերը կը միանալին արշաւախմբին. վրացիք կը գալին օգնութեան, որովհետև նոցա ցանկութիւնն էլ էր պալսից լծից ազատելը: Ապա զօրքերը կը բաժանէին չորսի, որոնցից մէկը

կ'երթար Գանձակի վրայ, միւսը Լորի, երրորդը Ղափան, չորրորդը Նախիջևան, ուր և կը կատարւէր զօրքերի միացումը. աչգտեղից 5000 մարդ կ'ուղարկւէր Ներսանը վերցնելու, որ միակ թէն թու կերպով ամրացրած քաղաքն էր, և որի ղռների հըսկողութիւնը սակալն հալերին էր չանձնւած. բայց նույնաժամանակ Նախիջևանից զօրքի գլխաւոր մասը կը շարունակէր իւր ընթացքը, կանցնէր Արաքսը ու կ'երթար ու կը վերցնէր Թաւրիզը: Արշաւանքը պիտի վարէր ալս հաշուով, որ իւր վախճանին հասնելուն պէս՝ ձմեռը վրայ հասնէր, և կատարւէր մեծ արագութեամբ. և Օրին կարելի էր համարում ալս բոլոր քաղաքներին տիրանալ 25 օրում (զօրքը հեծեալներից պիտի բաղկանար և պիտի լինէր առանց բռնների, որովհետեւ Օրին խոստանում էր երկրի մէջ ամեն ինչ գտնել զօրքի ուտելիքի համար): Այս գործի համար Պֆալցի ընտրող իշխանը իւր կողմից պիտի տար միայն 1000 հագի հեծեալներ, 1000 դրագուն, 100 գրենագիր, 25 կանոնիր, 25 ռմբաձիգներ, 4 փոքր և 2 մեծ թնդանօթ., 100 թնդ. ղեղակ, մի սանդակ 50 ռմբով, 500 պատրուգաւոր հրացան (մուսկէտ), վառող համապատասխան չափով, 100 դրօշակ, որոնք պիտի ներկայացնէին մի կողմից խաչ, միւս կողմից Ս. Գրիգոր Լուսաւորիչը, պատշաճ արձանագրութեամբ հալերէն լեզուով: Օրի'ի ծրագիրը (պ. Նզեանի դրքում գոյումէնտ № 9) ամենաերկարն է բոլոր վկայաթղթերից և չափազանց ետաքըքրալ ս. մասնակցի կողմից:

Քաղաքական ու տնտեսական դրութեան մասին պարունակող տեղեկութիւնների համար Թէն միշտ պիտի քննադատ աչքով վերաբերուի դէպի ալս տեղեկութիւնները, մտածելով որ Օրին դիւանագիտական միտումներով էր գործում: Բալցոյ միայն ալս ծրագրի մէջ, ալ և բոլոր բաղմաթիւ ղոկումէնտների մէջ երևում է Օրի'ի թափանցող խելքը, նրա մոտոս որ հեռու հորիզոնը, տարածութիւնների, մարդկանց և իրերի վրայ իշխող ոգին, ծաւրահեղ հետամտութիւնը նպատակին հասնելու համար, մանր ու խոշոր արգելքների դէմն առնելու տողանդալից հնարագիտութիւնը: Օրի'ին տրւած էր մեղիքներից նաև լիազօրութեան թուղթ, որով նոքա չափում էին թէ ինչ համաձայնութեան որ նա, Օրին, կը դալ վեհապետների հետ, իրենց համար ընդունելի է և իր անսահման հաւատ ունին դէպի նա: Ալս պատճառով Օրի'ն կապւած չէր միայն թղթերի մէջ մեղիքների չափած որոշ ցանկութիւններով, ալ գործում էր ազատ, որպէս ինքը բարութ էր դատում:

Պֆալցի էլէքտորը (ընտրող-իշխան, կուրֆիւրստ, ալսինքն զերմանացոյց կալսեր ընտրութեան մասնակցելու համար ձալն ունեցող իշխանը), ոգևորւելով քրիստոնեաներին մահմեդականների լծից աղատելու գաղափարով, գուցէ նաև քաղաքական փառասիրութիւնից՝ ընդունեց մեղիքների խնդիրքը և Օրի'ի ծրագիրը. բայց զրա համար պէտք էր գերմանացոյց կալսեր համաձայնութիւնը և Պէտեր Ալէքսէիչի թուրու-

թիւնը իւր երկրի միջով զօրք անց-
կացնելու: Էլեքտորի և կալսեր լանձ-
նարարականներով Օրիւն, Մինաս
վարդապետի հետ գնաց Մոսկւա 1700
թվականին: Այգտեղ սակալն շուտով
պարզեց Օրիւի համար, որ ռուսաց
ցարը արամադիր չէ օտարների զօր-
քերը իւր երկրի միջով անցկացնելու
ընդդէմ մի պետութեան, որ իւր սահ-
մանակիցն է. և ահա Օրիւն առա-
ջարկում է Պէտար Ալեքսէիչին, որ
սա ինքը ազատի հալերին մահմեդա-
կանների լծից, որի համար և նա
պատրաստ ունէր իւր մօտ մելիք-
ների գրած թուղթը ցարին: Ռուսաց
ցարին Օրիւն 1701 թվին առաջար-
կեց նման ծրագիր, որպէս և կուր-
ֆուրստին էր առաջարկել, որոշելով
արջաւանքի համար հարկաւոր զօրքը
25000 հոգի, որից 15 հազար հե-
ծեալ և 10 հազար հետակալ (գոլու-
մէնտ № 43): Յուսադրական հրո-
վարտակ զրկեց հալոց մելիքներին
Միրոն վասիլլեւ հալի ձեռքով:
Օրիւն աշխատեց և լաջողեց որ ցար
Պետրոս Ալեկսէիչը իրեն ընդունի
լատով ունկնդրութեան, բերանացի
բացատրութիւնների համար: Յարը
խոստացաւ կալսր Ալօպուղին և
Պֆալցի էլեքտորին ողջունի նամակ
գրել ի պատասխան Օրիւի բերած
նամակների, բայց Օրիւին թողեց
զադանի գործի մասին էլեքտորին
նամակ գրելու պարտաւորութիւնը,
և ալ իր կուսի նամակներն էլ, գրած
մարտին 1702 թ., իրենց հասցէին
հասցրեց հալ Նազար Օրէխովիչը:

Սեպ համար դեռ ևս մտլին է
մնում թէ ինչ դեր էր կատարում
ալմա Օրիւն Պֆալցի էլեքտորի դի-

մաց. բայց սորա գրած նամակնե-
րից երևում է որ նա շարունա-
կեց լիակատար հաւատ ընծալել Օ-
րիւին: Դոկումէնտներից երևում է որ
Պֆալցի էլեքտորը լետաձգեց իւր
խոստման կատարումը մինչև լաջող
աւարտը ալք տարիները սկսած մի
պատերազմի, որ վարում էր Գերմա-
նիան (կալսր Ալօպուղ) ընդդէմ
Ֆրանսիայի (Աւգոստին XIV), իս-
պանական գահաժառանգութեան հա-
մար, պատերազմ, ուր Պֆալցի էլեք-
տորը կռւում էր կալսեր հետ միասին:
Նոյնպէս և ռուսաց մեծ ցարը խոս-
տանում էր Հալերին օգնել (ուրեմն
Օրիւի ծրագիրը գործողը) մինչև
որ կը վերջանալ ցարի պատերազմը
Շեդդիալի Նարուս XII-ի դէմ: Բայց
էլեքտորի նամակից Պետրոս ցարին
երևում է որ առաջինը խոստովանում
էր որ, իբրև սահմանակից երկրի պետ,
ցարը աւելի դիւրութեամբ կարող է
ալք մեծ գործը զլուխ բերել: Բայց սա
արդէն հաստատ է, որ մելիքների
լարաբերութիւնը ալտունետն լինում
է միայն Պետրոս Ալեքսէիչի (կալսր
Պետրոս Մեծի) հետ, որից և միայն
ակնկալում են Հալերի փրկութիւնը:
Պէտք է կարծել որ Պետրոս ցարի
հուշակը ալ ևս հանում է Օրիւի և
մելիքների մտքից Գերմանիայի հետ
լարաբերութիւններ շարունակելու
ծրագիրը: Իրենց գրութեան մէջ Պե-
տրոս Ալեքսէիչին 27 մալիս 1703 թ.,
մելիքները ստիպած են տեսնում մի
մեկնութիւն տալ կալսր Ալօպուղին և
Պֆալցի էլեքտորին դիմելուն համար,
ալապէս. «Սեպ գրեր էաք եփրտորին
(= իմպերատորին = կալսր Ալօպու-
ղին) էլեքտոր վալատինին (= Պֆալ-

ցի Պալատունի էլեքտորին) որ աղա-
չեն առ քո թաղաւորութեանդ,
նոքա եւ մեր աղաչանացն լսած է և
քո (==Պետրոս Ալեքսէիշի) թաղա-
ւորութեանդ գրած է, եթէ նոցա և
եթէ մեր աղաչանացն լսած եւ և
առեր եւ լանձն որ ազատես զմեզ
որ լինիք մեծ ուխտիւք հաւատարիմ
ծառաւք քո բարի հրամանին նիրքե
բարուդ քարի և հակառակիդ հակա-
ռակ Մեզ և հաս եփրատորին (==կա-
սըր Լէօպոլդի) և իշխանին (==Խո-
հան Ալիշէյմ էլեքտորի) զիրն, մեզ
պատասխաներ են թէ մեք ինչ կա-
րողութիւն ունիմք վասն աստուծոյ
խաթրին համար կու կատարիմք,
մեք զիտակ եմք որ նոքա ինչ ազէ-
կութիւն կանեն առ քո մեծ թա-
ղաւորութեանդ համար է»:

1703 թ. նոյեմբերի 15-ին Օրին
ներկայացում է Պետրոս ցարին
Հալատտանի քարտէլը. և որովհետ
Պետրոս Մեծը նախ քան Պարսկաս-
տանի դէմ գործողութիւններ սկսելը
կամեցաւ զեսպանութիւն զրկել չա-
հի մօտ, զազանի հրահանգով որ
Պարսկաստանի հանդամանքները լաւ
ուսումնասիրեն, Օրին լաջողքեց
որ ինքը և ոչ մի ուրիշը լինի աչդ
զեսպանութեան գլուխ: Եւ զորա
համար հարկ գատուեց լանձնարարա-
կաններ ունենալ Հոռմազ պապից,
կալսր Լէօպոլդից և Պֆալցի էլեք-
տորից: Օրին խնդրեց, իւր գործերի
լաջողութեան համար, որ ցարը նո-
րան հնորհի զնդապետի տիտղոս, որ
և տրեւց, որից չետոյ արդէն ռուսաց
կառավարութեան լանձնարարական-
ներով Օրին գնաց Գերմանիա և
ձեռք բերեց ցանկացածը: 1706 թ.

հոկտեմբերին Օրին, թուղթ խնդրե-
լով ցարից պարսից շահի անունով,
ներկայացնում է նրան զործելու ծրա-
դիրը. (զոկումէնտ № 141, զերմանե-
րէն գրած): Աչդ ծրագրի համաձայն՝
Պետր ցարը շահին պիտի լալտներ իւր
ցանկութիւնը որ Մոսկաւում ապաս-
տանած վրաց Արչիլ իշխանը Վրաս-
տանի կառավարիչ նշանակելէր. ապա
ցանկութիւն լալտնէր ցարը, որ շա-
հը (Հոսէյն) հովանաւորի և պաշտ-
պանի իւր երկրի քրիստոնէաներին,
քանի որ սոքա ամարդի կերպով հա-
լածուած են և կոտորուած: մինչ աչս
մինչ աչն, ցարը կը պատրաստուէր լար-
ձակումն գործել, զօրք մտցնելով
վրաց և հայոց երկիրները. աչդ մի-
ջոցներին Օրին կը վերադառնար:
կը լինէր Հայոց երկիրներում և վրաց
Արչիլ իշխանի հետ Արաքսի բոլոր
անցքերը կը բռնէր, որ պորսիկները
չկարենան գետն անցնել և երկրին
վնաս տալ. հոչնպէս եթէ հարկ լի-
նէր Թիւրքիային պատերազմ լալտ-
նել, Հալերը և Վրացիք հնչու-
թեամբ կը մտնէին Անատոլիա: Օրին
ծրագրում էր նաեւ, որ Պարսկաստա-
նից վերադառնալիս երբ Հայոց երկ-
րում կը լինի, փոքր խմբերով Հալեր
կը զրկի Աստրախան՝ ռուսաց ծա-
ռաւորութեան մէջ գտնելու համար
400 հոգուց բաղկացած հայոց զօրք
պատրաստելու, որը ռուսաց զօրքի մի
թեւ կը կազմէր:

Օրին զնաց զեսպան շահի մօտ 50
հոգով, որ իւր բաղմութեամբ միար-
տասուոր բան էր. աչդ հանդա-
մանքը շատ անհանգոտացրեց շա-
հին. բաւց և աչնպէս ստիպւած էր
ընդունել և քաղցր վարել հետը:

Օրի՛ն պաշտօնապէս համարուում էր
Հռոմալ պապի դեսպան, թէև դա
միայն անւանական էր: Իսկապէս նա
Պետրոս ցարի զրկածն էր: Իսպա-
հանից Օրի՛ն զրազրութիւն ունէր
ցարի հետ, բայց գլխաւորապէս Մի-
նաս վարդապետի միջոցով, որ պիտի
շարունակէր Մոսկւայում մնալ, միջ-
նորդ ծառայելու համար հաջոց մե-
լիքներէ, Օրի՛ի և ռուսաց կառա-
վարութեան միջև:

Օրի՛ն վերադարձաւ Իսպահանից
1710 թ. ակաճին և երբ հասաւ Աստ-
րախան, անակնկալ կերպով վախ-
ճանւեց 1711 թ. օգոստոսին ու
թաղւեց տեղական հայոց եկեղեցու
գաւթում:

Մի քանի խօսք Օրի աճւան և Օրիի
որտեղացի լինելու մասին: Օրի (որ
ինքը գրում էր Ուրի) մենք կարծում
ենք շինովի ազգանուն է. Օրիի հօր
անունն էր Իսրայէլ, իսկ ինքը դա-
ռաւ Իսրայէլ Օրի: Հաւանական է
որ Հալեբի մէջ նա կոչւում լինէր՝
Իսրայէլի որդի Իսրայէլ, Իսրայէ-
լի որդի անւան մէջդ տառը զեղ-
ջելով չինած կը լինի Israel Ori=
Իսրայէլ Ուրի=Իսրայէլ Օրի: Ազգա-
նունով կոչւելու կարիքը նա զգա-
ցած կը լինէր Եւրոպայում, ուրամեն
ոք ազգանունն ունէր նաև աջն ժա-
մանակ: Գովումենտներում՝ տւած
մելիքներից 1698-ին և չնույ, Օրին
կոչւած է հայոց Պաօշ իշխանի սե-
րունդ. մենք կարծում ենք որ Օրին
ինքն է աչգպէս կամեցել կոչւել, որ-
պէս զի Եւրոպայում բարձր դիրք
ունենալ: Արդէն ղոկումէնտներից
պարզ երևում է որ նոյն գիւնանագի-
տական նպատակով էր որ Օրին,

Նախքան Պարսկաստան գնալը, Պետ-
րոս ցարից խնդրեց և ստացաւ զըն-
դապետի (պուկովնիկ) տիտղոսը, որ
հաւատարմութիւններ մէջ էլ աչգպէս
կոչւի: Բաֆֆին նորան Հնդկաստա-
նից է ցուց տալիս: Եղեանք՝ դոկու-
մէնտների հիման վրայ՝ Վարաբազի
Խաչէն գաւառից:

Օրի՛ի մահով մենք տեսնում ենք
որ նորա բոլոր ծրագրերն էլ հետը
թաղւեցին: Մինաս վարդապետը թէև
մնաց Մոսկւա, իբր միջնորդ ռուսաց
կառավարութեան և հաջոց մելիք-
ների միջև, բայց նա բնաւ չունէր Օրի՛ի
հանճարը. Մինաս վարդապետը մինչև
անգամ փորձեց Օրիի չարաբերու-
թիւնները եւրոպական պետութիւն-
ների հետ շարունակել (տես դոկու-
մէնտ № 200 և չաջորդները), բայց
դորա համար Պետրոս կալարից չստա-
ցաւ իւր խնդրած թուղթը, և միակ
քաղաքական դերը որ նա կատարեց,
այն էր, որ ուղարկւեց Պարսկաս-
տան (1716 թ.), ալդ երկրի քաղա-
քական հանդամանքների մասին տե-
ղեկութիւններ ժողովելու համար. և
Պարսկաստանում ալդ դերը կատա-
րելու համար անմեղ պատրւակ ցուց
տրւեց թէ վարդապետը եկած է
Օրիին պատկանող իրեղէնները որո-
նելու: Ալդ առիթ եղաւ որ Մինաս
վարդապետը նորից իւր հայրենիքը
ոտ կոխեց, եղաւ Գանձասարի Նսալի
կաթողիկոսի մօտ, ստացաւ սորանից
արքեպիսկոպոսութեան տիտղոս,
նշանակւեց Ռուսիոյ հայերի առաջ-
նորդ, որից չնույ Մինաս վարդապ-
ետից վերադարձաւ Մոսկւա և չա-
րունակեց իւր նախկին դերը: Նսալի
կաթողիկոսը Մինաս վարդապետի

միջոցով շարունակում էր ղրդել Պետրոս Մեծին, լալտեկելով որ (1719 թ.) «ալն գաղտնի գործը» գլուխ բերելու ժամանակը հասել է», որպէս նաև առանհրը համոզել էին թէ ժամանակ է Պարսից դէմ գործ սկսելու, և իրօք, Մեծն Պետրոսը, Շեղիալի դէմ պատերազմը վերջանալուց մի քանի ամիս չետու 1721 թւականի դեկտեմբերին սկսեց արշաւանքը, և առանց Պարսկաստանի դէմ պատերազմ լալտարարելու և նոյն իսկ իբրև թէ Պարսից երկիրները լեզզիներին ու տաճիկներին ապահովցնելու համար՝ ղրաւեց Նասալից ծովի վրայ Գերբէնդը, իսկ լաջորդ տարին նաև Բաքուն, Գիլանը և Մազանդարանը, — բայց պարզ է, որ ալդ ամենի մէջ հոգսը Հալեբի մասին ոչ մի տեղ չէր բռնում: 1722-ին Մեծն Պետրոսի գալստեան լուրը հասնելուն պէս Վրացիք ու Հալեբը հաւաքեցին իրենց զօրքերը Գանձակի առաջ, բայց ստիպւեցին ցրել, իմանալով որ Մեծն Պետրոսը Գերբէնդից իւր արշաւանքը չշարունակեց, ալ վերադարձաւ Պր. Նզեանի հրատարակած դոկումէնտները ալդ տարիներին և կալսեր ժահից (1725 թ.) չետու տարիների վերաբերեալ մինչև 1736 թւականը չի կարելի կարգալ առանց խղճահարութեան և միևնույն ժամանակ առանց վիրաւոր ղգացմունքի, ոչ միայն ալն բանի համար, որ օգնութիւնը չէր գալիս Հալեբին, ալ առաւել ալն բանի համար, որ ալնքան ու ալնքան տարիներ շարունակ հալոց մեկիքները կրկնում են միշտ միևնույնը, մինչ ծալրալեզ ստորութիւն: Նժէ Օրի՛ի մահից չետու մի

փոփոխութիւն նկատուում է մեկիքների գրածների մէջ, ալդ ալն է, որ մինչև 1723 թւականը նոքա օգնութիւն էին խնդրում պարսիկների դէմ:— 1723-ից չետու, երբ Ռուսիալի ու Բ. Գրան միջև կռած դաշնագրի համաձայն, Վարաբաղը բաժին ընկաւ Ռիւրքիալին, մեկիքների թախանձանքը՝ օգնութիւն հասցնելէ էր տաճիկների դէմ, որոնք նեղում էին Վարաբաղը՝ առանց սակալն երկիրը ղրաւել կարողանալու:— Մեկիքների ալդ թախանձանքները ալդէն ողորմելիութեան տպաւորութիւն են թողնում, և ամենուրեք ղգացում է գործին գլուխ կանգնելու համար մի Օրի՛ի տաղանդի պակասութիւնը, ալն Օրի՛ի, որը եթէ չլաջողէր անգամ Հալեբի ձգտումը լիակատար լաջողութեամբ պսակել, ղէթ ալդ ժամանակաշրջանին առկասկած կը տար մի ալ ուղղութիւն, հալերի լաբարերութիւններին ղէպի ռուսաց կառավարութիւնը կը տար մի ալ գոն և ալ հրապուր:— Պետրոս Մեծը, փոխանակ օգնութեան գալու, հրաւիրում էր Վարաբաղի հալերին թողնել իրենց երկիրը և ղալ բնակել Պարսկաստանից նոր առաւել երկիրները (Գիլան, Մազանդարան, Բաքու, Գերբէնդ)։.։. Ի պատիւ Հալեբին խօսում են սակալն ալն դոկումէնտները, որոնց մէջ Հալեբը հրաժարելով հրաժարում էին ալդ քանի քանի անգամ չետագալ տարիներում կրկնւած հրաւերին հետեւել. նոքա կամենում էին միալ իրենց երկրում և Ռուսիալից միալն մի քանի հալար ղօրք էին խնդրում որ պիտի Բաքուից ալղարկէր նա-

մախի: Եւ աղապիսի հրաւերներ ստանում էին ու դարձեալ օգնութիւն խնդրում, երբ մեկիքները նոյնաժամանակ չալտարարում էին թէ ունին 30 հազար զօրք, որ կարող են ի հարկին կրկնապատկել և եռապատկել... Պետրոս Մեծը, որպէս երեւում է, Հայերի վրալ նախում էր լոկ իբրև առևտուր զօրգացնելու ընդունակ ժողովրդի վրալ: (համեմատելք գոկումէնտ № 227): Միւս կողմից Պետրոս Մեծը իւան կարապետ հալի ձեռքով ուղարկում է Գանձասարի և Երիցմանկանց կաթողիկոսներին ու մեկիքներին հրովարտակ, որով չալտնում է թէ ընդունում է նոցա գրած խնդրքը, բայց առաջմ թող ժողովուրդը պաշտպանել, իսկ մեկիքներին ցանկացողները տեղափոխեն պարսկներին նոր նաւաւ երկիրները: (գոկումէնտ № 229):

Այդ մասին խորհրդածութիւնը սակաւ չի պատկանում մի գրախօսութեան, և լուսով ենք թէ պիտի մի ալ տեղում վերադառնանք աղ հարցերին: Նկատենք սակաւ, որ Նսալի կաթողիկոսանայովը Գանձասարում 1702 թւականին, հրապարակ է գալիս մի անձնաւորութիւն, արժանի առանձին գնահատութեան: Որպէս երևում է, մեկիքների իշխանութիւնները, Նսալի կաթողիկոսի գրդմամբ, մի առանձին զաշնակցութիւն են կազմում, «Հայոց սղնաղ աւուսով, որ նշանակում է «Հայոց ժողով», որի անունից և լինո մ է ամենանկարաբերութիւն մեկիքների և ռուսաց կառավարութեան միջև, գերազանցութեամբ Գանձասարի կաթողիկոսի, որ էր նաև գլխա-

ւոր հրամանատար հայոց զօրքերի: Սղնախ կամ սղնաղ խօսքը չաւալ լինում է նաև ժամանակաւ ռուսաց գրութիւններում—сѣнакъ, сѣнаксое войнство: Որքան գիտենք՝ մեր գրականութեանը աղ խօսքը անձանօթ է մնացել: Գոկումէնտներում պատահում է նաև այս ոճը՝ սղնաղ անել, ալսինքն մի ամրացատեղ հաւաքել ու պատսպարել: օրինակ գոկումէնտ 276-ում, Ղարաբաղի տէրերը չալտնում են իրենց ժողովրդի մասին՝ «այս խալիս ամենքըն իւր երկրումը սղնաղ սղնաղ կմք արել ամուր տեղերն և ամենքս մէկ սղնաղի վրալ նստած պահում ենք»: (Տես էջ 422-ի առաջի տողերը):

Աղ սղնաղիցն է ապա, որ դնում է պատգամաւորութիւն Պետերբուրգ օգնութիւն խնդրելու (տէր Անտոն, քեւիա Չելեբի և տէր Պետրոս), իսկ Պետրոս Մեծի մահից չետոյ, կատարինէ I-ի ժամանակ՝ Բաղի իւղբաշի, Աւան և Թարխան իւղբաշիները: Յալտնի է վերջապէս որ Պետրոս Մեծի մահից տասնեակ տարի չետոյ նրա նաւաւ Բաքու, Գիլան, Մազանդարան երկիրները վերադարձեցին Պարսկաստանին, որով և Հայերի բոլոր լոյսերը դերև ելան:

—

Մենք կամեցանք ալսքանով գծագրել թէ ղլխաւորապէս ինչ եղելութիւնների են վերաբերում այն միքսի հարիւր մեծագիր երևանների մէջ ամիտիւած վկայաթղթերը, որոնք մեծ հմտութեամբ ու ջանասիրութեամբ ի մի է ժողովել պ. Նզեանը: Աղ վկայաթղթերը մի գանձ են,

և նոցա հետ գործ պիտի ունենայ ամեն մարդ, ով կամենում է 18-րդ դարու առաջին երեք տասնամյակների արևելեան հայոց պատմութիւնը ուսումնասիրել:

Հայերէն գրած վկայաթղթերը, որպէս նաեւ միւսները, պ. Եղեանը հոգ է տարել իրենց իսկականութեամբ տպագրել, որով հնարաւորութիւն է տալիս նաեւ լեզական կողմից ծանօթանալ գէթ Ղարաբաղի հայերի աչն ժամանակաւ գրական լեզւին, որը միանգամայն ծծւած է գաւառաբարբառի ոգով ու ոճերով:

Մենք առաջինք, որ արժէքաւոր գործ է նաեւ պ. Եղեանի ընդարձակ ներածութիւնը, որի մի մասը հիմնւած է իւր հրատարակած վկայաթղթերի վրայ, իսկ միւս մասը ներկայացնում է հայոց և ռուսաց կառավարութեան չարաբերութիւնների պատմութեան շարունակութիւնը մինչև մեր օրերը: Արժէքաւոր համարելով հանդերձ՝ մենք այդ ներածութիւնը չենք կարող ընդունել իբր պատմաբանի գործ խիստ նկատելի է հեղինակի ձգտումը հայոց գործառնութիւնները Պետրոս Մեծի ժամանակ շատ միակողմանի կերպով լով դէպի ռուսաց շահերը թեքւած

ներկայացնել. խիստ նկատելի է նաեւ վրաց գործառնութիւնների անհրապաժան գոյներ տալու ձգտումը: Չի երևում պատմաբան-քաղաքագէտի վերաբերմունք դէպի հայոց գործերը, հետախույզ ոգին՝ հայոց ուժերը իրենց իսկականութեամբ ճանաչելու: Առանց դրան՝ անհնարին է հասկանալ անգամ, թէ ալդ ինչպէս մեկիքները, շարունակ պնդելով թէ իրենց ձեռքի տակ ունին 30,000 հոգի զօրք, մի քանի տասնեակ տարիներ շարունակ իրենց ամբողջ փրկութիւնը ռուսաց մի քանի հազար զինւորների օգնութեան վրայ էին դնում, մի օգնութիւն, որ չէր գալիս ու չէր գալիս: Պ. Եղեանը արևելեան կիսաանկախ հայոց ներքին լեռնային կեանքը, թէ ըստ լուսաւորութեան և թէ ըստ զինւորական կազմակերպութեան, անտես է առնում, մինչդեռ դա խնդրի ամենակարևոր կէտն է, որով և իսկապէս մեկնում է հայոց քաղաքական չարաբերութիւնների ուղղութիւնը 18-րդ դարու առաջին կիսում:

Մի բան սակայն անկասկած է, որ ներկայ գործը լաչն առաւարէզ է բացում հայոց պատմութեան ուսումնասիրութեան համար 18-րդ դարու առաջին կիսում: Ա. Ա.

ԵԱՂՈՒԲԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏ.—«Հայերէն-ռուսերէն բառարան». «Ар-
мяно-русский словарь». Թիֆլիս, տպար. Յ. Մարտիրոսեանցի
1891 թ.

(Շարունակութիւն և վերջ 1)

Կ.

Կաթնուկ — бѣлый сокъ изъ расте-
ній

Կալաքար — сода, натръ (хим.)

Կակա — тюльпан; վալրի — макъ

Կալծակ — гроза

Կապերոս — коверъ, паласъ

Կաթիկ — зѣвъ

Կարագ — сливочное масло: իւղ — не-
соленое масло.

Կարաս — большой кувшинъ (глинян-
ный), чапъ; գինու — винный чанъ.

Կարկաթ

Կարկաթանի } заплата, ласкутокъ

Կարկաթանիք }

Կարակ — куропатка

Կանգ — кувшинъ

Կեքակին — куша

Կեքանոր — духовный родственникъ

Կեր — набитый

Կերուկ — набивка, набивание

Կերուն — набитый (полно), полный

Կուան — родъ молота

Կուան — холстъ, холстина

Կուանէ

Կուանիւ } — холщевый, холстинный

Կրակել — опаливать, палить

Կաթնուկ բառը բոլոր անուն է.
ռուսները նրան ասում ենъ молочай.
Եթէ մինչև անգամ կաթնուկ բառը

համարել հասարակ անուն, ապա
պէտք է թարգմանել ոչ թէ бѣлый
сокъ изъ растений (սոսքերով, այլ
растение, содержащее молоко կամ
молочный сокъ:—Կարարար сода չէ
և ոչ էլ натръ, այլ поташъ: Այս
նիւթերը, սոդան և կալաքարը, դա-
նազան քիմիական բաղադրութիւն
ունին, որեւին մի նիւթ կամ մի ա-
նուն կրող նիւթ չեն կարող լինել:—
Կակա ԿԱԿԱՆԻ Ե՛, բայց զարմանա-
լին ակն է, որ պ. Կարգուհանը վալրի
Կակաչին (полевой тюльпанъ) տա-
լին է макъ անունը, որ նշանակում
է խաչխաչ կամ պոստ. ԿԱԿԱՆԻ
ծաղիկը վալրի գրութեան մէջ եթէ
макъ (խաչխաչ) դառնալ, մի տար-
օրինակ բան կը լինի բուսականու-
թեան մէջ:—Կալծակն гроза չէ, այլ
молнія (гроза=որոտումն):—Կապերոս
բառը паласъ բառով կարելի է
թարգմանել, թէև երկուսն էլ ուու-
սաց բառեր չեն. բայց Կապերոսին
коверъ ասել սխալ է, որովհետև
նրանք դժբախտ դարձածներ են և
ամէն մէկը նրանցից ունի իւր սեփ-
հական անունը ((коверъ — գորգ,
խալի):—Կարող նշանակում է անհալ
իւղ, աղած կը լինի նա, թէ ալանի՝
ալգ միւնուին է. որեւին չի կարելի
կարագ բառը թարգմանել сливочное
масло (սերկից հաճած իւղ) և ոչ էլ

несоленое масло (անաղ իւղ)։—Կա-
տիկ բառով ժողովուրդը անւանում է
կոկորդի սկզբում եղած լեզակը (я-
зычекъ), և եթէ այս լեզակին հի-
ւանդութիւն է պատահում, ասում
են «կատիկն ընկել է»։—Կարկատ,
կարկատան, կարկատանք բառերից վեր-
ջի երկուսը գործ են ածում зап-
латка բառի մտքով և ոչ մէկը նրան-
ցից չի նշանակում доскутокъ, որի
հայերէն թարգմանութիւնը կը լինի
շորի կտորտանք։ (Աւելցնենք, որ
կարկատ բառով պարսկահայերը ան-
ւանում են ձմերուկի, սեխի, դդումի
բոված սերմը, բոված դորինը, կա-
նէփի և կնճիթի սերմը)։—Կճոճ բա-
ռը լալանի է ամեն մի հալին և նշա-
նակում է կաւից շինած աման կե-
րակուր եփելու համար. ուրեմն այս
բառը աւելի հեշտ կը լինի թարգմա-
նելі глиняный горшокъ կամ гли-
няный котелъ բառերով, և ոչ թէ
кувшинъ բառով։—Հայերի մէջ կըն-
քակին չի լինում, ուրեմն զրակա-
նութեան մէջ այս բառը չի կարող
պատահել. հետեւորար հայերէն-ռու-
սերէն բառարանի մէջ, որ հարկաւոր
է հայերէնից ռուսերէն թարգմանե-
լու համար, բոլորովին աւելորդ է նա։
Կարելի էր մացնել բառարանի մէջ
սանամայր բառը, որ նշանակում է
քնքաւորի կինը, որ ռուսերէն կը
լինի жена кума։—Կարաւ բառը
թարգմանած է большою кувшинъ
(глиняный) բառերով. այդ ճշմարիտ
է, բայց ինչ հարկաւորութիւն կա-
յան է կամ винный чанъ բառերի,
որ բոլորովին կարաւ չէ, ալ
մի փալտեալ, բերանը բաց չանաղի
նման է, որ գործ են ածում խաղողի

բաղցուն (շիրան) թթւացնելու հա-
մար։—Կաքաւ ռուսերէն курочка, իսկ
куропатка, թէն կաքաւի ցեղից է,
բայց նրան ասում են հայերը չիւ-
ճարորինակ է կնքաւոր բառի թարգ-
մանութիւնը духовный родствен-
никъ բառերով (նոգևոր աղջական),
չենք հասկանում, ինչի է հեղինակը
գլխին զօր տաւ, քանի որ կնքա-
ւոր բառի ռուսերէնն է кумъ կամ
воспринимать։—Դժւար է համաձայն-
ւել հեղինակի հետ կոխ, կոխում, կո-
խուն բառերի վերաբերեալ, որոնք
մեր կարծիքով топтание, вытоптан-
ный կը նշանակեն, ալ ոչ թէ на-
битый կամ полный։—Կուս բառը
ռուսերէն կը լինի күзнецный мо-
лотъ — Կտաւ նշանակում է бязь ու-
րեմն ածական անունները կտաւելի,
կտաւէ, կտաւի՝ կը լինեն бязе ый,
ալ ոչ թէ холстъ, холщевый, хол-
стинный, որոնց հայերէնն է քանան
քանանէ, քանանի։—Կրակել ռուսերէն
предать огню, сжечь, палить (սոր-
ճանակ, հրացան), բայց թարգմանել
опаливать բառով, որ նշանակում է
խանձել, սխալ է։

2.

Հալիք։—шпанская вишня

Հաճար — рожъ

Հաճարէ } — ржаной
Հաճարի }

Հալիք բառը «Առձեռն» բառա-
րանի մէջ բացադրած է կեռաս, բալ
բառերով, բայց պ. Եղորտեանը կե-
ռաս բառը բոլորովին զուրա է գցել
և вишня (բալ) բառի մօտ գրել է
ածական անուն, шпанская բառը
որ ցոյց է տալիս բալի առանձին
տեսակը։ Այս, шпанская вишня

ժողոված բալի տեսակը մեզնում չկար, երբ հալիք բառը, որ մեր լեզուի նին բառերից է, գործ էր ածուում. ուրեմն հալիք բառը *шпанская вишня* կոչւած բալի հետ կապ չի կարող ունենալ. — Հաճար (*խորքերէն*) փորինք առսերէն՝ *полба*. ուրեմն այս բառի ածականը հոճար է. հոճարի կ'նշանակի *полбений*, իսկ *рожь* հոգերէն չաղար (*բառարանի* հեղինակը մոռացել է, որ այս բառը գործ են ածում և նրա հայրենիքում):

Չ.

Ձիգ ձիգ — *пышенок*.

Ձիթագործութիւն — *масляное издѣліе*.

Ձիթահանք — *масляная мельница: маслобойня*.

Ձիթաման — *судокъ (столовый)*

Ձիթավաճառ — *продавецъ маслянаго масла*.

Цышенок — թռչունի ձագ, ճուռ, գլխաւորապէս հաւի ճուռ. իսկ ծիգի բառը թռչունի ճուռ դարձնելը միևնույն է թէ մա'աւն հորթ դարձնել, բա'աւն գառը դարձնել, և այլն և այլն: — Անկարելի է գտնել ալնպիսի մի նիւթ, որ էարեւր լինի անուանել *масляное издѣліе* բառերով. նոյնպէս չկալ աշխարհքիս մէջ *масляная мельница* (իւղի աղացք), որովհետեւ իւղը չեն աղում, ուրեմն իւղի աղացք էլ չի գտնուիլ: — Հասկանալ դժւար է, ինչի *судокъ* բառը, որ նշանակում է միասին ժողոված ձիթամանը, քաջախամանը, պղպիղամանը, չաքարամանը և մանանեխի ամանը, պետք է լինի միայն ձիթաման, որի *аռսերէնը* կը լինի *сосудъ для масла*: — *Ձիթավաճառ* ալ ժամ նշանակում է ալն-

պիսի վաճառական, որ վաճառում է բոլորից դուրս բերած իւղ, լինի նա կանեփի, կտահատի, ձիթապտղի, ալղ միևնույն է. Ալթմ դժւար է գտնել ալնպիսի խանութ, ուր վաճառում լինի միայն ձիթապտղի իւղ, ուրեմն *аռսերէն* բառը թարգմանել *продавецъ маслянаго масла* մեր կարծիքով սխալ է, թէև ձէթ նշանակում է միայն ձէթապտղի իւղ:

ձ.

ձիչ — *пискъ*

ձիչ հանել — *пискнуть*

ձիչ բառը նշանակում է բարձր ձայնով աղաղակ, իսկ *пискъ* — ծնոց. ինչպէս անում է օր. մուկը. Աւելի ճիշտ կը լինի, եթէ ձիչ բառը թարգմանէր *воплъ* բառով, իսկ ձիչ հանել *вопять* բառով:

Ս

Սաճ — *козачка*, *ручка у плуга*

Սաշ — *горошекъ, сахарный горохъ*

Սառուր — *ягода, зерно шиповника*

Սեղուակութիւն — *доевіе пчелъ, время доенія пчелъ*

Սեղրոտ — *содержащій медъ*

Козачка նշանակում է կողակի (ղաղախի) կին, իսկ *козачка* — ուլ, փոքրիկ ալծ. բալց իբրեւ գութանի կամ արօրի մաճ, որին ասում են *стойка*, չի գործածուում: — Սաշ բառը *горохъ* չէ, որի հայերէն անունն է սիսեռ, ալ առանձին տեսակ լուրիս է — *аռսերէն* *лобія*, *бобы* կամ, լաւն է ասել, *родъ лобіи, бобовъ*: — Սառուր վարի վարդենի կամ վալրի վարդենու պտուղ է, որ *аռսերէն* կը լինի *шиповникъ*, *плоды шиповника*, ալ ոչ թէ *зерно* (հատիկ) *шиповника* (մասրենոյ սերմ) կամ *яго-*

առ, որ նշանակում է ամեն տեսակ թուփի պտուղ:—Անհատականալի է մեղավորութեան, որովհետև доение пчелъ, время доения пчелъ (մեղուների կթելու ժամանակ) չափ տարօրինակ միտք է:—Մեղրոս նշանակում է մեղրով աղտոտած կամ մեղրով քսած բոն, ալ ոչ թէ содеждащій въ себѣ медъ, ալսինքն իւր մէջ մեղր պարունակող:

Ն.

Նախիր ոչխարի—баранта

Ներգրին—глотъ, боярышникъ (трава):

Նախիր բառով անւանում են միայն գրաստի խումբը, իսկ ոչխարի խումբը ասում են дош, որ ուսերէն կը լինի стадо:—Գուցէ նիրգրին глотъ, боярышникъ է (չափ տեղերում ուր ծառը անւանում է սղնի, նրջակ եւ թուրքերէն եմիշտ բառերով), բայց боярышникъ կամ глотъ բոլոր խոտ չէ, ինչպէս բացատրած է փակագծի մէջ трава բառով, ալ ծառ է, ով բառարանի նշանակ:

Շ.

Շաղուել—мѣсить; խմոր—мѣсить тѣсто.

Շամալ—горкій апельсинъ

Շար—родъ тонкой матеріи; кисея, тавта

Շերամաբոյ՝ червоводъ, червовоспитатель.

Շերեփ—разливная или суповая ложка; փախեալ—ковшикъ

Շրեշ—растительный клей

Շփան—торка

Շաղուել ասում են, երբ կաթը կտրւում է կամ երբ մարդ միտքը կորցնում է, ալ ոչ թէ мѣсить որ

նշանակում է հուցել:—Շամալ¹⁾ հոտաւտ մի պտուղ է, որ սեխերի ցեղին է պատկանում եւ չափ հեռու է горькій апельсинъ (դառը նախինջ լինելուց:—Շերամ. բոյ՝ червоводъ է, բայց червовоспитатель բառը անգործածական է չերամապահութեան մէջ. (տարօրինակ բան կը լինի ուսերէն ասել որ. у насъ есть червовоспитатели). — Շերեփ բառի վերաբերեալ պէտք է ասել, որ բառարանի նշանակը ճիշտ է թարգմանել разливная ложка բառով, բայց մի բան հասկանալի չէ՝ ինչի՞ չերեփը, որ փախեալ է լինում, քանի որ զարմանում է ковшикъ. ախր չերեփը չերեփ է, թէ կ'ուզի չինն արծաթից կամ ոսկուց, եւ ոչ մի գէպում նա իւր ձեռքի կարող փոխել ковшикъ առարկայի ձեռն:—Շրեշ (թուրքերէն չրեշ) բոյս է, որի զխնական անունը Orchila L. Այս բույսի տերեւներից ազգան ե բուրանի են եփում, իսկ արմատից պատրաստում են սոսինձ, որ գործ են ածում կոշակաւորները. ուրեմն շրեշը растительный клей չէ, ալ растеніе, называемое черешъ:—Շփան, ինչպէս ցույց է տալիս բառի կազմաւորը, պէտք է լինի աջնախի գործիք, որով կտրելի է միմիայն քերել, ուրեմն որան կարելի է անւանել քերիչ, ոչ թէ չփան:

Չ.

Չորալին եղանակ—бездожде, ведро;

¹⁾ Թուրքի բառ է, նշանակում է հոտաւտ Այս պտուղը գտնւում է Ասիկասում ամեն տեղ ե ցանում են հոտի ու տեսքի համար:

չորային տարի—бездождный годъ

Չորաթան—осадокъ жижи

Չուխա — чоха (верхнее длинное платье у кавказскихъ горцевъ, опоясанное кушакомъ).

Չորային ժամանակ բառերի ճիշտ թարգմանութիւնը կը լինի: засуха և ամբողջ տարի բառերը պէտք է թարգմանել засухливый годъ բառերով. կարելի է թարգմանել և աղպէս, ինչպէս թարգմանել է բառարանի հեղինակը. բայց ինչի համար է ալտոնը ведро բառը, որ նշանակում է «պարզ եղանակ» և բոլորովին չի համապատասխանում չորային ժամանակ մտքին: Չորաթանը լալտնի է ամեն մի գիւղացուն և շատերին էլ քաղաքացիներին. դա կարած և չորացրած թան է, որից ձմեռը պատրաստում են զանազան կերակուրներ — չորաթանի սպան, քեւլադեօշ և այլն: Ռուսերէն չորաթանին կարելի է ասել высушенный творогъ, ալ ոչ թէ осадокъ жижи. վերջինս ընդհանուր մի միտք է չալտնում և կարող է վերաբերել զանազան նիւթերի: Չուխան ճիւղարիտ чоха է (և сукно), բայց բացատրել բառարանի մէջ, թէ չուխալ հագնողը դօտի է կապում, կատարեալ երեսալուծիւն է նշնապէս աւելորդ է ասել, թէ չուխան верхнее длинное платье у кавказскихъ горцевъ, քանի որ չուխան հագնում են և կովկասի ուրիշ աղերը: Հարկաւոր ենք համարում նկատել ալտոնը, որ Երևանի Նահանգում և մի քանի ուրիշ տեղերում չուխալ բառով անւանում են ոչ թէ

միայն չերքեստի անունով հագնւում, ինչպէս հասկանում է բառարանի հեղինակը, ալ զանազան տեսակ վերնազգեստ, մանաւանդ ալն հին տարազի վերնազգեստը, որի թեկերը կախ է լինում (ալժմ երբեմն հագնում են վրացոց աղւաւկաները):

Պ.

Պաշտօնաւոր — съ офиціальнымъ поручениемъ

Պատիւձան — багданъ

Պատւաստ — прививка; ծաղկի — оспенная матерія

Պճեղ — ладыга стручокъ (чеснока, лука)

Պաշտօնաւոր նշանակում է պաշտօն ունեցող մարդ, ալ съ офиціальнымъ поручениемъ մի քիչ դժւար հասկանալի է: Պատին ճանձնը багданъ թարգմանել է հեղինակի խելքով. դա արարացոց խօսք է և պէտք է գրել բաղնջան. բայց Անդրկովկասում հալերը, գոնէ Երևանի հալերը, արտասանում են բողրիջան¹: Պատւաստ նշանակում է прививка (ճիշտ կը լինի прививка ասել). ուրեմն ծաղկի պատւաստ կը նշանակի прививка оспы. էլ սրտեղից է լինում оспенная матерія: Պճեղ բառը, ճիշտ է, նշանակում է ладыга, բայց շատ հեռու է стручокъ լինելուց, ալն էլ սխալորի և սոխի. стручокъ նշանակում է պատիճ կամ պատճաւոր պտուղ ունեցող բոյս,

¹ Արարական բառի արմատում եղած Ն տառը պահպանւել զօկերէնում, ուր ասում են պատնջուն: Թիֆլիզի բարբառով՝ բողրիջան, ինչպէս և Երևանում: Խմբ.

ինչպէս ին սիսեռը, ծիծակը և ալն,
իսկ պճեղ ունի միայն սխտորը (սըխ-
տորի առանձին կտորներին ասում են
պճեղ), որին ռուսները անւանում են
зубокъ կամ ноготокъ чеснока.

Զ.

Ջութտակել—сдѣлать пару; спа-
риться

Ջրտակել—водянытъ

Ջրոր—водоносець

Ջութտակել շատ հեռու է спаряться
բառի մտքից, որ կը նշանակի միա-
ւորել, մերձաւորել.— Водянытъ բառ
ռուսաց լեզուի մէջ չկայ, Ջրտակ կը
նշանակի ջրով թացացնել. էլ ինչ
կարիք կայ ռուսների համար նոր
բառ ստեղծել.— Ջրոր բառով անւա-
նում են Սրեանի նահանգում ալն
մարդուն կամ մշակին, որ ջրում է
դաշտը, իսկ водоносець նշանակում
է ջուր բերող, ջրկիր, որ բոլորովին
չի բացատրում ջրոր բառի միտքը.

Ո.

Սգազգեստ—одѣтый въ траурное
платье.

Սերկերիլ—квитъ, айва нигва (плодъ)

Սերոտ—имѣющій много сливокъ
(молоко)

Սէղ—злакъ

Սրբուիչ—утеральникъ

Սգազգեստ բառը ածական անուն
չէ, ուրեմն չի կարող լինել одѣтый
въ траурное платье, ալ գոյական
է և նշանակում է ռուսներէն траур-
ное платье.— Սերկերիլ բառի առաջ
դրած է, բացի կвитъ, айва բա-
ռերից, нигва բառը, ու Дамъ-ի բա-
ռարանի խոսքով առանձին տեսակ
աւազի լու է Pulex penutrans ա-
նունով. ինչ դառել է սերկերիլ,

Տէր Աստուած.—Սերոտ բառը բառա-
րանի հեղինակի ասութեամբ նշա-
նակում է ալնպիսի կենդանի, որ
ունի շատ սեր (имѣющій много сли-
вокъ). բայց յաւն ալն է, որ ալն-
պիսի կենդանի չկայ աշխարհքիս
մէջ. սերոտ նշանակում է սերով աղ-
տոտած. ռուսերէն կը լինի запач-
канный сливками.—Սէղ բառը հա-
լոց լեզուով նշանակում է կանանչ
խոտ, որ ռուսերէն կը լինի зеленая
травка, зелень, ալ ոչ թէ злакъ,
որ նշանակում է հասկաւոր բոս
(ցորեն, գարի և ալն).—Սրբուիչ բա-
ռի փոխարէն մեր կարծիքով պէտք
էր դնել սրբիչ բառը (գուցէ սխալ-
մամբ է տպւած սրբուիչ):

Վ.

Վարդ—роза; бантъ, бантигъ; վարդ
կապել—завязать бантигъ
Վարնոց—низкого сорта, низкой
пробы

Վարդ բառը փոխաբերական մտ-
քով կարող է արդեօք նշանակել
հանդուց—չենք կարծում.— Վարնոց
բառը հեղինակի ստեղծած բառերից
է. մենք հրաժարւում ենք հասկանալ
նրա ռուսերէն թարգմանութիւնը.

Տ.

Տառակ — волчець, чертополохъ
(раст.)

Տունկ—растение, зелье

Տտիպ—острый, ѣдкій (вк.)

Տոտակ բառը լիչում է Աւե-
տարանի մէջ терній բառով. երկի
հեղինակը մոռացել է ալն.—Տունկ
տնկել բառի գոյականն է, և զրա
ճիշտ թարգմանութիւնը կը լինի по-
садка. Ջարմանալին ալն է, որ տունկ
բառը դառնում է և зелье, որ նշա-

նակում է խոտ, հասկաւոր բոլս, դեղ,
թոշն, մահադեղ.—Տախ բառը նշա-
նակում է ոչ թէ острый, ёдкій,
այլ вяжущий, терпкій.

Յ.

Յախ—верескъ (кустъ); хворостъ
Յին—куратникъ (птица):

Գուցէ ցախ բառը իբրեւ верескъ
պատկանում է Ախալցխայում գործ-
ածող բառերին, բայց ուրիշ տե-
ղերում գործ են անում միմիայն
хворостъ բառի մաքով.—Куратникъ
բառը նշանակում է նախ՝ հանոց,
խրճիթ, որ հաւերը պատսպարում
են, և ոչ թէ թռչունի անուն է. և
երկրորդ՝ փոխաբերական մաքով ցին
==ястребъ, որ հաւեր է գողանում:

Փ.

Փշատ—родъ ягоды на Кавказѣ.

Փշատ ևուսերէն лохъ (Elaeagnus
L.)—պտղատու ծառ է, այլ ոչ թէ
родъ ягоды.

Ք.

Քակոր—навозъ

Քարճիկ—пупокъ (у птицъ)

Քթւել—искать вшей.

Քշոց—мухогонка.

Քակոր բառով օր. պարսկահայերը
անուանում են հանդում վար թափ-
ած չորացած կուռն. հետևաբար աւելի
ճիշտ կը լինի ալս բառը թարգմա-
նել անիգ բառով, քան թէ навозъ
բառով.—Քարճիկ пупокъ (պորտ) է,
այլ թռչունի երկիւմունքն է (պլո-
ճ կ):—Քթւել կը նշանակի ջարդել
ևղունգով գտած ոչխուր, որ չի նշա-
նակում искать вшей:—Քշոց—му-
хогонка. (=հանճ քշող). Չենք հաս-
կանում, ինչի հեղինակը չի գրել ալս
բառի առաջ և мухогонка, пчело-

гонка, птицегонка և ալսն բառերը,
որոնք չեն կարող քշոց չլինել, եթէ
мухогонка բառը քշոց է. Պ. Եա-
ղուբեանը շատ կարելի է վաղուց եկե-
ղեցի չի մտել և մոռացել է, որ քշոցը
գործ է անում պատարագի ժամա-
նակ և ուստաց լեզուով նրան ասում
են рипида.

—

Աւստեղ մենք առաջ բերինք
156 բառ, որոնք բոլորովին սխալ
են թարգմանած պ. Եղուբեանի բա-
ռարանի մէջ. Բացի սրանցից կան
հարկւարտոր կատածելի բառեր,
որոնց ուղղելը թողնում ենք աւելի
հմուտ մարդկանց: Կան և մի շարք
բառեր, որոնք տեղական են, ախալ-
ցխեցոց բարբառից, ուրեմն դորձա-
ծական են միմիայն հեղինակի հալ-
րենիքում: Բառարանի մէջ պատա-
նում են և կոպիտ, իսկ երբեմն ան-
միտ դարձածներ, օր. ութանոց—
стоющій восемь, քամոտեցնել—воз-
будить вѣтры въ животѣ, քամոտել
—заболѣть вѣтрами въ животѣ և
ալսն:—Անհասկանալի է, ինչի համար
պ. Եղուբեանը հարկաւոր համարեց
մտցնել իւր բառարանի մէջ մի շարք
թուրքաց և պարսկաց բառեր (մենք
նկատել ենք մինչև 40 բառ), քանի
որ նույն բառերը հալոց լեզուով կան.
օր. խիար, շալվար, շուշայ, պոզ (բոջ),
ջահիլ, փայ, դարչին, բիզ, խանձար և
ալսն և ալսն: Եթէ հալոց լեզուն ճո-
խացնելու համար է, ալսն ժամանակ
պէտք էր տեղաւորել բառարանի մէջ
ոչ միայն 40 բառ, այլ հարկւարտոր
թուրքական բառեր, որոնք գործ-
ածական են ժողովրդի մէջ: Բացի
սրանից, ուրիշ ազգի լեզուից բառ

վերցնողը պէտք է տեղեակ լինի ան աղգի լեզւին, բաց պ. Նաղու-
բեանը իւր բառարանի միջոցովցոյց
է տալիս, որ թուրքի լեզւի հետ ծա-
նօթ չէ, որովհետեւ չառ թրքական
բառեր թարգմանել է սխալ մտքով.
օր. դումաշ—кумаѣ, չարաբ сыропъ
և այլն:

Առհասարակ բառարան: կազմողը
պէտք է տեղեակ լինի լեզուների և
ան ժամանակ խիզախի բառարան
կազմել: Պ. Նաղուբեանը լաւ կը
հասկանայ, որ մինչև անգամ մի քա-
նի սխալները բառարանի համար մեծ

պակասութիւն են, իսկ հարկաւոր
սխալները արդէն բառարանը ան-
պէտք են դարձնում:

Նրկրորդ տպագրութեան ժամա-
նակ պ. Նաղուբեանը պարտաւոր է
բառարանի սխալները ուղղել. բաց
այս գործը, ինչպէս երևում է, նրա
գործը չէ: Խորհուրդ կը տանք սխալ-
ները ուղղելու և պակասութիւնները
լրացնելու համար բառարանը լանձ-
նել մի ձեռնհաս մարդու, կամ բոլ-
րովին չտպել նորից: Այդ մեր բարե-
կամական խորհուրդն է:

Ս. Չէլիկե

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԶԻԱԲԱՐՇԻ ԽՆԴԻՐԸ

Մուրճի ներկաչ համարից, մեր խոստման համաձայն (Մուրճ № 5) սկսում ենք զբաղվել մեր երկրի քաղաքային ինքնավարութեան խնդիրներով, Թիֆլիսը կ'լինի ինքնավարութեան խնդիրներում մեր զբաղմունքի գլխավոր առարկան, քանի որ մենք անձամբ հետամուտ ենք նրա ինքնավարական կեանքին, և, բացի այդ, երկրի մայրաքաղաքի խնդիրների այս ու այն կերպ լուծումը ուսանելի պիտի լինի նաև Կովկասի այլ քաղաքների համար: Բայց պիտի ջանանք, հնարաւոր եղածին չափ, չօգտվել Կովկասի նաև այլ քաղաքների գործերը, և լույս ունինք որ դաւառալուծ թղթակիցները հնարաւորութիւն կ'տան Մուրճի խմբագրութեան ունենալ բաւականաչափ լիովի տեղեկութիւններ, որպէս զի մենք կարողանանք օգտւել նոցանից:

Սկստեմք ամսւայ ընթացքում Թիֆլիսի քաղաքային դուման ունեցաւ չորս անգամ նիստ 9—21—23 և 28-ին, և այդ չորս նիստերում քաղաքի վարիչներին զբաղեցնող խնդիրն էր քաղաքի ձիաքարչ երկաթուղու բեղիկական անանուն ընկերութիւնից լետ գնելու և նոր կոնցեսիայի խնդիրը: Քաղաքի համար դա մի ամենակարևոր խնդիր է, որի մանրամասները ներկայացնում են մեծ հետաքրքրութիւն:

Որովհետեւ այդ ձեռնարկութիւնը քաղաքի չափ տեսակէտից հարկւր հազարների և միլիոնների հետ էր կապւած, շատ հասկանալի է ուրեմն, որ նա լրջօրէն զբաղեցնէր քաղաքային գործիչներին, կրքեր շարժէր, տարաձայնութիւն և նոյն իսկ բուռն մաքառումն առաջացնէր զանազան անձերի և խմբերի մէջ:

Անանուն ընկերութեան հետ կապած պալմանագրի հիման վրայ քաղաքը իրաւունք է ստանում ներկաչ հոկտեմբերի 25-ից (այսինքն ձիաքարչի բացակայ 15 տարի լետող) իւր ձեռքն առնելու ձիաքարչը, այսինքն չնայ գնելու՝ պալմանագրի մէջ զիշւած պալմաններով: Դորա համար պէտք է

հիմք վերցնելի վերջին հինգ տարիների ընկերութեան տաացած զուտ օգուտի միջին զումարը ձիաքարչի ընկերութեան վճարէր ալդ գումարը ամեն տարի, մինչև կոնցեսիայի տարիների լրանալը, աչն է 30 տարի չարունակ, Բալց մինչդեռ ալդ տարեկան գումարը պիտի լինի 115 հազար ռուբլի, ըստ բելգ. ընկերութեան ներկայացուցիչ Ռոբի'ի, քաղաքը ալդ գումարը իջեցնում է 20 հազարի ¹, Քաղաքը չեա դնելով, կարող է ձիաքարչի գործը իւր ձեռքով կառավարել և կամ նորից կոնցեսիայի (=կապալով) տալ նոյն բելգիական ընկերութեան կամ ալ ընկերութիւնների, նաեւ թէ ով որքան ձեռնտու պայմաններ կ'առաջարկէր:

Խնդիրը որքան դժւար լուծելի լինի, բալց և այնպէս զուլս անցած վարիչների տրամադրութիւնները մեծ նշանակութիւն ունին: Քաղաքային վարչութիւնը հէնց սկզբից կարծես ցոյց է տուել տրամադրութիւն բելգիական թէ ալ ընկերութիւններին կոնցեսիայի տալու քան ձեռնարկութիւնն իր ձեռքն առնելու: Ահա թէ ինչպէս:

Ներկայ տարւալ մալիսի 18-ին քաղաքային զուման որոշումն է անում ձեռք բերել ձիաքարչի ինւեստարը (կապը), որպէս զի քաղաքը պատրաստ լինի այս տարւալ աշունքին ձիաքարչը, արդէն չեա դնելուց լետով, անարգել շարժողութեան մէջ դնելու:

Քաղաքային վարչութեան մէջ ստացւում է մալիսի 9-ին La Compagnie de traction et d'électricité ընկերութեան ներկայացուցիչ պ. Կազբէկի լաւտարարութիւնը, որով ձիաքարչը քաղաքից ընդունելու առաջարկն է անւում: Բալց վարչութիւնը (=ուպրաւա) իւր մալիսի 19-ի նիստում քննելով և անձեռնառու գտնելով պ. Կազբէկի պայմանները, մերժում է առաջարկը: Միևնույն ժամանակ քաղաքային վարչութիւնը լարաբերութեան մէջ է մտնում անանուն (բելգիական) ընկերութեան հետ, և սրա Թիֆլիսի ներկայացուցիչ պ. Ռոբի արդէն նոր պայմաններ է առաջարկում ընկերութեան կողմից: Մալիսի 29-ին քաղաքային վարչութիւնից նա հրաւիրում է խորհրդակցութեան: Ալդ խորհրդակցական նիստում միասին քննութեան է առնում և փոփոխութեան ենթարկւում առաջարկած լրացուցիչ պայմանների ծրագիրը և վերջնական համաձայնութիւն կապնում երկու կողմերի մէջ: ²)

¹, Բելգիական անանուն ընկերութիւնը այնպիսի զիրք է բռնել զէպի խնդիրը, որ ամեն երևակալելի միջոց գործ դրեց խոչնդոտ լինելու, այնպէս որ քաղաքը նոյն իսկ հաստատ չկարողացաւ իմանալ թէ ինչ է եղել ընկերութեան զուտ արդիւնքը այս հինգ տարիներում: Գործը լաւ ճանաչողները պնդում են, որ ընկերութիւնը զուտ արդիւնք ստանում է 150-160 հազար ռուբլի:

²) Տես. Приложение № 5 къ 15 му тому Докладовъ ерես 8°

Այդ կատարում է մալիսի 29-ին: Յաջորդ օրը մալիսի 30-ին պ. Ռոբի զրաւոր ներկայացնում է ալն պալմանները, որոնցով ընկերութիւնը կարող է ձիաքարչի ինւենտարը (=կալքը) զիջանել-ծախել քաղաքին, և որպէս զի դումալի (քաղաքալին խորհրդարանի) մալիսի 18-ին որոշմանը՝ ինւենտարի վերաբերմամբ՝ ձեականապէս ընթացք տրւի, վարչութիւնը իր Յունիսի 1-ի նիստում վճիռ է կալացնում գնել աճանուն ընկերութիւնից ձիաքարչի ինւենտարը: Վարչութեան լուսիսի 2-ի նիստի (ալսինքն փոխադարձ համերաշխութիւն կալանալուց 3 օր անց) արձանագրութեան մէջ կարդում ենք հետեւեալը. «Վննութեան տակ առնելով լրացուցիչ պալմանագրի ծրագիրը և անանուն ընկերութեան զիրեկտորի հետ մալիս 29-ին կալացրած խորհրդակցական նիստի արձանագրութիւնը, քաղաք. վարչութիւնը դրտնում է հետեւեալը. եթէ քաղաքն սկսէր չինել ձիաքարչ երկաթուղին ներկայումս, ոչ մի կասկած չէ կարող լինել, որ ձեռնարկութիւնը պէտքէ գտնւի քաղաքի տնտեսութեան տակ, բայց ընդունել ալդ ձեռնարկութիւնը քաղաքալին ձեռնարկութեան տակ ալն ժամանակ, երբ մեր առաջ խոշոր ձեռնարկութիւններ կան, որ պէտքէ զլուսի բերել, ինչպէս են քաղաքի դազալին և էլեքտրական կատարելագործւած լուսավառութիւնը, ջրանցքի ընդարձակումը, փողոցների սալահատակելը լալն չափերով, սպանդանոցի կառուցումը և ալդ բոլորի հետ միևնույն ժամանակ անցկացնել ձիաքարչի նոր գծեր գէպի Հաւաթար, Նաւթուղ, Դիզուբէ և Միջի փողոցը, ձիաքարչի փոխաբինումը էլէկտրաքարշով, սրանք ալնպիսի ձեռնարկութիւններ են, որոնց միաժամանակ իրագործման համար քաղաքալին ինքնավարութեանը թէ միջոցները չեն կարող ներել և թէ չափազանց դժարին է քաղաքալին տնտեսութեան ներկալ պալմաններում: Սրան կից պէտքէ ի նկատի առնել անանուն ընկերութեան զրական կողմերը» և ալսու ի նկատի առնելով բոլոր դժարութիւնները, քաղաքալին վարչութիւնը համարում է կալացած նոր համաձայնութեան պալմանները ձեռնառու, վասնորոջ քաղ. վարչութիւնը վճռում է. «Վապել անանուն ընկերութեան հետ նոր կոնտրակտ, հիմք ընդունելով հին կոնտրակտները և չիշեալ պալմանագիրը, որ և ներկալանել դումալի բարեհաւեցողութեան՝ ֆինանսական չանձնաժողովի և զրակացութեան հետ միասին»:

Քաղաքազուի պ. Եւանդուլեան մնում է առանձին կարծիքի թէ պէտք չէ ֆինանսական չանձնաժողովի խնդիր չինել, որովհետև ալդ գործը չէ պահանջում անմիջական ֆինանսական ծախսարարութիւն, իսկ ֆինանսական իրաւասութիւնից դուրս է հղրակացութիւններ տալ քաղաքալին վարչութեան վճիռների վերաբերմամբ:

Սակալն ֆինանսական չանձնաժողովը, որը հետեւեալ կազմութիւնն

ունի—նախագահ՝ Ա. Բաբով, անդամներ՝ Ալ. Նւանգուլով, Մ. Շեստակով, իշխ. Պ. Արզումանյանի-Դուրդուրով և Ի. Պսարով, «քննելով քաղաքային վարչութեան անանուն ընկերութ. վերատեսուչ Ռոբի Նալճալիսի 29-ի կապարած խորհրդակցական նիստի արձանագրութիւնը և քաղաքային վարչութեան լուծիսի 2-ի կապարած վճիռը անանուն ընկերութեան հետ կոնտրակտ կապելու մասին, անհրաժեշտ է համարում հաստատ մնալ քաղաքային դումայի 1897 թ. սեպտ. 29-ի կապարած որոշման վրա՝ ձիաքարչի և երկաթուղի վերաբերմամբ, որը ընդունած էր 57 ձայներով ընդդէմ 2-ի»¹⁾։

Ներկայ տարւալ լուծիսի 22-ին քաղաքային դուման որոշում է Էտաձընլ մինչև սեպտեմբեր ամիսը էլէքտրական ձիաքարչի և շահագործման խնդրի մասին անանուն ընկերութեան և ինժեներ Վաղբէկի առաջարկութիւնների վերաբերեալ քաղաքային վարչութեան եղբակացութեան քննութիւնը, թողնելով որ վարչութիւնը մինչև ալդ ժամանակ բանակցութիւնների մէջ մտնի ձեռնարկող ընկերութիւնների հետ և պարզի բոլոր մանրամասնութիւնները՝ նշանակելով նոր առաջարկութիւնների ընդունելութեան վերջնական ժամանակը մինչև սեպտեմբերի 1-ը 1893 թ.։

Քաղաքային վարչութիւնը տեղական լրագրերում հրատարակութեան է տալիս դումայի իշխալ որոշումը, հրաւիրելով ցանկացող ընկերութիւններին մինչ սեպտ. 1-ը իրանց առաջարկութիւնները ներկայացնել։

Ստացում են դարձեալ երկու առաջարկութիւններ. «Compagnie de traction et d'électricité» և «Trust, france-belge de Tramway et d'Electricité» ընկերութիւնների կողմից։ Ներկայ սեպտեմբերի 9-ին դուման (քաղաք. խորհրդարանը) քաղաքային վարչութեան առաջարկութեամբ, ընտրում է մի լանձնաժողով, որը վարչութեան հետ միասին պէտք է քննութեան ենթարկէր ձիաքարչների կոնցեսիայի վերաբերեալ բոլոր ստացած առաջարկութիւնները։ Ընտրած անձերն էին. Մ. Գոլուխանով, Ն. Կարապետով, Ա. Բաբով, Ա. Նւանգուլով, Ն. Գրիկուրով, Ա. Բալանժար, Ի. Սուլխանով, Լ. Մղէբրով և Ի. Թալիրով։

Նախ՝ ալդ միացեալ ատենը (соединенное присутствие) ալսինքն լանձնաժողովը և վարչութիւնը, քննութեան և տեղ տեղ փոփոխութեան է ենթարկում նորմալ պայմանագրի պրօէկտը, որ քաղ. վարչութիւնը ամառս կազմել էր քաղաքային ձիաքարչը կոնցեսիայի տալու համար. և աճեռահետ մանրաքննին տեսութեան առնելով իշխալ ընկերութիւնների առաջարկները և պարզելով նրանց համեմատական առաւելութիւնները և պակասութիւնները քաղաքի շահի տեսակէտից, իր Սեպտ. 18-ի խառն նիստում կապացնում է հետեւեալ որոշումը։

1. Թիֆլիսի ձիաքարչի կոնցեսիայի վերաբերեալ առաջարկները

¹⁾ Постановление финанс. комис. 5—6 Июня 1898 г.

քննելուց չիտող, միացեալ ատեանը ֆրանս-բէլգիական ընկերութեան առաջարկութիւնը դտաւ ամենաձեռնտու:

2. Քննելով նորմալ պալմանագրի նախագիծը, կազմած վարչութեան ձեռքով, միացեալ ատեանը իր կողմից կարծում է հաստատել վիշեալ պալմանագիրը ահա փոփոխութիւններով, որոնք չիշատակած են աչդ առիթով կազմած արձանագրութիւններէ մէջ:

«Գ. Եւանգուլով (քաղաքապետ) ահա առանձին կարծիքին է, որ անհրաժեշտ է բոլոր ընկերութիւններին միեւնոյն պալմանների մէջ դնել. ախինքն ներկայացնել նրանց նորմալ պալմանագիրը բոլոր փոփոխութիւններով, ինչպէս նաև բոլոր մրցակից ընկերութիւնների առաջարկները, նշանակելով ժամանակ Սեպտ. 21-ը մինչև ժամի 2-ը, նրանց կողմից վերջնական չափաբարութիւններն ընդունելու համար»:

«Քաղաքապետի կարծիքի հետ համաձայն է Ն. Կարապետով»:

«Մենք ներքոյ ստորագրեալներս, միացեալ ատեանի քննած բոլոր առաջարկները գտնում ենք վնասակար քաղաքի համար, վասնորոջ նրանցից և ոչ մէկը չենք առաջարկել զումալին: Ա. Բաբով, Ա. Եւանգուլով»:

«Չափաւոր Մղէբրով, թողնելով ժողովը, խնդրեց չիշատակել, որ նա համաձայն է ձախաւոր Բաբովի և Եւանգուլովի չափած առանձին կարծիքին»:

Ձիաքարչի խնդրի մէջ ձախաւորներից մէկը պ. Ա. Եւանգուլովը աչքի է ընկնում հարցը լրջօրէն և խորապէս ուսումնասիրելու եռանդով, նա քաղաքապետն տնտեսութեան ձեռք և երեք ընկերութիւնների՝ բելգիական (ներկայացուցիչ Ռոբի), ֆրանս բելգիական (ներկայացուցիչ Պըտի) և արաքցիալի (=քարչի) և էլեքտրականութեան (ներկայացուցիչ Վէլնշտով) ընկերութիւնների առաջարկները համեմատական մեթոդով քննելով գալիս է ահա եզրակացութեան, որ քաղաքի տնտեսական կառավարութիւնը (աչախինքն եթէ քաղաքը ինքը իր ձեռքով գործը վարի) կը տալ կրկնակի օգուտ, քան եթէ աչդ ձեռնարկութիւնը ընկնի կոնստիտուցիաների (կապալաւորներ) ձեռքը. սպասէս օրինակ, եթէ ամենաերկար ժամանակեալ կոնստիտուցիան (37 տարի) տրի ձիաքարչը, աչդ միջոցում ստացւած 13.200.000 ռուբլի զուտ արդիւնքը կը բաժանէր աչսպէս.

ա, Կոնտրապէնտի (կամ կոնցեսիալի) ժամանակ

Ռոբիի օրով կոնտրապէնտին 9.300.000 ռ., քաղաքին 4.000.000 ռ.

Պըտիի « » 5.200.000 ռ., « » 7.900.000 ռ.

Վէլնշտովի « » 6.900.000 ռ., « » 6.300.000 ռ.

բ, Քաղաքի տնտեսութեան ժամանակ քաղաքը կը ստանար 11.100.000 ռ.

Նա իր ղեկուցման մէջ, որ տպագրւած է փաստերի հիման վրայ, չօշափում է խնդրի և ուրիշ կողմերը, եզրակացնում է, որ «բոլոր երեք

առաջարկները, համեմատաբար քաղաքի տնտեսութեան ձևի շահագործութեան հետ, որպէս վերաստու քաղաքի շահերին, պէտք է մերժել»:

Ա. Աւանդուլովի աչդ կարծիքին կցած ենք դտնում լանձնաժողովի երկու անդամների կարծիքները որոնք չարել են նոյն կարծիքին:

Չեմ կարող չլինել այստեղ իրաւասուններից նաև մէկին, աչն է Ն. Ի. Թամաշեւին, որը նոյնպէս առանձնապէս զբաղւել է խնդրով և որը բուրովին Ա. Աւանդուլեանից տարբերում է իր արտապալտած ոգով և տրամադրութեամբ զէպի խնդիրը: Նա իր ղեկուցման մէջ գերազանցութիւն տալիս է անանուն ընկերութեան. նա չափնում է, որ քաղաքը հին կոնտրաքտով աչնպիսի պաշտանների մէջ է դրած որ «ով աւելի ձեռնտու պաշտաններ առաջարկի, թող նրան էլ տրւի ձիաքարչը, բալց և աչնպէս ես կասկածում եմ, աւելացնում է նա, թէ ուրիշին տալով աւելի ձեռնտու լինի քան եթէ տրւէր անանուն ընկերութեան»: Արկնում եմ, գրում է նա մի ուրիշ տեղ, ես քաղաքաչին տնտեսութեան ձևին եմ թէև չարած, բալց զժբաղտաբար, մենք կոնտրաքտով աչնպէս ենք դրած, որ ուրիշ պատուաւոր և ձեռնտու ելք չկալ, բացի դատաստանական ճանապարհը». և աչս գրում էր նա չունիս և չուլիս ամիսներին: Մեզ վրա ընդհանրապէս համոզած, անկեղծ խօսքի տպաւորութիւն չէ գործում անանուն ընկերութեան օգտին վերջինիս պաշտպանողական ղեկուցումը, չնայելով որ չաճախակի կրկնում է թէ ինքը «քաղաքի շահն» ունի միաչն ի նկատի:

Տեսնենք դուման (խորհրդարան) ինչպէս վերաբերւց զէպի աչդ խնդիրը: Դումաչի սուար մեծամասնութեան տրամադրութիւնը արտապալտում է որոշ կերպով ձիաքարչի խնդրի մէկ կէտում, աչն է չետ գնել ձիաքարչը. բալց կոնցեսիաչի տալ թէ քաղաքի տնտեսութեան տակ աւանել աչդ է որ դառնում է տարածաչնութիւնների առարկալ:

Դիմադրականը (օպոզիչիալ), գոնէ սրա աչքի ընկնող անդամները խիստ պաշտպան են հանդիսանում քաղաքաչին տնտեսութեամբ վարելու ձևին: Դիտրցովը (խոշոր դրամատէրերի) կուսակցութեան կամ ղեկավարող սկզբունքն է կոնցեսիաչի տալը: Աչդ պարզապէս արտապալտեց Դումաչի մէջ թեր և զէմ տեղի ունեցած ճառախօսութիւնների մէջ Սեպտեմբերի 21-ի և 23-ի նիստերում:

Սեպտ. 21ի նիստում վարչութեան անդամ Վերմիչեւը չաչնում է թէ պէտք է խնդիրը շուտով լուծել, քանի որ կանցեւիժներներից մէկը հաղորդել է, որ եթէ աչդ նիստում հարցը չվճուի, աչն ժամանակ ինքը ստիպւած կը լինի հրաժարել իր առաջարկից:

Դիմադիր անդամները (Խուզադով, Բաբով և աչն) գտնում են, որ չտապել պէտք չէ, ի նկատի ունենալով որ իրանց առջև դրած է մի աչդաչիսի լուրջ գործ: Կոնստ. Մ. Ալիխանովը (դրամատէր կուսակցութեան աչդ

ղեցիկ անդամը) նույնպես չէ ուղում, որ շտապեն կոնցեսիայի տալու, շտապեցնել ուղտիմատումը չէ կարող, ասում է նա ունենալ աչն նշանակութիւնը, որ տալիս են նրան: Մինչև ձիաքարչի գնելը աչնքան կարճ միջոց է մնում, որ կոնցեսիոնէրը, որքան էլ ցանկանալու լինի, անկարող է պատրաստուել մինչև ալդ ժամանակ ընդունելու ձիաքարչը, ևս առաւել, որ նրա ներկայացուցիչը պէտք է միևնույն ժամանակ բանակցութեան մէջ մտնի արտասահմանում գտնուող իրանց ընկերութիւնների հետ:

Բալց պ. Ալիխանովը չէ ուղում շտապել, նա առաջարկում է Վերմիլենին հրաժարել վարչութեան անդամութիւնից, ժամանակաորապէս նրա պաշտօնը լանձնել ուրիշ հմուտ անձի, Վերմիլենի ձեռքը տալ ձիաքարչը և չեղող արդէն վճել կոնցեսիայի հարցը:

Ձաջնաւոր Եւանդուլեան հարցը կտրական է դնում, որ պէտքէ դուժան անմիջապէս վճել—ձեռնառու են թէ ձեռնառու չեն քաղաքի համար ընկերութիւնների առաջարկները:

Իսկ ձաջնաւոր Աբգ. Յովհաննեսեանը խնչ է ասում. «չէ կարելի ալդպէս առանց ալիակալութեան (безперемонно) վարել անանուն ընկերութեան հետ. քննել վարչութեան ձեռքով կազմած նորմալ պալմանագիրը և ամենից առաջ անանուն ընկերութեան առաջարկել, որը ուրիշներից աւելի շուտ իր պալմաններն առաջարկեց, որով և մրցութիւն առաջ բերեց»:

Դուժալի որոշմամբ կարդացում է և քննութեան առնուում միացեալ ատենանի ղեկուցումը երեք ընկերութիւնների առաջարկների մասին, որի եղրակացութիւնը թէ Ֆրանս-Բելգիական ընկերութեան առաջարկը կոնցեսիայի ժամանակին և թէ քաղաքին տալիք վճարների նկատմամբ հանդիսանում է ամենաձեռնառու, ընդունեց դուժալում ձաջնից մեծամասնութեամբ: Կարդացեց նույնպէս ձաջնաւոր Ա. Բ. Եւանդուլեանի առաջին կարծիքը, որով հաստատում է քաղաքի տնտեսութեան ձեռք ուղէս շահագործութեան ամենաձեռնառու միջոց քաղաքի համար:

Բալց դուժան չզբաղեց աչն խնդրով թէ լիչեալ ընկերութիւնների առաջարկների հետ համեմատաբար քաղաքի տնտեսութիւնը կարող է ունենալ արդեօք կրկնակի օգուտ թէ ոչ, ինչպէս պնդում են Ա. Եւանդուլեան և ուրիշները: Ընդհակառակը, երբ ձաջնաւոր Բաբովը ընկերութիւնների երեք առաջարկութիւնների դիմաց լամառութեամբ լալտնում է, որ քաղաքի համար բոլոր ընկերութիւնների առաջարկների օգտաւէտութեան իբրև չափը կարող է ծառայել միայն տարեկան մուտքը, որ կ'ստացւէր ձիաքարչից, երբ սրա շահագործութիւնը քաղաքի ձեռքում լինէր, մեղ անհասկանալի պատճառով պ. Նախագահը խստութեամբ ճնշում էր իրաւասուի կարծիքը, թող չտալով նրան տնտեսական ձեռք մասին խօսքը շարունակել: Սակայն պ. Ալիխանովը, որը, ըստ երևութին քաղաքիս զրամատէր դասակարգի հաւատարիմ արտալայտիչն է հանդիսանում, շտտ բան տե-

սաւ ալդ խնդրի վերաբերմամբ: Նա գիտէ թուէնքից օգտել. և արժամանակ, երբ անդամ Վերմիշէնը մի գլուխ շտապեցնում է, որ վերջնական պատասխան տրւի կոնցեսիոնէնէրներին, երբ խռովագործ պնդում է չետածդել խնդիրը, մինչև որ ձայնաւոր Ա. Եւանգուլեանի փառաբերը ըստ արժանոյն կ'դնաճատեն և մինչդեռ քաղաքագլուխը իր առաջարկը կ'կազմի, կը քուէարկի և կ'մերժի, ահա ալդ անորոշութեան և տատանման ժամանակ քաղաքագլուխը պ. Ալիխանովի ձեռքունէ. դուման իր ժամանակին սկզբունքով որոշել է գնել ձիաքարչը, չափում է նա, և ոչ թէ տալ ուրիշների կոնցեսիալով օգտուելու. մենք՝ դեռ գնենք և ապա թէ որոշենք տալ թէ չտալ կոնցեսիալի. ալդ հրեք առաջարկ անողները չպէտք է մեզ ներկա գցեն. ուստի պէտք է մերժել բոլոր առաջարկները և գնել ձիաքարչը:

Դուման մեծամասնութեամբ ընդունում է ալդ առաջարկը:

Խնդրի ալտալիսի ելքը ցնծութիւն պատճառեց գլխաղիւր անդամներին. և կարող էին նրանք սպասել, որ դրամատիրական կուսակցութեան ազդեցիկ մի անդամը կ'պար նրանց օգնութեան՝ կարծիք չկալ, որ ալ էր պ. Ալիխանովի ցնծութեան շարժառիթը և ալ՝ գլխաղրական անդամներինը: Մենք ալս ասում ենք ալն հիման վրայ, որ պ. Ալիխանովի բռնած ընթացքը ալդ խնդրում հաստատում են ալն տարածած լուրի ճշտութիւնը, թէ տեղական դրամատէրներին պարագլուխները վճել են իրանց ձեռքը պցել ձիաքարչի շահագործութիւնը. թէ իբր ինչու թոյլ տալ, որ ուրիշ երկիրների բուրժուազիան երկրի կապիտալը արդիւնաւորի: Զիտաքարչի խնդիրը դեռ լուծած չէ. և նա դարձեալ հանդէս է գալու դումալում և պ.պ. Ալիխանովները թւում է ինձ թէ վերջապէս կ'պարզեն իրանց միտքը ձիաքարչը կոնցեսիալի սալու տեղական հարուստներից կազմած ընկերութեան: Եթէ ալդպէս լինի, ապա ուր կ'մնան տնտեսական ձևի պաշտպանների ջանքերը դումալում. կ'յաջողցնեն արդեօք նրանք դուրս բերել ալդ, թէ դրամատիրական կուսակցութիւնը չանձին Ալիխանեանների չաղթանակը կտանէ. մենք դժբախտաբար հաւանք ենք դէպի վերջին դրութիւնը ¹⁾. սկզբունքի խնդիր է ալդ և դրամատիրականը դումալում մեծամասնութիւն է ներկայացնում:

Սեպտեմբերի 28-ի ժողովում լանձնաժողով ընտրեց երեք հոգուց բաղկացած (Վէտցէլ, Նակիմով և Տիգրանեանց), որոնք դումալի որոշմամբ վարչութեան անդամ Վերմիշէնի հետ միասին պէտք է հոգան մինչև Հոկտեմբերի 25-ը պատրաստել ամեն ինչ (оборуживаніе) ձիաքարչը բանեց-

¹⁾ Ալդ սպասելիքը ի դերն է ելնում ցնորհիւ ալն հանդամանքի, որ երկրիս կառավարչապետը թոյլ չտուեց քաղաքալին փոխառութիւնը ձիաքարչը չետ գնելու համար:

նելու, ալ և մշակին պրօէկտ ապագայ շահագործութեան ձևի մասին: Այդ նիստում պ. Արգ. Յովհաննիսեան իր երկար ատենաբանութեամբ երկիւղ էր չափաւոր թէ ժամանակին պատրաստ չի լինի և քաղաքը անկարող կը լինի բանեցնել ձիաքարշը: Խօսեց և Մելիք-Նուբարովը, որը վիրաւորական ակնարկներ ուզեց անել ձաջնաւորներից սրա-նրա հասցէին, որոնք վարձատրութիւն են ստանում ձիաքարշի համար իրանց թափած ջանքերի համար և որին ըստ արժանոյն պատասխանեց Բաբովը: Երկար խօսեց մանաւանդ լատուկ ձիաքարշի համար ձաջնաւորներից ընտրած լանձնաժողովի անդամներին վարձատրութեան մասին, ինչպէս և վարչութեան անդամ Վերմիշելին տրամաւոր դիրեկտոր Նշանակելու մասին: Այդ հարցերը դեռ չեն վերջացած, կրկին հանդէս կը գան դումաւում և մենք առիթ կունենանք վերադառնալու նրանց, բայց ալժմից չափոնք, որ եթէ քաղաքը բաղդ կունենալ իր ձեռքն առնելու ձիաքարշը, սրան կառավարելու համար պէտք է Նշանակել մի հմուտ կառավարիչ լաւ ռոճիկով ոչ դումաւի ձաջնաւորներից և ոչ վարչութեան անդամներից: Դուման կը տալ հրահանգ, վերահսկող մարմին կը ստեղծէ լատուկ ձիաքարշի համար մի քանի հոգուց բաղկացած, որը հրահանգի հիման վրայ հսկողութիւն կունենալ թէ կառավարչի և թէ ընդհանրապէս ձիաքարշի վարչութեան վերաբերեալ: Իսկ այդ վերահսկող լանձնաժողովի անդամները պէտք է անպայման վարձատրեն իւրաքանչիւր նիստի համար: Ինքնըստինքեան սրանք երկրորդական հարցեր են կազմակերպութեան վերաբերեալ, հեշտ լուծելի հարցեր: Բայց գլխաւոր խնդիրն ալժմա ալն է, պէտք է լաւ զինւեն, կրկնապատկեն իրանց ջանքերը, որ ալք արդիւնաւոր ձեռնարկութիւնից օգտւած լինի ընդհանուրը, քաղաքը...

Ձիաքարշը լետ գնելու գործը հանդիպեց սակաւն մի վերջին արգելքի ևս. հոկտ. 14-ին դումաւի նիստ դումարեց նահանգապետի կողմից առաջարկած մի հարցի վերաբերմամբ, որ ծագել էր ալն առիթով, որ պ. Ռոբին նորից առաջարկութիւններ էր արել զրդելու համար որ ձիաքարշը 32 տարով բելգ. ընկերութեան ձեռքում մնալ: Դուման ձաջների ահաբիւն մեծամասնութեամբ վճռեց սակաւն ալ ևս ոչ մի առաջարկ չընդունել և լետ գնել: Առաջարկի մանրամասներն և դումաւի նիստում ալք առիթիւ փոխանակած մտքերի մասին սակաւն մենք առիթ կունենանք ալ անգամ խօսելու ¹⁾:

Տ. ԱՐԿՈՄԵԴ

¹⁾ Որպէս նախորդ ծանօթութեան մէջ ասուեց՝ այս ամբողջ գործին նոր ընթացք է տրուում ալժմ, որովհետեւ կառավարչապետը մերժեց 200.000 ռուբլու փոխառութիւնը:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԻՆ.

Խմբագրութիւնս Մուրճի տասնամեակի առիթով ստացել է Պետերբուրգից երկու հեռագիր, մէկը «Ուսանողութիւն» ստորագրութեամբ, միւսը Պետերբուրգի Հայերից՝ քսան հոգու ստորագրութեամբ՝ տիկիներ, Կանանց կուրսերի պրոֆեսոր, բժշկական խրուրդիական ակադեմիայի դոցէնտ, ալլ բժշկապետներ, որոնց մէջ և մեր աշխատակիցը, քահանայ և տեղական վաճառականներ—Ստացել ենք նաև հեռագիր Ազուլիայից, 12 հոգու ստորագրութեամբ, մի ուղերձ Նոր-Նախիջևանից 9 հոգու ստորագրութեամբ, ալլ և նամակներ զանազան տեղերից: Այդ բոլորը մենք կը տպագրենք Մուրճի հոկտեմբերի (ՁՅ 10) համարում, որը լոյս ենք ընծայելու արտակարգ մեծութեամբ, նուեմբեր ամսին, ի լիջատակ Մուրճի տասնամեակի: Այդ առիթից օգտուում ենք լալտներու, որ Մուրճի հրատարակութեան չափարարութիւնը լոյս տեսած լինելով հոկտեմբերի 25-ին 1888 թւականի, Մուրճի տասնամեակի արտակարգ համարը մենք սրուեցինք կապել հոկտեմբերի №-ի անւան հետ:

ՄՈՒՐՃԻ ՏԱՍՆԱՄԵԱԿԻ ՀԱՄԱՐՈՒՄ ղեկեղելու ստացած ենք, բացի № 6 և 7—8-ում լիջածներէից, նաև Շանթ—«Գարձը» (վկայիկ). Գ. Բաշին-Շաղեան՝ «Առաջին սէր»։ Գր. Վարդանեան՝ Ազկաբնակութեան խընդիր, Միքայել Յովհաննիսեանց՝ «Սոցիալական էտիւլայիւն»։ Ֆրիդոն Մարդանեանց՝ Հաշապահական գիտութիւնների նշանակութիւնն ու կարևորութիւնը, Ատոմ Շահէն՝ Մահւան առջև (թարգմ. Փրանս, գործ Քալգերի), Յակոբ Յակոբեանից՝ թարգմ. Ֆրուգիւց: Ալլ և սպասում ենք պ. Մանէլեանից, Ալ. Ծատուրեանից, Աւ. Խոսակեանից, Յով. Տէր-Միրաքեանից, Պ. Աղբալեանից և ալլ մշտական աշխատակիցներից:

Պր. Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ ՅՕԳԻԱՇԻ մասին, որ վերջանում է ներկայ համարում, հարկ ենք համարում աչս երկու խօսքն ասել: Մշակւած լոգւած է, անկասկած, և կը կարդացւի մեծ հետաքրքրութեամբ: Հեղինակի զատողութիւնները լենում են մի առողջ հիմքի վրայ, որի

համար և նա արժէք է ստանում մեզ համար. ալդ այն է, որ գործը խորհրդագրին է քան խօսքը: «Լևոնի վիշտը» պոէմալի մէջ չի երևում որ Լևոնը ցանկութիւն ունենար խօսքից գործի անցնելու, և չի երևում, որ Լևոնը կամենար որ և է զոհաբերութիւն լանձն առնել՝ ժողովրդի համար աշխատելու, և նա, հալրենիքի դրութիւնը որոնելով՝ դատապարտում է և թողնում հեռանում ժողովրդի երկրից: Ճիշդ է նաև, որ պ. Շահազիզը 1864-ից դէս ալ ևս հասարակաց պիտոցքի երգիչ չեղաւ: Ալդ երկու դժերի վրալ պ. Կուսիկեանը հիւսել է իւր չօղւածը, նոյն իսկ ճարտարութեամբ, թէև ոչ առանց հակասութիւնների: Բայց ալդ ճանաչարհի վրալ, ըստ մեզ, պ. Կուսիկեանը անհրաժեշտ եղածից աւելի հեռու է գնացել: Եթէ Լևոնի «գործելու» եղանակը մեզնում չկուս կազմած լինէր, որի դէմ հարկ լինէր մարտնչել,—պ. Կուսիկեանի ցատումը կ'ունենար աւելի իրական հիմք և հասկանալի կ'լինէր. բայց երբ Լևոնը իբրև գործիչի զիպար մնացել է մեկուսացած և երբ ալժամ «Լևոնի վիշտը» ներկայանում է աւելի իբր մի գրական չիշատակարան 60-ական թւականների, պ. Կուսիկեանի դատափետելու եռանդը զժւար է բացատրում գրական քննադատութեան պահանջներով:—Պր. Ս. Շահազիզեանը, սակալն, իբր քնարերգակ բանաստեղծ, զեռ շատ երկար, գուցէ և միշտ պահպանելու է իւր նշանակութիւնը. Բայց, մեր աչքում, գորանով չի սպառում բոլորը. պ. Շահազիզեանի «Հրապարակախօս ձալնը», որ պ. Կուսիկեանը միալն պարզ չիշատակելով է անցնում, տալիս է պ. Շահազիզեանի աշխարհացութեան մի բովանդակութիւն, որը անշուշտ կարևորութիւն է ներկայացնում մանաւանդ այն սերունդների համար, որոնք պ. Շահազիզին ոչ միալն ճանաչում են իբր «Լևոնի վիշտի» հեղինակի, ալ և իբր ուսուցչի և ոգեկան դաստիարակի:

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ծամբորդութիւնը, որի մասին անցեալ ամիս կարճառօտ տեղեկութիւն տւինք, հետևեալ ուղեգրիձն ունեցաւ: Յուլիս 26-ին մեկնումի Ս. Էջմիածնից. զիշերեց Մողնու Ս. Գէորգ վանքում, 27-ին եղաւ Էլարաբուլազ գիւղում Սարգիս արքեպ. մօտ, ուր և զիշերեց, 28-ին Բճնի գիւղում զիշերեց, 29-ին Ծաղկունք գիւղում, 30-ին հասաւ Սևան ուր և զիշերեց. չուլիսի 1-ին մեկնելով Սևանից օգոստ. 1-ին հասաւ Նոր Բալաղիդ, ուստից Գարալագեալի ճամբով հասաւ Ս. Խաչ վանքը, ուր և օթեանեց, օգոստ. 12-ին ժամ 11-ին Վեհափառը ժամանեց Տաթևի վանքը, ուղևորութեան զլիաւոր նպատակներից մէկը:

Օգոստ. 14-ին առաւ ժամ 8 մեկնումն Տաթևից Գեորիս. ճամբին Սախկալ-Թուրքան անտառում Հալիձորեցոց առաջարկած նախաճաշ. ապա դիմաւորումն Շինուհայր, Խոթ և Քարահունջ գիւղերի բնակիչների. մուտք Գեորիս ուր իջնանեց Մանուշար բէկ Մելիք-Հուսէյնեանցի տանը: Օգոստ. 15-ին ուղևորեց Շուշի. ճամբին դիմաւորումներ հալ գիւղերից. երեկոյեան ժամ 7-ին հասաւ Թթուջուր, ուր գիշերեց պ. Աբրահամեանի բնակարանում: Օգ. 16-ին ժամ 8-ին մուտք Շուշի քաղաքը, ուր նախ մտաւ Ղազանչեցոց եկեղեցին, իջնանեց Ղուկասեանների տանը. 2 ժամից չետոյ իջաւ եկեղեցին. քարոզ խօսեց. աչցելեց ոռոսաց եկ., մահմեդակ. մղկիթը, ռէալակ. դպրոցը, Մեղրեցոց և Ս. Յովհաննու եկեղեցիները, Լուսա-նաց անապատը և ժամհարեանց քաղաքալին հիւանդանոցը. սուրճ վաչկեց ժամհարեանների տանը:

Օգոստ. 20-ին ուղևորութիւն Ամարասի վանքը, ուր ներկայեցաւ երեկոյեան ժամերգութեան և գիշերեց: Օգ. 21-ին ուղևորեց Գանձասար, ճանապարհին մտնելով Ճարտար գիւղի եկեղեցին, հանգըստանալով Գիշի գիւղում Սարգիս Մահեստի-Բարաչեանի ալգում, Յովհան. Քամալեացի չերամի գործարանի մօտ, ուր ճաշեց և դիտեց գործարանը. Նոր-Շէն գիւղում մտաւ եկեղեցին և իջնանեց գիւղում: Օգոստ. 22-ին հանգիստ Խրամորթ գիւղի պարտէզում, ուր և նախաճաշեց. երեկոյեան ժամ 8-ին ժամանեց Գանձասար:

Օգոստ. 25-ին վերադարձ Շուշի. ճամբին հիւրատիրեց Առաջաձորի բնակիչների կողմից, չինարիների հովանու տակ. Աէլիլէն գիւղում հանգիստ, գիշերեց Գաչաուլաղ գիւղում. օգ. 26-ին հանգիստ Խանածախ գիւղում, ճաշ Խանքեանդ առանում, ուր աչցելեց հսկոց և ոռոսաց եկեղեցիները. մուտք Շուշի, ուր դիմաւորել էին գաւառապետը, քաղաքագլուխը և պատւաւոր անձինք՝ ձի հեծած:

Օգոստ. 31-ին կէսօրից չետոյ ժամ 2-ին վերադարձ Տաթև. ժամ 4-ին Թթուջուր, իջնանեց պ. Աբրահամեանի տանը. սեպտ. 1-ին առաւօտ. 7¹/₂ ժամին Թթուջուրից դէպի Գեորիս. ճամբին դիմաւորումն Ղարաղլաղ գիւղացոց. հանգիստ Զաբուխ գիւղում. ճաշեց, ընթերցեց և գիշերեց Տեղ գիւղում, ուր գաւառապետն ու ձիււորներ ընդ առաջ էին եկել. սեպտ. 2-ին մուտք Գեորիս, ուր և գիշերեց: Սեպտ. 3-ին առաւ. 9¹/₂ ժամին մեկնում Գեորիսից. Քարահունջ գիւղում իջնանեց Ծատուրեանների աւանը, աչցելեց եկեղեցին, օրհնեց Առ. Ծատուրեանի ծնողաց գերեզմանը: Սախկալ-Թուրքանի անտառում ժողովրդական ցուց, հանգիստ և թէյ: Երեկ. ժամ 6-ին Տաթև:

Սեպտ. 5-ին մեկնում Տաթևի վանքից. հանգիստ Տաթև գիւղում. նախաճաշ. գիշերեց Լորի գիւղում: Սեպտ. 6-ին Գետաթաղ և

Դարաբաղ գիւղերի միջով անցաւ Ուզ գիւղը, ուր ճաշեց. գիշերեց Բռնակոթ գիւղում. սեպտ. 7-ին ընդունեց Մադրա գիւղի բնակիչներին կողմից գիւղից 3 վերստ հեռու պատրաստած ճաշը. ժամ 5-ին եղաւ Բիչանակ գիւղում, ուր դիմաւորեցին Հին-Նախիջևանի փոխանորդն ու պատգամաւորութիւնը. գիշերեց ալդտեղ: Սեպտ. 8-ին մուտք Նախիջևան քաղաքը. դիմաւորութիւն քաղաքագլխի և զազիի. մուտք եկեղեցի և հանգիստ չաջորդարանում, ուստից ուղևորւեց իւր համար պատրաստած բնակարանը. երեկոյեան եկեղեցում քարոզ խօսեց. գիշերը քաղաքը լուսավառւեց. բնակարանի առջև երաժշտական խմբի նւագում. ընդունեց քաղաքագլխին, քաղաքի իրաւասուններին և ալլ անձերին. սեպտ. 9-ին ալցեյեց հալոց և ուստայ եկեղեցիները և մահմեդականների մզկիթը. ընդունելութիւն ժողովրդեան մինչև կէս գիշեր. երեկոյեան քարոզ եկեղեցում. թէլ երեցփոխի տանը:

Սեպտ. 10-ին մեկնում Նախիջևանից. ճաշ Աբլարախի պոստի կալարանում, գիշերեց Բաշնորաչէնում, գաւառապետի օգնականի մօտ, սրա խնդրանքօք: Սեպտ. 11-ին ուղևորութիւն գէպլի Խոր վիրայ, Դաւալու գիւղի միջով, ուր հանգիստ առաւ. գիշերեց Խորվիրայում. սեպտ. 12-ին գիտեց վանքը և վերադարձաւ Մայր-Աթոռ Ս. Էջմիածին, ուր և հասաւ նոյն օրւալ երեկոյեան:

Այս համառօտագրութեան մէջ չենք լիշատակել ժողովրդական ցոյցերից և դիմաւորումներից շատերը ու ալլ մանրամասնութիւններ. մեծ ընդունելութիւն եղաւ Շուշի քաղաքում երկու անգամ, մանաւանդ Գանձասարից վերադառնալուց չետոյ. Շուշեցիք Վեհափառին ընդունելու համար չատուկ պատգամաւորներ ու մասնաժողով էին ընտրել, որոնք զործեցին ամենալն նւիրածութեամբ: Մի սրտաշարժ էպիգոդ՝—Ղարալչլաղի գիւղի բնակիչները դիմաւորել էին մի պարարտ եզան եղջիրների վրալ եկեղեցական մոմեր վառած, մի ամանով ցորեն ձեռներին. «Հալրիկ, ոտքդ զրիւր մեր հողի մէջ և Աստուծոյ սիրտը անուշտ կը քաղցրանալ մեր վրալ. օրհնիր ալս ցորեանը որ խառնենք մեր սերմացուի հետ. օրհնիր և ալս մատաղալուն, որ ալս օրւան լիշատակի համար նւէր է բերում ժողովուրդը»: Հալրիկը արհեստեցի՝—Վեհափառ ճամբորդեց տեղ-տեղ ձիով, որ նա մեծ կատարելութեամբ կատարում է:

(«Արարատի» տաճ աւելի լիակատար նկարագրութիւնից կազմելով ներկալ համառօտագրութիւնը, առթից օգտուում ենք Էջմիածնի պաշտօնական թերթին նկատել մի բան, որ ալլ գէպքերու ևս միշտ մեր աչքն է ընկել: Դա ալն է, որ նրա խաբագրութիւնը թուլ է տալիս անճշտութիւններ և անորոշութիւններ, որոնցից

մանաւանդ մի պաշտօնական թերթ պիտի զգուշանայ: Արարատում (էջ 395, առաջին սիւնակ) առած է. «14-ին (օգոստ.) առաւօտեան 8 ժամին, Նորին Արքութիւն բարեհաճեց ուղևորել զէպի Գեօրիս»: Նոյն էջ, այ սիւնակում՝ «14-ի առաւօտեան Նորին Արքութիւնը ուղևորեց զէպի Շուշի»: Երկու աւագանն էլ օգոստոսի 14-ի առաւօտեան?—Նոյն էջ այ սիւնակ, Նորին Արքութիւնը (Թթուշուրում)... «զիշերեց պ. Ամբրոսեանի ընակարանում»: Բայց ալդ ազգանունով պարոնը, որը վեհափառին հիւրընկալել է, անուն չունի?—էջ 397, առաջին սիւնակ, վեհափառը Նորից Թթուշուր գալիս, իջնանած ենք տեմնում «պ. Արքահամեանի տանը»: Գարձեալ անուն չկալ. և գուցէ առաջին անգամաւ «Ամբրոսեանը» հէնց նոյն «Արքահամեանն» է?—վեհափառը Նախիջևան է մտնում «8 ժամին» (էջ 398, առաջ. սիւնակ). աւելորդ է համարում ասել ճշտութեամբ՝ նոյն օրւայ երեկոյեան 8 ժամին:—Բաշնորաչէնը կոչւած է Նորաչէն: Մոռացել են լինել թէ վեհափառը երբ հասաւ Լէվիթաձին. (ալդ մենք իմանում ենք միայն մի ալլ յօդւածից). և ալլ և ալլն.):

ՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ: Եպիսկոպոս ձեռնադրեցին լուլիսին Մաղաքիա վ. Տէրունեան, որ ապա ուղևորեց Նոր Զուղա իբր. Լնդկատանի հալոց թեմի առաջնորդ. Սահակ վ. Ալվատեան, որ ուղևորեց Թաւրիշ իբր Ատրպատականի հալոց թեմի առաջնորդ. Յովսէփ վ. որ ուղևորեց Ամերիկա, իբր հոգևոր հովիւ, պատէրով ճանապարհին ալցելիւ Մարտէլի, Պարիզի, Լոնդոնի և Մանչեստրի հալ գաղութներին: Սեպտ. 20 ձեռնադրեցին եպիսկոպոս Կ. Պոլսի պատրիարքի լանճարարութեամբ՝ Կ. Պոլսի պատրիարքական փոխանորդ Գաբրիէլ վ. ձեռահիւրճեան և Զմիւռնիայի առաջնորդ Ներսէս վ. Արսլանեան:

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍՍԱՅՈՒՄ վկայւած է նաև ալս տարւալ համար՝ մանաւանդ Լազանի, Սամարալի, Սարատովի, Սիմբիրսկի, Ուֆալի, Պերմի, վեատկայի և Բեազանի նահանգների վերաբերմամբ, որոնք ալս տարի աւելի են փնտսել քան առիկա տարի: Կարմիր Խաչի ռուսաց ընկերութիւնը դիմումն է արել ամենուրեք՝ ժողովրդին օգնութեան հասնելու համար: Երկրագործութեան միջնորդը ճամբորդում է փնտսած նահանգներում:

ԱՆԴՐԿԱՍՊԵԱՆ ԵՐԿՐԻ ՊԵՏ նշանակւած է գեներալ-լէյտենանտ Բոգոլիւբով:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ: վաղիկակազումներկալ աշնան բացւեց դիւղատնտեսական ցուցահանդէս, որ առաջին անգամն էր ալդ քաղաքում, և Թիֆլիսի 1889 թւականի ցուցահանդէսից լստով երկրորդը կովկասում: Յաջողութիւնը միջակ էր: Ալգեդարձական, մեղաբութական, կաթնատնտեսական, շերամապահական բաժինները

համեմատարար աւելի չափով էին ներկայ էին մասնագէտներ, որոնք ալ և ալ գիւղատնտեսական նիւթերի մասին զոսախօսութիւններ կարողացին:

Թիֆլիսում կապցաւ ակեղործական ցուցահանդէս, որին մասնակցում էին նաև հարաւային Ռուսիայից ակեղործներ:

ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ-ԵԿԵՂ. ԴՊՐՈՑՆԵՐԻ մասին նոր օրէնքը չի տարածւած Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմերի հայոց դպրոցների վրայ, որոնց կալքերը չեն գրաւած:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂ. ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ.

Հայոց եկեղ. ծխական դպրոցների շինութիւնների ու կալքերի գրաւումը աւարտեց դեռ ևս չուլիսի վերջը: Իրենց հարստութիւններով աչքի են ընկնում մշտաւանդ Թիֆլիսում՝ Զովնանեան-Մարիամեան դպրոցը, որը ունէր պատրաստի դրամ շուրջ 62.000 ռ., դպրոցական մեծ շինութիւն և մի քարաճարար, որը տրւած է կապալով տարեկան 25.000 ռուբլով: Փանդուկեան դպրոցը, որի շինութիւնը բերում է տարեկան 4—5000² ռ.: Բաքում՝ Մարդասիրական ընկերութեան դպրոցի շինութիւնը, որը քաղաքի ամենահարեւելիկներիցն է և նստել է շուրջ 200.000 ռ.: Ախալքալաքինը, Ախալցխայինը, Ալեքսանդրապոլինը, Աշտարակինը և մի քանի ուրիշներ:

Հետզհետէ մենք տեղեկութիւններ կը տանք նոր բացւածների մասին, բաւականաչափ ալ միայն մի քանիսով:

Թիֆլիսում բացւած են նոր օրէնքի համաձայն եօթը դպրոցներ:

Ղալար: Երկսեռ դպրոցների անունով գրաււած կալքերը գնահատւում է մօտ 60.000 ռուբլի:

Հոգաբարձունքը և երեցիկները վճարած են դատ բացանել ընդդէմ դպրոցական վերատեսչութեան:

Կաղզւան: Սեպտ. 14-ին կապցած հասարակական ժողովը վճեց հոգալ, որ բացւի միգասեան ծխական դպրոց 2 ուսուցչով, 1400 ռ. ծախքով:

Կարս: Հալ-կաթուղիկների եկեղեցու կից բացւեց միգասեան ծխական երկսեռ դպրոցը, ուր ընդունւած են մինչև 80 աշակերտողներ երկու սեռից: Դպրոցը գտնւում է դպրոցական շրջանի տեսչի իշխանութեան ներքոյ: Հայերէն լեզւի և կրօնի դասերը աւանդում է Կարապետ վարդապետը, որ նոր է նշանակւած հալ-կաթուղիկների հովիւ:

ԿՈՎԿԱՍՏԱՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄԻ ԽՆԴԻՐԸ: Թիֆլիսում բազմաբնոտեան դպրոց բանալու խնդիրը ներկայումս առ երկար լիտաձգած գործ պիտի համարել: Կրթական միջոցաւորութեան արդիւնաբերական դպրոցների կառավարիչ Անտալովի Թիֆլիս ացեկելը հասունացրեց

միայն՝ Թիֆլիսում միջնակարգ տեխնիկական դպրոց հիմնելու խնդիրը։ Ինժեներներ հաստանացնելու պետական պահանջը լրացրած է համարում աչն տեխնիկական դպրոցներով, որոնք կան Պետերբուրգում, Մոսկվայում և խարկովում, և աչն բազմաբնույթի դպրոցներով, որ կալ Ռիգայում և Նորերս հիմնել են Վիենում և Վարշավում։ Առ-
ժամանակ լետածգւած է նաև Օդեսայում տեխնոլոգիական ինստի-
տուտ հիմնելու խնդիրը։

ՊՊՐՈՑԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿ. Թիֆլիսի 3-րդ գիմնազի համար կազ-
մել է, ընդհանուր կանոնադրութեան համեմատ, ընկերութիւն ալդ
գիմնազի կարօտեալ աշակերտներին օգնելու համար։ Հոկտ. 4-ին
ալդ ընկերութեան ընդհանուր ժողովում ընտրւեցին վարչութեան
անդամներ՝ Լ. Գ. Թամաձեան, Գ. Ռ. Քիւչարեանց, Ա. Ն. Միլեան
և Ն. Ա. Քալանթարեան։ Բացի ալդ, կրթական մինիստրի կողմից
նշանակւեցին վարչութեան անդամներ՝ գիմնազի վերատեսուչը և
տեսուչը. գիմնազի մանկավարժական ժողովի կողմից վարչութ. ան-
դամ ընտրւեց Զ. Ա. Նիկիտսկի։

ԿԱՆԱՆՅ ԲԱՐՁՐ ԿՈՒՐՍԵՐԸ Պետերբուրգում հոկտ. 4-ին բուրեցին իրենց
գոյութեան քսանամեակը։ Ալդ առթիւ մի քանի տեղեկութիւններ
Դեռ. ևս 1868 թ. մալիս 11-ին 400 կանաչք, որոնց գլուխ էին կան-
գնած տիկիներ Տրուբնիկովա և Ստասովա, զեկուցագիր ներկա-
ւացրին Պետերբուրգի համալսարանի ռեկտորին, կանանց համար
բարձր կուրսեր հիմնելու համար համալսարանի լսարաններում։ Կըր-
թական մինիստր կոմս Տոլստոյն խնդիրը վճռեց ալս կերպ, որ թոյլ
տւեց կանանց համար ժողովրդական-հրապարակական դասախօսու-
թիւններ կազմակերպել, որոնք և Վլադիմիրեան կուրսեր անունով
սկսեցին 1870 թ. լունիս 20-ին, ունենալով առաջին տարին իսկ
900 ալցելու։ 1875-ին ալդ կուրսերը նախաձեռնողները դադարեցրին՝
գործը աւելի լուրջ հիմքերի վրայ դնելու համար, Ռուս կանանց
արտասահման գնալը բարձր ուսման համար զրոյեց կայսր Ալեքսան-
դր II-ին հրամայել որ մասնաժողով կազմել կանանց բարձր կուր-
սերի կանոնադրութիւն մշակելու համար։ 1876 թ. ապր. 9-ին Բար-
ձրագոյն հրամայեց կրթական մինիստրին թոյլ տալ կանանց բարձր
կուրսերի բացումը համալսարանական քաղաքներում, և կուրսերը
նոր, աւելի լալն ծրագրով, բացւեցին Պետերբուրգում 1878 թւա-
կանին։ Կուրսերի ղեկավարն էր պրոֆ. Բետիւսեւ-Ռիւմին որի հա-
մար և կուրսերը կրեցին Բետիւսեւսկի կուրսեր անունը։ Ուսանու-
հիւների մեծ թիւը և առատ նւէրները թոյլ տւին կանանց կուրսերին
սեպական շինութիւն ունենալ, բալց 1886—89-ին կրթ. մինիստրի
հրամանով դադարեց ուսանուհիների ընդունելութիւնը, մինչև նոր

ծրագիր կ'մշակէր: Կուրսերին նպաստող ընկերութիւնը 1889-ին աղերսագրով դիմեց կայսր Ալեքսանդր III-ին խնդրելով թող տալ ռուսահայերի ընդունելութիւնը, աչդ թողտուութիւնը ստացուեց, բայց արդէն կուրսերի կանոնադիրը կարեւոր փոփոխութիւններ կրեց: Աչդ ձևով կուրսերը շարունակուում են ցաւօր

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

Ուրմիոյ հալաքնակ գիւղերում թաւրիզի Հալուհեաց ընկերութիւնը այս տարի բաց է անում երկու դպրոց, աջակցութեամբ Ատրպատականի հալոց առաջնորդի և Սալմաստի փոխանորդի: (Նկերութիւնը չափապիւր է աչդ դպրոցների համար տարեկան 600 ուռքլի: Ուրմիոյ հալոց վիճակում հալերը կենում են 39 գիւղերում, որոնցից 25-ը Ուրմիոյ և 14-ը Բարանդուղի գաւառակում: Բարանդուղի հալերը մոռացել են հալերնական լեզուն և խօսում են թուրքերէն, Ուրմիոյ գիւղերում՝ հալերէնը սկսել է տեղ տալ ասորերէնի: Ուրմիոյ վիճակում վերջին երեք տարին բացւել են չորս դպրոց՝ քաղաքում, Գեարդաբադ, Նախչան-Թափէ և Ռահա գիւղերում, որոնք զուտ հալաքնակ են: Ուրմիոյ հալերի թէ տնտեսական և թէ բարոյական վիճակը ծաւրացել վատ է:

ՐԱՖՖԻԻ ՄԱՀԱՐՁԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ: Ամսիս 27-ին, կիրակի օր, Թիֆլիս հալոց Խօջիվանք հանգստարանում, ուր թաղած է Րաֆֆին, տեղի ունեցաւ հուշակաւոր վիպասանի մահարձանի քայման հանգէսը: Աչդ առթիւով նախ պատարագ մատուցեց Խօջիվանքի եկեղեցում, ներկալութեամբ թեմի սրբ. առաջնորդ Գէորգ արքեպ. Սուրենեանցի. պատարագիչն էր եկեղեցու քահանան: Պատարագից չետոյ եկեղեցական դասը, ղլխաւորութեամբ թեմի առաջնորդի և պատարագիչ քահանայի, թափօրով ուղեւորեց դէպի Րաֆֆիի գերեզմանը, ուղեկցութեամբ մահարձանի լանձնաժողովի անդամների և հոծ բազմութեան, որ կարելի էր հաշւել մինչև հազար հոգի: Այդտեղ կատարեց հոգեհանգիստ, որով և վերջացաւ ամբողջ հանդէսը: Րաֆֆիի մահարձանը ներկայացնում է մի մոխրագուն մարմարեալ խորանարդ, որի վրայ կանգնեցրած է սպիտակ մարմարեալ սիւն, ներքևի միահաւասար կէսը աւելի հաստ քան վերի նոյնպէս միահաւասար կէսը, ծալքում ունենալով մարմարէ տաւիլ. ամբողջը ութ արշին բարձրութեամբ, որ կատարած է մահարձանի մասնաժողովի անդամ նկարիչ պ. Գէորգ Բաշինջաղեանի նկարի համաձայն, գործ Թիֆլիսի անդրիագործ Անդրոնիտովի: Մահարձանը համեստ բայց վաւելու է:

ՐԱՖՖԻԻ ՄԱՀԱՐՁԱՆԻ ԱՌԻԹՈՎ. Դեռ նախ մի փոքրիկ հաշիւ: Րաֆֆիի մահարձանի լանձնաժողովի ղիմաց նորա անդամ պ. Գաբր. Միր-

գոյեանց հաշիւ հրատարակեց տեղական հաւոց օրաթերթերում: Դորանից երեսաց որ մասնաժողովը ց21-ն դեկտ. 1888 թ. ստացել էր 1019 ռ. 31 կ., որից դուրս եկած 48 ռ. 5 կ. ծախքը, առ 1-ն փետրւարի 1889 թ. մնացել էր 971 ռ. 26 կոպէկ: Այդ գումարից 100 ռ. տրւած է մահարձանի մի պրոէկտ ներկադնողի. պոստալին ծախք ևս դուրս գալով մնաց 870 ռ. 50 կ.: Այդ գումարը շահեց-նելով տարիների ընթացքում դառաւ 1335 ռ. 87 կ., որից 1200 ռ. տրւեց անդրիագործ Անդրիոյէստիին, 135 ռուբլի ևս քարտաշ ար-հեստաւորին:

Այս հաշիւը ցաւակցութեան ձախեր խնց շատերից: Ողբի ար-տասուք թափեց նաև Մշակ լրագիրը, այն էլ մի քանի անգամ: Մշակ'ը ձախակցեց նաև լանձնաժողի հրաւերին, որ 400 ռուբլի ևս հաւաքւի Բաֆֆիի գերեզմանին ցանկապատ չինել տալու համար:

Պէտք է սակայն փարատել ամեն տարակուսանք: «Տարազ»-ի այս տարւալ համարներից մէկում տպւած էր թէ, բացի լանձնաժո-ղովից, Բաֆֆիի մահարձանի համար նոյն 1888 թւականին Մշակի խմբագրութեանը ուղարկւած էր շուրջ 400 ռուբլի: Մշակ'ը չպա-տասխանեց: Նոյնը մենք լսեցինք նաև ալ և ալ անձերից մահար-ձանի բացման օրը: Եւ զարմանալի գուգաղիպութեամբ, թերևս և ակնարկելով այդ 400 ռուբլին՝ մահարձանի լանձնաժողովը իւր հաշ-ւաւութեան մէջ Բաֆֆիի գերեզմանի համար ցանկապատը գնահա-տում է 400 ռուբլի:

Ո՞վ պէտք է փարատի տարակուսանքը. Բաֆֆիի մահարձանի լանձնաժողովը թէ՞ Մշակի խմբագրութիւնը: Յամենայնս դէպս ում պարտքն է՝ թող բացատրութիւն տալ:

ՏԱՊԱՆԱՔԱՐ ԿԻՒՐԵՂ ԵՊ. ՍՐԱՊԵԱՆԻ: Հոկտ. 11-ին, Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքում տեղի ունեցաւ 1895 թ. մարտի 8-ին վախճանւած Երևանի նախկին փոխանորդ Կիւրեղ եպ. Սրապեանի տապանաքարի բացումը, ներկայութեամբ փոքրաթիւ հասարակութեան, զլիսաւորա-պէս թեմ. դպրանոցի ուսուցչական խմբի: Պատարագին էր հանգուց-եալի նախկին աշակերտ Պօղոս Բեդեկեան, Կիւրեղ եպ. չիրիմը գտնում է Ս. Խաչ վանքի զանգակատան հիւսիսարևմտեան կողմում, Տապանաքարը մարմարեայ է և կրում է ի միջի ալոց վէհ. Կաթո-ղիկոս Մկրտիչ I-ի չատկապէս դորա համար գրած հետեւեալ տապա-նագիրը: «Հանգիր, ով ժիր մշակ,—Վաստակեալ ի հունձս Աւետա-րանի.—Երուսաղեմի Մալր Սիոնի ծաղիկ,—Նւրբեցար Էջմիածնի լուսակերտ Սիոնի.—Այլ աւաղ, դու վաղաժամ թառամեցար.—Եւ լռեց քարողչիդ մշտալսոս բարբառ.—Ով դու սիրելի վարդապետ ժողո-վրդեան,—Եկիր ի վերջոյ նորա գիրի հանգչեցար.—Նորոյ Նախիջև-

անի պատւական ազգային ք—կղին զաւս մահարձան ի վերալ գերեզմանիդ, — Որ լոգեաց զանեղձ անձանագիրս՝—Առ ի պահել զանւանդ լիշատակ, — Եւաց ի վերալ նժդեհ շիրմիդ—Հալոց վշտակից Հալրիկ»
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ,

Բարու.—Քաղաքային խորհրդարանը 32 ձայնով ընդդէմ 20-1 քաղաքագլուխ ընտրեց Գոն-գեր-Նոննէին, որը քաղաքային վարչութեան անդամ էր:

Մոզդոկ.—Քաղաքի խորհրդարանից քաղաքագլուխ ընտրւած երդւեալ հաւատարմատար Գ. Ի. Պիտանեանցին թերեքի շրջանապետը հաստատեց: Գրանից առաջ ընտրւած էր պ. Աստածատուր Կաճկաճեանցը:

Երեւանում սպասուում է քաղաքագլխի ընտրութիւն:

Բաթումում ներկա հոկտեմբերի 19-ին կապացան քաղաքային ընտրութիւններ զալ քառամեակի համար. ընտրւեցին 8 ուսու, 7 վրացի, 6 լոյն, 4 հալ, 2 աջարցի:

Նոր-Նոխիջեւան, Հոկտ. 10-ին քաղաքագլուխ ընտրւեց պ. Կ. Մեղքոնեան—Եգեկեան, 22 ձայնով ընդդէմ 5-ի Ռոճիկ որոշւած է 6000 ռ. որպէս առաջ էր: Մինչև այժմ քաղաքագլուխը պ. Մ. Պալապանեանն էր, որը այդ պաշտօնը վարեց տասը տարի, երկու անգամ վերընտրւելով, և երկու անգամ տեղական իշխանութիւնից նշանակւելով. այժմ նա հրաժարեցւեց «Աղքատաց հոգաբարձութեան» գործի պատճառով, Պալապանեանից աւելի առաջ քաղաքագլուխը Գրիգ. Սալթըքեանն էր:

ՄՈՒՐՃ՝ «ԵՂՔԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ» ՄԷՋ: ՊՐ. ԳՐ. ՋԱՆՇԻԵԼԻ խմբագրութեամբ ուսուրէն լուս տեսած «Եղբայրական Օգնութիւն փնտաւած հայերին թիւրքիալում» յանրածանօթ հրատարակութիւնը արդէն լուս է տեսել երկրորդ տպագրութեամբ, որի մէջ կալ նաև «Հալոց պարբերական մամուլի» խորագրով մի լոգւած, որ ստորագրած է՝ Д. Ա. Ալդտեղ տեսութեան են առնւած հալոց (ուսահալ, թէ տաճկահալ և ալ) պարբերական թերթերը՝ անցեալում և թէ ներկայումս օգուածի մէջ որոշւած են առաջնակարգները և երկրորդակարգները. վերջիններս միայն ցուցակագրւած են. իսկ առաջնակարգներին մասին տրւած են նաև կարճ տեղեկութիւններ, ամենաշատը մի տասնեակ առղ ամեն մէկի համար: Աւելորդ չենք համարում աչտեղ առաջ բերել Մուրճ՝ ին վերաբերեալ տողերը, լրտալով, որ եթէ պ. Ջանշիեւի ժողովածուն տպւի մի երրորդ անգամ, լոգւածալիւրը կ'օգտւի մեր ալս նկատողութիւնից:

Տպւած է.

Մուրճ (==МОЛОТЪ) Թիֆլիսում. 1889 թւից մինչև այսօր Դա

միակ քաղաքական հասարակական գրական ամսագիրն է ռուսաց և բոլոր հայոց, Մուրճ՝ը ալլ ամսագիրներինց աւելի երկարակեաց եղաւ։ Սորա խմբագիր հրատարակիչն է Ա. Արասխանեանց, Մուրճ՝ի սկզբներում մասնակցում էին դրականութեան մէջ արդէն չափնի մարդիկ, որպէս Պաշեան, Աղաբեան, Շիրովանզադէ և այլք, իսկ ներկայումս նորա շուրջը խմբել են աւելի երիտասարդ ուժեր, որպէս Մատուրեան, Մանէլեան, Կեմիրճեան, Աղբալեան, Ադէլեան և այլք»։

Դա ակնչափնի թիւրիմացութիւն է, որ չառաջացել է երևի նրանից, որ չօգտածագիրը Մուրճ՝ի սկզբի տարիներին լաւ ծանօթ չէ։ Ճշմարտութիւնը սա է, որ Մուրճ՝ը էն սկզբից չընկալաւ եղել գրեթէ բացառապէս երիտասարդ ուժերով, որոնք կամ բնաւ չափնի չէին և կամ չափ քիչ էին չափնի։ Այժմեանի ու անցեալի մէջ ալլ կողմից տարբերութիւն չկալ։ միայն թէ ոմանք ան ժամանակ էին երիտասարդ, իսկ ոմանք ան ժամ են երիտասարդ. ոմանք ան ժամեակ էին նոր-նոր միայն գրական ասպարէզ առաջ գալիս, ոմանք ան ժամ են նոր-նոր սկսում ասպարէզ գալ։ Հէնց օրինակ՝ չօգտածագրի լիշած «երիտասարդ ուժերից» առաջին երկուսը Մուրճի առաջին տարեալ աշխատակիցներն են, և ոչ միայն ալժմեան։ Իսկ գալով աւելի առաջ չափնի եղածներին՝ նոքա եղել են Մուրճ՝ում առաջ էլ, հիմա էլ։ Բայց միշտ և անխտիր կերպով Մուրճ՝ի աշխատակիցների գլխաւոր մարմինը կազմել են Մուրճ՝ում սկսածները և ոչ Մուրճ՝ից առաջ եղած չափնի գրողները։

ԲԵՐՑԵԼԻՈՒՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ, Նորբրա Շեղական ուսումնական աշխարհը տօնեց իոնան Յակոբ Բերցելիուսի մահւան լիւնամեակը, Նա մեռաւ նոր տոմ. օգոստ. 7-ին 1848 թ.։ Բերցելիուսը հռչակաւոր քիմիկոս էր (ծնւ. 1779 թ., 1807-ից պրոֆեսոր բժշկութեան և դեղաբանութեան Ստոքհոլմում)։ մեծ մասամբ նորա գիտերի վրա է հիմնած ներկայիս քիմիան. գլխաւոր երկն է՝ ֆիմիալի դասադիրք. 10 հատոր, 1843—47. արձանը կանգնեցրած է Ստոքհոլմում 1855 թ.։ ԼԻՆԷ (1707—1778) և Բերցելիուսը Շեղիալի ամենամեծ պարծանքներն են։

ԼՆԻ ՏՈԼՍՏՈՅԻ ԵՕԹԱՆԱՍՆԱՄԵԱԿԻԸ լրացաւ սեպտեմբերի 9 (ն. տ.)։ Ժամանակիս մեծ գրողին Մուրճը լիւրի տել է իւր տուրքը, այս տասնեակ տարիներում նորան ներկելով մի շարք ուսումնասիրութիւններ (որոնցից վերջինը—«Արեւստի մասին»—մնում է շարունակելի)։ Եւ թէն Մուրճ՝ի մէջ երեցած քնադատութիւնները մեծ մասամբ Տոլստոյի դէմ են եղած, բայց նաեւ մեզ մամար Տոլստոյը կալ և կ'իմալ մտքերի զօրաւոր շարժող, ժողովրդաբան մեծ հոգեբան։

ԽՍՍԷՔ ԱՅՆՊԷՍ ԻՆՉՊԷՍ ԳՐՈՒՄ ԷՔ: Մենք փորձով զիտենք, որ երբ կրթւած հալերը գաւառաբարբառով են խօսում, անգիտակցաբար թշնամութիւն են անում հալոց գրական լեզւին և խանգարում գրական լեզւի ու դորա հետ միասին նաև մեր գրականութեան ծաւալումը: Դոքա մեր «ներքին թշնամիներն» են, առանց ալդ գիտակցելու, որ ասել է թէ շատ վտանգաւոր թշնամիներ են: Ալդ իրողութիւնը գրդեց մեզ հրապարակի վրալ դեհլու խօսակցական լեզւի խնդիրը «Խոսէք աշնպէս ինչպէս գրում էք» չողաճների շարքով: Մօտիկ ապագան ցոյց կ'տալ թէ ինչ արձագանք է գտել մեր չորդորը մեր հասարակութեան մէջ, մի չորդոր, որին ձաշնակից լինելը ամեն ինքնաճանաչ հալի կողմից մենք մի ամենաներական պարտք ենք համարում: Հսկական մամուլը, անարժան իւր կոչման, կերած մանրիկ ու տգեղ կրքերով, չլսելու դրեց մեր չորդորը: Նա չկամեցաւ ձաշնակից լինել մեզ, չնայած որ մեր ասածի իրագործումիցն է կախւած հալոց լեզւի ու գրականութեան ամբողջ ապագան: Բացառութիւն կազմեց միայն «Տարաղը», ուր սակայն, ցաւելով ենք նկատում ալս, մեր դրած խնդիրը իւր ամբողջ կարևորութեամբ չըմբռնեց: Չնայած մամուլի ղեկավարների բռնած ալդ չինժու դիրքին, դադափարը անշուշտ իւրը կ'անի և արձագանք կ'գտնի և մամուլը ստիպւած կ'լինի զադափարին սպասաւորել և նորա արած նաճումները արձանագրել: Այսպէս, Մշակի' Ձ 170-ում տուած ենք գտնում Պետերբուրգից գրած ալս տողերը.

«Եկեղեցու բակը լիքն էր ուսանողներով, մեծ մատամբ դարաբաղցիներ: Մօտեցանք մի խմբի. խօսում էին.—Աղա, հիշտեղ իր էսքան վախտ ա—հարցնում էր մէկը:—Հէնց Գանձասարին ծմակներըմը:—Բօ, բօ, աւելացնում է առաջինը—դէ հէնա ասի առչ ըս տեռալ թամամ...: «Մեր ականջները» (վերջացնում է իւր խօսքը թղթակիցը) ծակում էր ալդ խօսակցութիւնը, որքան էլ դա մեր հալական գաւառաբարբառը լինէր: Ժամոնակ է, որ մեր ուսանողները զոնէ դէն գցէին ալդ ձեր և խօսէին մշակւած կանոնաւոր գրական բարբառով:—

Ալդ վերջաբանի մէջ «դոնէ» բառը աւելորդ է. մշակւած կանոնաւոր գրական լեզուով պէտք է խօսեն ամենքը, որոնք ներկայումս արդէն զիտեն գրական լեզուն, ուրեմն ոչ միայն ուսանողները. և դոքա պէտք է մանուկ սերնդի համար գրական մշակւած լեզուն անշուշտ դարձնեն, ինչ որ հին սերունդը դարձրել է վերը չիլած լեզական խժդոթութիւնը ներկայիս նոյն իսկ ուսանողութեան համար: Պէտք է գրական մշակւած լեզուն իւր բոլոր կատարելութիւններով մոցնել ընտանիքի մէջ, որ ալժմեան մանուկը, մեծանալով, վաղը կարողանալ

ձեր գրածը կարդալ ու հասկանալ նաև առանց դատադրքերով պատ-
րաստւած լինելու, ինչպէս վերը ակնարկւած դարաբաղցիք տանը և
ոչ դպրոցումն են վարժեւել ձեր կիրթ ականջները ծակելու արհեստը...
ԳԱՆՁԱԿԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՆՔԵՐԸ: Գանձակից պ. Աշոտ Աթանասեանը
գրում է մեզ. «Գանձակի նահանգի համար ստեղծուում է մէկ նոր,
մեծ ապագայ ունեցող գործ, աչն է լեռնալին արդիւնադործութիւն
աչն ահագին և բազմաթիւ հանքերի, որոնցով աչնքան հարուստ է
Գանձակի լեռնալին մասը: Այդ գործի գլուխ է անցել պ. Առ. Ծա-
տուրեանը, որի լանձնարարութեամբ և ես, որպէս հաւատարմատար,
գործումեմ աչստեղ: Եթէ պ. Ծատուրեանին չաջողի աչդ գործը
հանել ինչ ինչ արդեւքներից և գործ սկսել աչստեղ, աչն ժամանակ
դորանով մեծ զարկ տւած կ'լինի թէ գիւղական աղգաբնակութեան
տնտեսական զրութեանը և թէ բացած կ'լինի աղքատ դասակարգի
աչխատութեան համար մի նոր շրջան: Ձեռնարկութիւնը առաջում հիմն-
ւելու է Քարհատ (Գաւքեասան) հալ գիւղի երկաթի հարուստ հանքե-
րի շահագործութեան վրայ:

ՆԱԻԹԸ ԳԱՂՍՏԱՆՈՒՄ: 1895 թականից սկսեւ է հետախուսութիւնը
Գաղստանում հորեր քանդելով՝ նաւթ գնելու համար: Այդ գործի
համար փոմձեր արեւին ցալում Մուշկովչեւ, Գաւիդ-բէկի ընկ., Գա-
տէրի և ուրիշներ (118 սաթէն խորութեան համեմտով): Խոնակի, (50
սաթէն), Հախվերդեան, (67 սաթէն) Շիւբինով (150 սաթէն, Գերբէն-
դի մօտ), բաց ըլլոր հետախուսութիւնները անաշող վերջացան:

ԼԵՐՄՈՆՏՈՎԸ ՀԱՅԵՐԷՆ: Ի փշատակ Մուրճ-ի տասնամեակի մեր աչխա-
տակից պ. Յակոբ Տէր-Գէորգեանը ձեռնարկում է ուսւ երեւելի բա-
նաստեղծ Լերմոնտովի երկերը հրատարակել հաչերէն թարգմանու-
թեամբ, պատկերազարդ: Այդ ժողովածուի մէջ մտնելու են թէ Մուր-
ճ'ում թարգմանածները և թէ աչլուր լոյս տեսածները, Ի միջի աչ-
լոց նաև «Գեւը», թարգմ. Սատաթեանի, բաց ուղղած, և լրացրած:

ՄԱՍՈՒԼ: Մասիս. (սեփականատէր՝ Կար. Խաթիւճեան), որը մինչև Արեւելք
լրագրի վերսկսիլը հրատարակւում էր իբրև մեծ օրաթերթ, հոկտ.
10-ից պիտի հրատարակւի իբրև շաբաթաթերթ կրօնական, աղգալին,
քաղաքական և բանասիրական: Թերթի խմբագրութեան կարևորա-
գուլն մասը ստանձնած են Արմաշի զպրեկմանքի վարդապետները: Հա-
մարը ունենալու է 32 երես: Բաժնեգին՝ տարեկան 40 դրուշ Կ. Պոլ-
սի համար, 50 դրուշ գաւառնեհի համար, հատով՝ 40 փարալ:

ՀԱՆԻԷՍ ԱՄՍՈՐԵԱՑԻ խմբագրութիւնից մենք բնաւ չէինք սպասիլ աչն
թեթեամտութիւնը, որ նա ցոյց տւեց իւր մի առաջարկով, որը ան-
տեղի լինելուց զատ՝ նաև անիրագործելի է: Աւելի քան միամիտ պիտի
լինել մտածելու համար, թէ մի թերթ կարող է՝ ինչ կալ-չկալ ուս-

սերէն գրած հալ, «բանասիրութեան» (==Ֆիլոլոգիա) և հալագիտութեան մասին, (ուրեմն բազմաթիւ հաստ հատորներ...) ամբողջական թարգմանութիւններով արտատպել: Աւ ալդ առաջարկում էր Մուրճին, որը «քաղաքական-հասարակական-գրական» ամսագիր է: Այժմ սակաւն պարզւում է, որ ալդ «առաջարկը» բնաւ միամտութիւնից չէ, ալ խաւարամտութիւնից: Բանից զուրս է գալիս, որ Վիեննայի Մխիթարեան հայրերը հալ ազգը մի ուրոյն տեսակի ազգ են համարում. լինելով հին ազգ, ունենալով հին ծագում և մի հին գրականութիւն, հալ ազգը, ալդ խաւարամիտների կարծիքով, միմիայն պէտք է զբաղւի հալական ուսմունքներով, հալական լեզւաբանութիւնով, և ուրիշ ոչինչ: Հալը պէտք է գրի միմիայն հալագիտական բաներ, և ալդ իսկ պատճառով հալական ամսագիրը պէտք է միայն հին ձեռագրերի հրատարակի, հալական լեզւաբանութիւնով զբաղւի: Մեզ համար նոր չէ Մխիթարեանների ալդ կարծիքը, որը ոչ ալ ինչ է, բայց եթէ հին հալ բանասէրների փտած ուղղութեան արդիւնքը: Բայց իրենց ալդ աշխարհակցութիւնը արտալաղտելու համար նոքա մի նոր առիթ էին որոնում. և ալդ առիթն է ալն երկսողը, որով Մուրճ Ո՞ւսմ մենք ետ էինք զրկում Հանդէս Ամսօրեային սորա անհեթեթ «առաջարկութիւնը»—որ Աստուած միայն առաջարկ համարի:

« . . . Բնական է (ասում է Հ. Ամս.) գեղագրական (belles-lettres) ճիւղին նւիրած ամսաթերթին մէջ՝ մեր ճիւղին (իմա՝ հալական բանասիրութեան, իմա՝ ֆիլոլոգիայի) վերաբերեալ շատ նւթ չենք գտներ գրի առնելու»:

Հետաքրքիր է իմանալ սակաւն, թէ հալ ֆիլոլոգիային նւիրած մի թերթ ինչպէս է պատահում որ իւր ճիւղին վերաբերեալ նիւթեր չգտնելու պատճառով Մուրճի լեզւածները անտես առնել կարելի է համարում, իսկ նոյն ալդ ֆիլոլոգիական թերթը այնքան առիթներ է ունենում Մշակով, Նոր-Գարով, Արեւելքով զբաղւելու? Պարզ է, որ Հանդէս-Ամսօրեան իւր այն տողերով միայն ցոյց տալ է ուղում, որ գրպանում միշտ պատրաստի խօսքեր ունի, որ նա կարող է ափով զուրս կրել և աջ ու ջախ չարտել՝ առանց երկար բարակ մտածելու:

Այս ամելով պարտք ենք համարում լալտնել որ մենք բնաւ չահագրգռւած չենք ալն բանով թէ Հ. Ամս. Մուրճով կը զբաղւի թէ ոչ: Եթէ Հ. Ամս. մի հալկ. լեզւաբանական և առհասարակ հալական ուսմունքների թերթ է՝ ամենաբնականը հէնց տն կը լինէր, որ բնաւ չզբաղէր ոչ հասարակական, ոչ քաղաքական և ոչ գեղագիտական խնդիրներով: Հէնց ալդ հանգամանքն էլ մեզ շատ սառն է թողնում ի դիմաց ալն կարծիքների, որ լալտնում է Հ. Ամս-

րեալն Մուրճ'ի ալ և ալ բաժինների վերաբերեալ լուրացներ ժա-
սին, Մենք երբէք Մխիթարեան վարդապետներին չենք իւր ընթեր-
ցողներ ի նկատի ունեցել, Մուրճ'ը հրատարակելիս, և ալ վարդա-
պետների կարծիքը հրապարակախօսութեան, վիպասանութեան, բա-
նաստեղծութեան, գրական քննադատութեան, գիտական գրականու-
թեան, գաւառական կեանքի նկարագրութեան, մեր ներքին կեան-
քի և ընդհանուր քաղաքականութեան ըմբռնման մասին,—մեզ համար
բնաւոյսնեղի չէ: Ընդհակառակը, Մուրճ'ը իւր աշխարհայեացքով աչն-
քան տարբեր ուղղութիւն ունի Վիեննայի Մխիթարեանների աշխար-
հայեցութիւնից, (տես չաջորդ լուրացը) որ միայն զարմանալ պէտք էր
եթէ ալք երկու թերթերը մի հասարակական-քաղաքական-գրական ամ-
սադրի բովանդակութեան և ուղղութեան մասին հաւասար հայեացք-
ներ ունենային: Մենք Վիեննայի Մխիթարեաններին շատ ենք եզ-
րիտական կարծում, որպէս զի նոցանից սպասենք ժամանակակից
լուսաւոր հայեացքներ ու որ և է լուսաւոր գործունէութեան սրտա-
բաց խոստովանութիւն ու դնահատութիւն:

Անդ թւում է թէ մենք երկուստ երկու տարբեր աշխարհների
ծնունդ ենք... թէ և միեւնոյն ազգին սպասաւորող,—և կարծում ենք
թէ ձեր հակառակութիւնների խորհուրդը ալ հանգամանքի մէջ է
և ուրիշ ոչինչ:

Ալք ամենը մեզ չի խանգարել անցեալում չալտնել և ոչ էլ
կը խանգարի ապագայում հռչակել աչն, ինչ Վիեննայի Մխիթար-
եանները և Հանդ. Ամս. օգտակար գործ կը կատարեն իրենց ճիւղին
վերաբերեալ: Բայց... ВСЯКЪ СВЕРЧЕКЪ ЗНАЙ СВОЙ ШЕСТОКЪ, որ
ասել է թէ՛ մի փոքր համեստութիւն—ահա մեր խորհուրդը:

Աւելիին համար կարդացէք չաջորդ լուրացիկը:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻԻՆԸ, որպէս չալտնի է, հրատա-
րակում է Հանդէս Ամսօրեայ թերթը. բայց մի բան որ ամենքին չա-
լալտնի չէ, աչն է, որ ալք թերթը, որպէս օրգան Վիեննայի Մխիթար-
եան միաբանութեան, ունի մի «մասնաճիւղ» (ֆիլիալ)... Թիֆլիսում.
ալք մասնաճիւղը անսնուն է (անոնիմ) և տեղաւորում է նոյն սիւ-
նակներում, որոնք կազմում են նաև «Մշակ» լրագրի էջերը: Մասնա-
ճիւղը անանուն լինելով՝ չալտնի է սակաչն նորա գլխաւոր գործա-
կալը, որ է՝ Վիեննայի Մխիթարեանների Կ. Պոլսի գլորոցին աշակեր-
տած Առաքել Սարոխանեան, (նոյն և Տիւրքոն «Հանդէս Ամսօրեայում»,
նոյն և «Ա. Ս.» դարձեալ Մշակում. ասորագրութիւնների բազմաձևու-
թիւնը պէտք է համարել բոնակը մեծ ցոլց տալու համար...):

Աւելցնենք ալժմ, որ «Հանդէս Ամսօրեայի» մի երկրորդ մասնա-
ճիւղն էլ կամենում է լինել Կ. Պոլսի «Բիւրակ» շաբաթաթերթը:

Այսքանը իբրև նախագիտելիք:

Դէ աչտմ գործել, Հանդէս Ամսօրեայն մի թերթ է որը նւիրւած է «հալկական ուսմունքներին», ինչպէս են՝ հալոց հին ձեռագրերի ուսումնասիրութիւն, հալոց լեզուի փշտակարանների ուսումնասիրութիւն, հալոց բարբառների ուսումնասիրութիւն: Այս սահմաններում նա ներկայանում է մի մասնագիտական թերթ, որը ունի իւր չատուկ արժէքը, մի արժէք, որի թերևս առաջին գնահատութիւնը տւել ենք մենք ինքներս աշխարհի խօսքերով, որ մենք աչտմ կրկնւած ենք տեսնում ալոց բերաններում (համեմատէք Մուրճ 1895 թ. № 12) կարծում ենք ուրեմն որ Մուրճը շատ անհաշու կերպով գնահատել է Հանդէս Ամսօրեայի մասնագիտական արժէքը:

Բայց Հանդ. Ամս., չպիտի այս մոռանալ, կամենում է ոչ միայն մասնագիտական թերթ մնալ, այլ և լինել օրգան Վիեննայի Մխթարեան միաբանութեան, որը, հալկական դպրութեան հետ միաժամանակ և մի կաթողիկոսական միաբանութիւն է շատ որոշ սկզբունքներով: Մի ընդարձակ ուսումնասիրութեան մէջ Մուրճում, 1895 թ. № 12, մենք ցոյց ենք տւել աչդ կրօնական միաբանութեան պատկերը. ցոյց էինք տւել, թէ ինչպէս, սկիզբ առնելով Մխթար Սեբաստացուց, Վիեննայի Մխթարեան միաբանութիւնը ունեցել է իւր երկրորդ հիմնադիրը՝ Արիստակէս Ագարեան արքահայրը (1825-55), որը Մխթարեան միաբանութիւնը շնոց իւր սկզբնական հիմնակրելի ծրագրից, դարձրեց նորան պապական-կաթողիկոսեան օրգան, ներշնչեց մոլեռանդ կաթողիկ կղերականութեան ոգի, մի բան, որից զուրկ էին վենետիկի Մխթարեանները, և, լինելով Վիեննայի Մխթարեանների արքահայր, Արիստակէս Ագարեանը մոլեռանդ կղերականութեան ոգին կարողացաւ նոյն իսկ մացնել վենետիկի Մխթարեանների կանոնադրութեան մէջ, վենետիկեցոց կասկածելի ցոյց տալով պապի աչքում!...

Հասկանալի է աչտմ ամենքին, թէ ինչ ոգի են մտցնում Մխթարեան վարդապետներն ու նոցա հաւատարիմ սաները այն ամեն բանում, ինչին նոքա ձեռք են դիպցնում՝ լրագրութիւն, դպրոց և միսիոնարական գործունէութիւն: «Հալկական ուսմունքներ»-ի հետ միասին Վիեննայի Մխթարեանները պոլիտիկոսութեամբ են զբաղւած, և, իբր եղբիտական մի կարգ, թշնամի են նաև դարուս դիտութեան, Այդ բանին շատ լաւ դիտակից է Մուրճը: Նոցա համար, հէնց իբր օրինակ, գոչութիւն չունի էւոլյուցիական աշխարհայեցողութիւնը, և երբ Մուրճ-ում սկսեց տպւել «Էւոլյուցիալի գաղափարը» լոգածնների շարքը պ. Միք. Յովհաննիսեանի, «Հանդէս ամսօրեայն» բողոքեց աչդ լոգածների դէմ: Իսկ առանց էւոլյուցիական

աշխարհալեցութեան՝ պէտք է դէն դցել զարուս հասարակարանութեան և բնագիտութեան գրեթէ ամբողջ գրականութիւնը: Եւ ալօր, մի որ և է Առաքել Սարուխանեանց, մի բոլորիկ պարոն, բաւց Մխիթարեան վարդապետներից փոխ առած անձնապատմութեամբ Մշակի էջերում չափարարում է թէ (լսեցէք—)

«Մխիթարեանների հովուութեամբ՝ ոչ գիտութիւնը, ոչ փիլիսոփայութիւնը... ոչինչ չեն կորցնի, ալ գուցէ և ընդհակառակը»:

Եւ մեր օրերում մեզ ալդ բանում հաւատացնողն է Մշակի մընտական աշխատակիցը, նոյն Մշակի էջերում... Ալդ պարոնը մուս-ցել է, որ մեր օրերում, ալդպիսի փմար խօսքեր չի կարելի անպատիժ կերպով տպել:

Հասկանալի է ուրեմն թէ ինչ է Մուրճ-ը Վիեննայի Մխիթարեանների համար, և ինչ պէտք է լինի «Հանդէս Ամսօրեայն» Մուրճի համար:

Մենք կարող ենք միայն շնորհաւորել Տարազիին, որ մեզ հասնող քարերից վերջերքս մի մաս էլ նրա բակն է ընկնում Վիեննայի Մխիթարեան միաբանութեան օրգանի և նորա անանուն մասնաճիւղի գործակալ Սարուխանեանի կողմից՝ Մշակի սխնակաների միջից...

ՊԱՐԻՋԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՎՈՒԹԻՒՆԸ ունի մի ընկերութիւն «Պարիզի հայ ուսանողական միութիւն» անունով (Union des étudiants arméniens de Paris), որի գիւանից ստացել ենք երկու գրութիւն. մէկով ընկերութիւնը ծանուցանում է մեզ իւր գիւանի ներկա կազմը. միւսով զգուշացնում է ալն անձերից, որոնք, ընկերութեան նախորդ գիւանի անդամներ էին, բաւց՝ գիւանի դործերը անկերպարան վիճակի մէջ զցելուց չետոյ լուլիսի 23-ի ընդհանուր ժողովում հրաժարեցրած լինելուն համար հիմնեցին «Ակումբ հայ ուսանողաց Պարիզում» գալթակղեցուցիչ անունով ընկերութիւնը «իրենց ետամուլութիւնն գոհացնելու համար» և «հալ գաղթականութեան պատ. անդամոց մըտքին մէջ չփոթութիւն մտցնելու ղիտաւորութեամբ»:

Հին՝ ալն է «Պարիզի հայ ուսանողական միութիւն» ընկերութեան գիւանը ներկայումս հետեւալ կազմն ունի. Վ. Մեսրոպեան՝ ատենապետ. Խ. Սարգսեան՝ ատենադպիր. Գ. Յնտիկեան՝ դանձապետ. Ռ. Թանտաճեան և Զ. Ալվաղեան՝ խորհրդատու անդամներ: Ժամանակաւոր հասցէն՝ Paris Boulevard St-Germain. 84.

Ուսանողական ընկերութիւնը սակալն չափոր զլանա... մեզ չալտենել թէ քանի ուսանող են մասնակցում ընդհանուր ժողովներին: ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆԻ Աղքատաց հողաբարձութիւնը, Սեպտ. 29-ին Նոր-

Նախիջևանում կապալա հաջ ծխականներն ժողով, որը պիտի քննէր եկեղեցական հոգաբարձութեան հաշիւները 1896 և 1897 տարիների համար և լատուկ հաշիւը ալն շինութեան մասին, որ հոգաբարձութիւնը կարուցել է խոստովում աղքատաց հոգաբարձութեան փողերով: Երկուստեան վրայ ծախսել է 300.000 ռուբլուց աւելի: Ժողովը չհաստատեց ներկայացրած հաշիւները և միաձայն որոշեց հոգաբարձութեան դործը լանձնել Տազանրոգի դատարանի դատախազին, խնդրելով կարգադրութիւն դատ բանալու համար:

Աւելցնենք միայն, որ ալս դործը չաւանեց ամենքին Ռուսաց հեռագրական գործակալութեան միջոցով:

ՎԻԼՀԵԼՄ II ԴԵՊԻ Կ. ՊՈԼԻՍ ՆԻ ԵՐՈՒՍԱԿԷՄ:

Սուլթանի ցանկութեամբ Եգիպտոսի խըզիւ Աբբաս եկաւ Կ. Պոլիս՝ Գերմանական կալսերական զուգի ընդունելութեանը ներկայ լինելու համար:—Կանէալի նահանգապետ Ջաւադ փաշային սուլթանը հրամայեց Վիլհելմ II-ին ուղեկցել Պալեստինում:—Կարս Վիլհելմ II և կալսուհին 29 սեպտ. ուղևորեցին Պոտսդամից Կոբլենց, ուստից պիտի ճանապարհ ընկնէին Թիւրքիա: Հոկտ. 2-ին կալսերական զուգը Վեհետիկ ժամանեց, ուղեկցութեամբ պետական քարտուղար Փոն Բիւլովի: Նրկաթուղու կայարանում զուգին ընդունեցին խալ. թագաւորական զուգը և մինիստրները: Ապա նստեցին Հոհենցոլլէրն եախտը (նաւը) և Ադրիական ծովով շարունակեցին ուղին:—(Ալեքսանդրիայում գեւ աւելի առաջ, չաւանի կացուցեց որ խալիւալից եկած անարխիստները պատրաստել էին Վիլհելմ II-ի դէմ դաւադրութիւն, որի համար և ուղեգիրը փոխեց՝ Եգիպտոս բնաւ չմտնելու համար): Հոհենցոլլէրն եախտը հոկտ. 6-ին հասաւ Դարդանել. ընդունելութիւնը ոգևորեւ էր: Ապա կատարեց մուտքը Կ. Պոլիս. կալսուհին սուլթանի հետ մի կառքում և կալսը մեծ վիզիր Ֆուադ փաշայի հետ երկրորդ կառքում ուղևորեցին Իլդիզ. Քէօշկի ալդում չատուկ գրա համար շինած պալատը, ուր կատարեց փոխադարձ կերպով շքախմբերի իրար ներկայացնելը. սուլթանը անմիջապէս վերադարձաւ իւր պալատը: Կալսերական զուգի համար տեսնուած էին ամենամեծ պատրաստութիւններ: Կալսերական զուգը մեկնեց Կ. Պոլսից հոկտ. 12-ին, կէսօրից չետու ժամ 5 ին, դէպի Պալէստին:

ԳԵՐԵՅՈՒՍԻ ԳՈՐԾԸ ՆԻ ԲՐԻՍՈՂՆԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԱՆՎՈՒՄԸ: Դրէֆֆուսի դործը ստացել է չափազանց բարդ կերպարանք. կուլը շատ կատաղի է, սպառնական դէպքերը չաջորդում են միմեանց: Արձանագրերն քկարեւորագոյնները: Բրիտոնի մինիստրութիւնը վճռեց վերաքննութեան դործը չարուցանել և առաջարկել ալն՝ վճռաբեկ ատեանին: Այդ վճիռը կապալա, երբ մինիստրութեան խորհրդատու իրաւաբանական լանձնա-

ժողովում 3 ձախ վերաքննութեան դէմ կարծիք չաւանդեցին, 3-ը և զոցա մէջ չանձնաժողովի նախագահը՝ յօգուտ վերաքննութեան։ Վեպտ. 21 (հին տ.) Վագրամ դահլիճում պիտի տեղի ունենար միտինգ վերաքննութեան կուսակից Պրենստանսէի ձեռներէցութեամբ։ Բայց հակադէմոստրացիաները, պարագլուխ ունենալով Պօլ Դերուլէդը՝ ին, միջամտեցին խանգարելու համար, և Պրենստանսէն կալանաւորուեց ու ոստիկանատուն տարուեց, երբ կամեցաւ մտնել դահլիճը։—Արդարադատութեան միջնիստը Սարրիեն, իւր նամակում, որով առաջարկում է վերաքննութիւնը, վշատակեց մի նոր ֆակտ, աչն է՝ 1897-ի վերջը Էստերհազին գրել է Պատի գը Կլան'ին նամակ, ուր կան ալս խօսքերը՝ «եթէ վստահ չեք էքսպերտներ լրաց, ես կ'ասեմ թէ իմ ձեռագրութեան նմանացրել են»։—Էստերհազին Լոնդոն է փախել, ուր հրատարակելու է գործի մասին մի քրոչիւր։—Վճռաբեկ ատեանի խորհրդատու անդամ Բանդ Նշանակեց զեկուցանող Դրէմփուսի գործի վերաքննութեան մասին։—(Պարիզում սկսեց ահազին գործադուլ քաղաքային կապալառուների բանւորների մէջ)։—30-ին սեպտ. աճուրդի դրեց Զոլաի կալքը էքսպերտների պահանջին բաւարարութիւն տալու համար։ Բայց Զոլաի բարեկամ հրատարակիչ Ֆասկէլ հէնց աճուրդի դրած առաջին առարկան՝ գրասեղանը՝ գնեց 32.000 ֆրանկով, որով աճուրդը վերջացաւ։—Թուսաց պատերազմական միջնիստը Կուրոպատկին ժամանեց Ռամբուլէի, ուր տեսնեց հոկտ. 1-ին նախագահ Ֆորի հետ, որպէս պնդեցին չետոյ լրագրերը, ճորա համար, որ Թուսիան տեսնի թէ վերջին դէպքերը ինչ ազդեցութիւն են արել ֆրանս. զօրքի ոգու վրայ և համոզուեց որ ֆրանս. զօրքը անարատ է։—Վերաքննութեան կուսակից լրագրերը սկսում են խօսել զինուորական դաւադրութեան մասին։—Հոկտ. 12-ին Շէն դահլիճում եղաւ միտինգ, որ սարքել էր սոցիալիստական վերահսկող կոմիտէն, ժողովը խօսեց ընդդէմ Ռոչֆորի, Դերուլէդի, Դրիւմոնդ Վսլֆի, վճռեց առաջարկել բոլոր քաղաքացիներին միանալ՝ հանրապետութիւնը և ազատութիւնը փրկելու համար։

Հոկտ. 14-ին կատարեց Բրիտնի միջնիստութեան անկումը. պատգամաւորների ժողովում պատահած մի անօրինակ դէպքով չառաջացրած քւէարկութիւններից լեւտոյ, որոնցով միջնիստութիւնը ճնաց փոքրամասնութեան մէջ։ Այդ նիստում Դերուլէդի չարձակողական ճառից լեւտոյ Դրէմփուսի գործի առիթով՝ պատերազմ. միջնիստը գնեւ Շանուանը չաւանց որ ինքը հետեւում է իւր նախորդների օրինակին և հեռանում է պաշտօնից։ Մինչդեռ միշտ միջնիստները իրենց հրաժարականը նախ ներկայացնում են միջնիստութեան նախագահին, Բրիտոնը ամբիոն բարձրանալով՝ պախարակեց Շանուանի արարքը՝

(Շանուհանը ապա դնաց նախագահ Ֆորի մօտ, որը չընդունեց նորան): Ապա երկու անգամում ժողովը, քննարկելով ներկայացրած բանաձևերը հերթական խնդիրներին անցնելու համար, մինիստրութեան թողհց փոքրամասնութիւնների մէջ (40 ձայների տարբերութիւնով), որից լետու Բրիտոնը ներկայացրեց նախագահ Ֆորին իւր հրաժարականը որ և ընդունեց, Նոր մինիստրութիւնը լանձն առաւ կազմել Դիւպլիւի: Ֆորը համաձայնեց Բրիտոնի հետ, թէ պատերազմ, մինիստրութիւնը պիտի լանձնել մի քաղաքացիական անձի, հաստատելու համար թէ զինւորական իշխանութիւնները պիտի հպատակեն քաղաքացիականին:

ԺԱՆՏԱՒՏԸ: Հեռագիրը հոկտ. 15-ից հաղորդեց իբր պաշտօնական հաղորդագրութիւն, որ Սամարկանդի շրջանի Պենջանի բաժնի իսկանդարեան գեղախմբի Անդով զշաղում երեսցել է մի հիւանդութիւն: որի նշաններից դատելով Սամարկանդի առողջապահական կոմիտէի բժիշկները ժանտախտի նման հիւանդութիւն ճանաչեցին: Չեռնարկւնցին խիստ միջոցներ Անգով գիւղի շարաբերութիւնները հարեան գիւղերի հետ կարելու և հիւանդներին կղզիացնելու համար: Պետերբուրգից հակաժանտախտալին լանձնածոցովը ուղարկեց Սամարկանդի շրջանը հմուտ բժիշկ-բաքտերիոլոգներ, որոնք ի մօտոյ ծանօթացել են ժանտախտի հետ Հնդկաստանում: Հոկտ. 12-ին տրւած քարճրագոյն հրամանի համաձայն՝ լանձնածոցովի նախագահ Նորին բարձրութիւն պրինց Ալէքս. Պետրովիչ Օլգէնբուրգսկի ուղևորում է Սամարկանդի շրջանը, ուր նա պիտի զօրեղ միջոցների դիմի հիւանդութեան տարածելու դէմն առնելու համար:

ԺԱՆՏԱՒՏ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ: Վիեննայի պաթոլոգիական-անատոմիական ինստիտուտում, ժանտախտալին բացիւնների հետ անդղուլ փորձեր անելուց վախճանուցին երկու բժիշկ և մի քանի ալ ծառայողներ, ալ և հիւանդախնամ կանայք: Հոկտ. 12-ին ուսանողների լաճախելը ալ ինստիտուտը դադարեցեց. ձեռք են առնւած խիստ միջոցներ հիւանդութիւնը կղզիացնելու համար: Անհանգստութեան մէջ է ամբողջ Վիեննան: հեղինակաւոր բժիշկները սակաւն լաւանցին, որ վտանգ չկայ հիւանդութեան տարածելուն:

ՉԻՆԱՍՏԱՆ: Կայսրուհու դէմ դաւադիր և ռեֆորմների կուսակիցներ ճանաչւած եօթ հոգի գլխատուցին, նոցա մէջ և Կան-Իւմէլի եղբայրը և մի ցեղգոր, եղբայրը Խուպէի նահանգապետիւ—Կան-Իւմէլը անգլիական նաւով եկաւ Հոնկկոնգ:—Եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները խմբական նոստ տւին չեն կառավարութեան, որ սա նախազգուշական միջոցների դիմէ եւրոպացիներին պաշտպանելու և լանձնաւորներին պատժելու համար:—Ստար պետութիւններ:

ներկայացուցիչները իրենց պետութիւններու պահանջներն, որ զօրքեր զրկեն Պեկին՝ քրիստոնեաներին պաշտպանելու համար: Եւսպոսիան զրկեց նաւային զօրք Պեկին:—Անգլիական ղեսպանի պահանջով կալսեր քննեց Փրանսիական բժշկը, գտաւ նորան թուլ, սակաւարիւն, բայց ոչ անմիջական վտանգի նշաններ: Կալսրը ունի երեկամունքի հիւսնդութիւն և մի թոքը վնասուած է: Կառավարութիւնը ամբողջապէս կալսրուհու ձեռքումն է:

ՖԱՇՈՂԻ ԽՆԴԻՐԸ: Երբ անգլո-եգիպտական զօրքերը, չաղթելով մահդիի զօրքերին առաջ գնացին Խարտումից դէն, տեսան Ֆաշոդ քաղաքը բռնւած Փրանսիական զօրքով, որը մտնում էր Մարշան սպալի աշխաւախմբի մէջ: Դորանից ծագեց խնդիր Անգլիայի և Ֆրանսիայի միջև, որը ցաւօր դիւ վճուած չէ, բայց հաւանական է որ Ֆաշոդ ետ կը տրւի Եգիպտոսին, և փոխարէնը Ֆրանսիան բաւարարութիւն կը ստանալ: Յամենայն դէպս նշանակելու է որ խնդիրը հրեմն սուր կերպարանք է ստանում: Ֆրանսիան պահանջում է որ իրեն անցք տրւի դէպի Նեղոսի աղբիւրները: Ֆրանսիայի զաղութալին մինիստրը հրամայեց Տուլոնի նաւերից չորսին զինուել և փոխադրուել Բրեստ, իսկ Անգլիական ծովալին մինիստրութիւնը հրամայեց Պորտսմութի բոլոր նաւերին պատրաստ լինել զուրս գնալու դէպի ծովը: Ֆրանսիայի պատերազմական մինիստրի կարգադրութեամբ Շերբուրգ է զրկւում շատ զօրք:

ՔԻԻՐՔԻԱ: Մալասկերտի չրջանում, Վանի վիլայէթում, հայերի զինւած մի խումբ, իբր թէ Կովկասից եկած, հանդիպեց թիւրք զօրքի որի հետ եղած հրաձգութեան միջոցին կորցրին 49 սպանւած և 3 վիրաւոր: Աւելի ստույգ աղբիւրներից գրում են մեզ, որ հայերը այդ հանդիպումի մէջ կորցրել են ոչ 49, այլ 17 հոգի, և նոքա, թւով մինչ 7-ը հոգի, զէնք են փոխադրում եղել:—Կալսերական աղիւտանոթեր Սուլէյման բէյ, Հոսնի բէյ և արտաք. գործ. մինիստրութեան պաշտօնեալ Ֆիզլի բէյ, որոնք փախել էին Ֆրանսիա աչն կասկածի համար, սր տաժում էին դէպի նոցա, թէ իբր կուսակից են երիտասարդ թիւրքերի հալեացքներին, վերադարձան Կ. Պոլիս անպատիժ լինելու խոստում ստանալով:

ԿՐԵՏԷ: Միջազգային զինուորական դատարանի անդամները ուղեորւեցան Կանդիա քաղաքը քննելու աչն բռնութիւնների գործը, որի մասին տեղեկացրինք անցեալ համարում: Չորս պետութիւնների ներկայացուցիչները պահանջեցին իրենց տէրութիւններից նոր զօրքեր. Ռուսիան, Անգլիան և Իտալիան համաձայնեցին, որ Ֆրանսիան զրկի Կրետէ 800 մարդ և երկու թնդանօթ, առանց սպասելու սովթանի պատասխանին Կրետէից՝ թիւրքական զօրքերը դուրս բերելու մա-

«ինչ» Պետութիւնները (25 սեպտ.) խմբական նոսա տւին Բ. Գրան պահանջով, որ մի ամսաւ ընթացքում Կրետէն մաքրել թիւրք զօրքերից: Ահապ. 30-ին Գուռը չալտնեց որ ընդունում է Կրետէն իւր զօրքերից մաքրելու պահանջը, չալտնելով նաև մի քանի ցանկութիւններ, ալ և ալն, որ մի թիւրք գարնիզոն մնաց կղզում ի նշան թիւրքիաւի գերիշխանութեան: Պետութիւնները չընդունեցին ալ: Բ. Գուռը հոկտ. 7-ին չալտնեց որ ընդունում է չորս պետութիւնների վերջնագիրը. — Չորս պետութիւնները վճռեցին Կրետէնում ունենալ 14.500 հոգուց զօրք:

ԱՆԴՐԻԱՆԻ ԱՆՅՔԻ համար, որ չալտնի է մեր ընթերցողներին, Թուրքեստանի ընդհանուր-նահանգապետի չալտարարութեան համաձայն, կալանաւորեցին 546 մարդ. դոցանից քննութիւնից լետոյ արձակեցին 131 հոգի. դատի ենթարկեցին 415 հոգի. դոցանից արգարահան 32 մարդ. մնացած 383 հոգին զատապարտեցին 380-ը կախաղանի, մնացածը բանտարկութեան և ուղղիչ ապաստանարանների մէջ կալանաւորման: Կախաղանի զատապարտեւածներից Թագաւոր-Կալսը կեանք չնորհեց 362 հոգու, փոխարինելով մահան պատիժը տաժան աշխատանքների, ալն է 3-ին առանց ժամանակի, 147-ին 20 տարով, 41-ին 15 տարով, 1-ին 13 տարով, 1-ին 8 տարով, 147-ին 7 տարով, 4-ին 4 տարով: Դոցանից արդէն արտաքսւած են երկրից 360 մարդ: Ապստամբութեան գլուխ էր Գուկչի-Իչան Մուհամմէդ Ալին:

ԿԱԻՐԱՆ՝ Սեպտ. 29-ին ամերիկացիք սկսեցին Կուբան գրաւելու գործը՝ բռնելով Մանգանիլիա՝ Քաղաքացիական կառավարութիւնը լանձնեց ամերիկացիներին, հակառակ իսպանական կողմից եղած բողոքի: Ամերիկական լանձնաժողովը չալտնեց որ Կուբայի լիակատար կառավարութեան մէջ պիտի մտնի ղեկաւ. 1-ին (նոր տ.), Պորտուգիկոյում՝ հոկտ. 18-ին:

ՔԻՆԻՈՐԱԿԱՆ ՆԱՌԱՅՈՒԹԵԱՆ համար անպէտք ճանաչեցին Ռուսիայում 1890-ից մինչև 1896 թականը 524.330 հոգի, իսկ ժամանակաւորապէս անպէտք ճանաչեցին 761.762 տղամարդ: Այդ թիւերը գուր է բերել Գեղիւլինը, հիմնւելով զինւորական-վիճակագրական տեղեկութիւնների վրայ, և նորա աշխատութիւնը ալ մասին մեծ ապաւորութիւն է գործիւ բարձր շրջանների վրայ նաև Եւրոպայում: Երեսիքը վերագրւում է անտեսական չքաւորութեան, ժողովրդի անուշի պակասութեան:

† ՊՈՒՈՆՍԿԻ, Եակով Պետրովիչ, ուսուցչ չալտնի բանաստեղծ, վախճան էեց 19 հոկտ.:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԳԵՐ

(Ուր թաւաւն չկայ — ներկայ տարւանն է)

- 1) ՊԱԼԷՆՅ զրատուն: Ընդարձակ գրացուցակ Պ. Պալենց զրատուն. Կ. Պո-
լիս, տպ. Բ. Մատթէական:
- 2) KALANTARIANZ, Anuschawan. — Ueber die Spaltung von Polysaccha-
riden durch verschiedene Hefenenzyme. Inaugural-Dissertation z.
Erl. d. Doctorwürde von der philos. Fac. d. Friedr.—Wilh.—Univ.
z. Berlin.—Berlin. Druck v. E. Ebering.
- 3) ԴԱՂԵԱՇԵԱՆ, Յ.—Փ. Բիւզանդացի և իւր պատմութեան խաղա-
խողը: Քննութիւն Մ. Խորենացու աղբիւրների մասին: Աղղալին մա-
տենադարան, Իթ.—Վիեննա. տպ. Միլիթար. 2 ֆր 50 ռանտ.
- 4) ԱՏՐՊԵՏ.—Քոռ-եղիկ. Վեպ. Շիրակեցիների կեանքից (1840 թ.)
Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի. 30 կ.
- 5) ЗЕРНОВЪ, М.—Краткія свѣденія изъ исторіи и современнаго по-
ложенія Кавказскихъ минеральныхъ водъ.—Отчетъ по эссен-
тукской благотворительности. 1898 г. Москва. тип. Н. Сви-
дорова. 1898. 3րի.

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՎ

Պետերբուրգ: Պր. Յ. Մեդնիկեան: Ստացանք Պիտաբի «Հեռ-
րիկ Հաչնէ», որ Ձեր ձեռագրով բռնում է 109 էջ: Պր. Չոպանեանի
Մուրճում նորերս հրատարակած ուսումնասիրութիւնը Հաչնէի մա-
սին Ձեր թարգմանական մեծ չօղածը Մուրճում տպագրելը մա-
սամբ անխորհուրդ է դարձնում: Ժամանակին պատասխան կ'տանք:
ՎՐԻՊԱԿՆԵՐ: Մուրճ № 7—8-ում:

Լուրերի մէջ, էջ 1162, տող 3—4, տպւած է՝ աւելի քան երե-
սուն տարիներից ի վեր. պիտի ուղղել՝ աւելի քան բառասուն տարի-
ներից ի վեր:

«Նոր հոգսի ետևից», էջ 949, տու 10, աղղեցութեամբ բառից
չհտու աւելցնել՝ որը հետաքրքրում է հզել լանւորների զրուխեամբ:

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԾՍՏԱԿԱՆ

1895 Մարտ 1-ին, Պոլիս, ՄԱՂԻԿ հանդէսին հրատարակութեան նպատակը բացատրելով, սա տողերը կը գրէի. «ՄԱՂԻԿ խմբագրութիւնը խորապէս համոզւած է թէ ցեղի մը հոգեկան զատարակութիւնը իր գրականութեամբը միայն կը կատարուի, պաշտօնով որ ալլ գրականութիւնը մտածման և գեղեցկին սնուցանող և մեծցնող տարրերն ունենալ . . . ՄԱՂԻԿ ճշմարիտ հանդէսի մը հանգամանքները պիտի ունենալ, ամբողջական ուսումնասիրութիւններ ներկայացնելով ու խնդիրները իրենց ընդանրութեան մէջ նկատելով: Անիկա սահմանւած է մանաւանդ ընդարձակ և աշխատած գրականութեան»:

Միևնուրեք ծրագրերը, աւելի լալն սահմաններով, իրադրո՞ծելու համար է որ այսօր կը ձեռնարկեմ ԱՆԱՀԻՏ հրատարակչու, տողորւած մանաւանդ ալն մտածմամբը թէ Պարիզէն՝ ալս տիեզերական կեդրոնէն՝ մեկնած գրական բաղմակողմանի հրատարակութիւն մը կրնալ տեսակ մը միջնորդ հանդիսանալ եւրոպական քաղաքակրթութեան ու մեր ժողովուրդին միջև, և միանգամայն՝ աշխարհի չորս կողմը ցրւած Հայերուն մէջ բարուական կապ մը ձևացնել:

Ու է քաղաքական դործունէութենէ զերծ, ու է կուսակցութենէ անկախ, անձնական խնդիրներու բացարձակապէս անմատչելի, ԱՆԱՀԻՏ պիտի ըլլալ զուտ մտաւորական հրատարակութիւն մը: Ամէն տեսակ խնդիրներ, —նոյն իսկ ազգալին և քաղաքական հարցերը, որոնց բաժին մը պիտի չտեղացուի, —նկատողութեան պիտի առնելն ալս հանդէսին մէջ՝ գրապէտի անկողնակալ քննական ոգիով, և երբեք դործիչի, աղանդաւորի կրքոտ ու նպատակաւոր ձգտումներով:

ԱՆԱՀԻՏ պիտի պարունակէ 1. Ուսումնասիրութիւններ հալ ժողովուրդին պատմութեան, գրականութեան, գեղարւեստին ու լեզուին վրայ, և տեսութիւններ անոր ներկալ բարոյակն և նիւթական կացութեան մասին. 2. Ուսումնասիրութիւններ գեղարւեստական, գիտական և ընկերական ընդհանուր խնդիրներու վրայ. 3. Թարգմանութիւններ օտար հին և նոր մատենագրութեանց ամենէն կարեւոր հրաշակերտներուն. 4. Վէպեր, վիպակներ և բանաստեղծութիւններ ազգալին կամ առհասարակ արեւելեան կեանքէ: 5. Ոտանաւոր և արձակ գրութիւններ՝ գրական ամէն սեռէ. 6. Հրատարակութիւն և ուսումնասիրութիւն հին ու նոր հալ ժողովրդական բանաստեղծութեանց, աւանդութեանց և հէքիսներու: ԱՆԱՀԻՏ պիտի ձգտի մասնաւորապէս ազգային գրականութիւնը զարգացնել զուտ հալ տարրերով:

Այս բաղմազան ծրագրին իրականացման համար ուրախ եմ ծանուցանելու որ գրադէտներու, արեւատգէտներու և գիտնականներու խումբի մը աջակցութիւնն ապահոված եմ արդէն, և կը լուսամ գործակից ունենալ բոլոր այն հաշ մտքերը որոնք կը բաղձան մտաւորական լծակին միջոցով ազգին բարօրական մակարդակը բարձրացնել:

Եթէ ընդունելութիւնն զանէ ալս ձեռնարկը և միջոցները ներքին, մտադիր եմ հետզհետէ ճոխացնել հանդէսին գեղարեստական մասը, պատկերներ, արեւատի հրաշակերտներու վերաբոսագրութիւններ, ինքնուրոյն դժագրութիւններ, հրատարակելով, իմ փափաքս է մանաւանդ հաշկական վաղեմի գարդանկարչական արեստին վերանորոգում մը փորձել ալլաղան ձեերով: Այդ գաղափարին մէկ առաջին գործադրութիւնն է ալս Ազգին ճակատանկարը զոր ծանօթ հաշ նկարիչը՝ Պ. Է. Շահին լօրինեց նմանօրութեամբ հին հաշ նկարազարդ ձեռագիրներու:

ԱՆԱՀԻՑ Կոչեցի Հանգէսը, մեր հինաւորց և լաւաւնական աստածունին անունով, որպէս զի Ոսկեծղին, Անարատը, բարութեանց Բաշխիչը, հաշ ցեղին հոգին պատկերող մաշրական Գիցանուչը՝ ալս ազգայնօրական ձեռնարկը իր լուսաւոր թեերովը հովանաւորէ և զալն գեղեցկութեամբ ու կենդանութեամբ տալծաւացնէ:

ԱՆԱՀԻՑԻ առաջին թիւը հրապարակ պիտի ելլէ լառաջիկա Նոյեմբեր 1-ին. Բաժանորդագիրնը պիտի ըլլալ տարեկան 12 Փրանք և վեցամսեալ 6 Փրանք՝ օտար երկիրներու համար, 10 Փրանք և 5 Փրանք Փրանսալի համար:

Բաժանորդագրութիւնը բացած է արդէն:

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

Պարիզ. Paris 6, Place de l'Odéon

1 Յուլիս 1898

ՀԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԵԶԳԵՄԻՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՄԻ


1898 թւի


Բաժանորդագրութիւնը

Լոյս է տեսել № 1. Իսկ № 2 լոյս կը տեսնի դեկտեմբերին:

Երկու դրքի բաժանորդագիրնն է **3 առքի**

Գիւմլ՝ Е. Ламаянъ. Семинарія Нерсисянъ. Тифлисъ.





ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԲԱԺՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան 10 ռուբլի, կա՛մ 30 ֆռանկ:
ԳԻՄՆԸ՝ Թիֆլիս, Սերգիեևսկայա փողոց, տուն № 6: Այլ քաղաքնե-
րից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.
Արտատպանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“.

ԲԱՔԻՈՒՄ կարելի է գրել նաև պ. Ֆրիդրիկ Մարգարեանի մօտ (զրա-
սենեակ Ե. և Հ. Մելիքեանների):



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 10-11 1898 ՀՈԿՏԵՄԲ. — ՆՈՅԵՄԲ. 1898 № 10-11

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

I. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ Աւետիք՝ Տառնամակից (էջ 1321)։—II. ՄԱՏՈՒՐԵԱՆ Աւետիք՝ Սիրեցեք միմեանց, Շատերից մէկը, Տուր ձեռքդ, Նաւաժար, Պօղոսին (բանաստ., էջ 1328)։—III. ԱՂԱՅԵԱՆՑ Ղազարոս՝ Ժամանակակից Աստուածաբանութիւն (էջ 1333)։—IV. ԴԵՄԻՐՃԵԱՆ Դերենիկ՝ *** (բան., 1368)։—V. ՇԱՆԻՔ՝ «Կարձ» (վէպ. 1369)։—VI. ՊՈՒՇԿԻՆԻՅ ՏԵՐ-ԳԵՈՐԳԵԱՆ Յակոբ՝ Պաշտաւա պոէմա, առաջին երգ. 1402)։—VII. ԱԳԷԼԵԱՆ՝ Դառն Խոտաւորաբ (պատմաւ. 1422)։—VIII. ՅՐՈՒԳԻՅ ՅԱԿՈԲԵԱՆ Յակոբ՝ Պրոմիթէոսին, *** (բան., էջ 1445)։—IX. ԻԶ. ԿԱՅԶԼՐԻՅ-ԱՏՈՒՐ ՇԱՀԷՆ՝ Մահաւան առջին (պատմաւ., 1447)։—X. ԱԹԱՅԵԱՆ Արշակ՝ Յոյս (բան., 1453)։—XI. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ Դէորդ՝ Առաջին սեր (պատմաւ., 1454)։—XII. ԻՍԱՀԱԿԵԱՆ Աւետիք՝ *** (բան., 1476)։—XIII. ՓԱՓԱՋԵԱՆ ՎԵՐԻՔ՝ Դիտակ (գրույց. 1477)։—XIV. ԱՐԱՄ-ՉԱՐԸԳ՝ Ժայռերը, Դարնամանուտին (բան., 1481)։—XV. ՄԱՐԴԱՆԵԱՆ Ֆրիդոն՝ Հաւապահաճութեան կարեւորութիւնը (1482)։—XVI. ՏԵՐ-ՄԻՐԱԲԵԱՆ Յովհ.՝ Դեռանաւորի ընթերցանութեան նիւթերի ճիւղերը (1488)։—XVII. ՎԱՆՑԵԱՆ Գրիգոր՝ Հայերէն դերանունների սկզբը (1507)։—XVIII. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Միքայէլ՝ Սոցիալական էտիկայի (1515)։—XIX. ՎԱՐԳԱՆԵԱՆ Գրիգոր՝ Ազգաբնակչական խնդիրը (1529)։—XX. ՎԱՐԴԱՆԵԱՆ Գր.՝ Շանթի «վերթին»-ը (1538)։—XXI. ՎԱՆՑԵԱՆ Գր.՝ Էքէրտի «Մարդ եմ» (1540)։—XXII. ԱՂԱԼԵԱՆ Նիկ.՝ Լեւոնտաւորից Ալադնեանի «Ին»-ը, Լեւոնտաւորից—Ա-ի «Մակիսիմ Մակիմի» (1547)։—XXIII. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ Ա.՝ Ժամանակակից տեսութիւն—Օտար կապիտալների մտքը Անդրկովկասում (1551)։—XXIV. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ Լեւոն՝ Դրամա երկմական դեղաբուստ (1558)։—XXV. ՍԵԼԵԱՆ Հ.՝ Թատրոնի շուրջը (1573)։—XXVI. «Մուրճ»-ի Տառնամակին (1581)։—XXVII. ԴԱԻԹԵԱՆ Աւետիք՝ Պօղոսին Ղազարոսից (1598)։—XXVIII. ՅԱՐՄԱՐԵԱՆ՝ Պարսկաստանից, I (1604)։—XXIX. ՆԱՍԻԱ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ՝ Պարիզի հոյ ուսանողական միութիւնը (1610)։—XXX. Շ. Բաղաբական տեսութիւն (1613)։—XXXI. ԽԱՐ. Զանազան լուրեր (1615)։—XXXII. Յայտարարութիւններ (1630—36)։—

